

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
*ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
*ПРАВОВЕДЕНИЕ*

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY  
*JURISPRUDENCE*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
*ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ*  
*SOCIAL SCIENCES*

№ 3 (27)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА  
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2018

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»  
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ПРАВОВЕДЕНИЕ»  
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

*Խմբագրական խորհուրդ.*

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),  
Գաբրույան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղա-  
կալ*), Գևորգյան Վ. Ա., Դյուրան Բեռնարդ (*Մոնպելյե*), Խաբրիևա Տ. Յա.  
(*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*), Հայկյանց Ա. Մ., Հարությունյան Գ. Գ.,  
Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ.,  
Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

**Аветисян Л. В.** (*зам. главного редактора*), **Айкянц А. М.**, **Антонян Ю. М.** (*Москва*),  
**Арутюнян Г. Г.**, **Габузян А. А.** (*ответ. редактор*), **Геворкян К. А.**, **Гончар Н. А.**  
(*зам. главного редактора*), **Дюран Бернард** (*Монпелье*), **Казинян Г. С.**, **Кури Хель-  
мут** (*Фрайбург*), **Мегрян С. Г.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Симонян А. Г.**,  
**Хабриева Т. Я.** (*Москва*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

*Editorial Board:*

**Antonyan Yu. M.** (*Moscow*), **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Duran Bernard**  
(*Montpellier*), **Gabuzyan A. H.** (*Managing Editor*), **Gevorgyan K. A.**, **Ghazinyan G. S.**,  
**Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Harutyunyan G. G.**, **Haykyants A. M.**, **Hova-  
kimyan A. E.** (*Executive Secretary*), **Khabrieva T. Ya.** (*Moscow*), **Kury Helmut**  
(*Freiburg*), **Meghryan S.G.**, **Simonyan A. H.**

**Համարը նվիրվում է ականավոր իրավագետ,  
ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիկ Ներսեսյանցի  
ծննդյան 80-ամյակին**

**ՎԼԱԴԻԿ ՆԵՐՍԵՍՅԱՆՑԻ (1938-2005) ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

**ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ**

Ծնվել է 02.10.1938 թ. Ստեփանակերտ քաղաքում: Մանուկ հասակում զրկվում է հորից, վերջինս ժամանակի բռնաճնշումների զոհ է դառնում, 1941 թ. ձերբակալվում է և հավանաբար գնդակահարվում: Ներսեսյանցի կենսագրությունն ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ իրավունքի փիլիսոփայության նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է եղել նրա հոր ձերբակալությամբ, որին հայրենիքի դավաճան են որակել:

Ինչպես պատմում է Ներսեսյանցի եղբայրը, Ներսեսյանցի ծնվելուց դեռ տարիներ առաջ հայրը կարծիք է հայտնել, որ իրենց ընտանիքն առանձնապես ոչնչով երբևէ այքի չի ընկնի: Իսկ երբ ծնվում է Վլադիկ որդին, հայրն ասում է՝ նա կփառավորի մեր ընտանիքը: Հայրը նույնիսկ որդու ազգանվանը հավելում է ց՝ Ներսեսյանց:

Ներսեսյանցն ամուսնացած էր Վալենտինա Լապաևայի հետ, ով իրավունքի տեսության և սոցիոլոգիայի մասնագետ էր:

Ներսեսյանցը 1955 թ. Երևանում ոսկե մեդալով ավարտել է դպրոցը, հետո մեկնել է Մոսկվա, ընդունվել ինչ-որ տեխնիկական բուհ: Սակայն կարճ ժամանակ անց նա վերադարձել է Երևան, աշխատել գործարանում, մեկ տարի անց նորից մեկնել է Մոսկվա: Այստեղ նա ցանկացել է ընդունվել փիլիսոփայության ֆակուլտետ, սակայն, որպես ազգի թշնամու որդու, նրա փաստաթղթերը չեն ընդունել: Նա ստիպված ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ավարտելուց հետո շուրջ երկու տարի զբաղվել է փաստաբանությամբ: 1965-1970 թթ. աշխատել է «Սովետական պետություն և իրավունք» թերթում, այնուհետև դարձել ԽՍՀՄ ԳԱ Իրավունքի և պետության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1992 թ.-ից եղել է ՌԴ ԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտի պետության և իրավունքի տեսության և պատմության կենտրոնի ղեկավարը: 1975 թ. 37 տարեկանում Ներսեսյանցը պաշտպանել է դոկտորական ատենա-

խոսությունը «Հեգելի քաղաքական-իրավական տեսությունը և դրա մեկնաբանությունը» թեմայով: Թեմայի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ Ներսեսյանցը Հեգելի տեսությունը համարում էր արևմտյան փիլիսոփայական մտքի գագաթնակետը: 1985 թ. Ներսեսյանցին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1994 թ. նա դարձել է ՌԴ ԳԱ թղթակից անդամ, իսկ 2000 թ. ակադեմիկոս:

Ներսեսյանցը երկար տարիներ գիտամանկավարժական գործունեություն է իրականացրել, ղեկավարել է ավելի քան 10 թեկնածուական աշխատանք:

Ներսեսյանցի գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է և ընդգրկում: Մասնավորապես, նա առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերում այնպիսի ոլորտների նկատմամբ, ինչպիսիք են քաղաքական և իրավական ուսմունքները, պետության և իրավունքի տեսությունը և փիլիսոփայությունը: Այդ թեմաներով շուրջ 400 գիտական աշխատանքների հեղինակ է, այդ թվում՝ 20 մենագրության և ուսումնական ձեռնարկների: Դրանցից են հետևյալ աշխատությունները՝ «Հեգելյան իրավունքի փիլիսոփայություն. պատմությունը և արդի շրջանը», «Սոկրատ», «Հին Հունաստանի քաղաքական ուսմունքները», «Իրավունք և օրենք», «Պլատոն», «Իրավունքի մեր ճանապարհը. սոցիալիզմից ցիվիլիզմ», «Իրավական պետության գաղափարի պատմությունը», «Իրավունքը՝ ազատության մաթեմատիկա», «Իրավունքի փիլիսոփայություն»: Նա նաև «Բուրժուական սահմանադրականության պատմություն», «20-րդ դարի քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն», «Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր» և այլ աշխատությունների համահեղինակ է:

Ամենար է խոսել Ներսեսյանցի մասին առանց հիշատակելու նրա ազատական իրավահասկացության և ցիվիլիզմի հայեցակարգերը: Նույնիսկ ինքը՝ Ներսեսյանցն է այս երկու հայեցակարգերը համարում իր հիմնական ներդրումը գիտության մեջ:

Ներսեսյանցը ոչ միայն տեսաբան-գիտնական էր, այլև մարդ, որը պայքարել է գիտությամբ զբաղվելու համար: Նրա ինքնատիպ և իր ժամանակի վարչակարգի համար ոչ ընդունելի գաղափարները հաճախ էին պատնեշի հանդիպում: Օրենքի և իրավունքի տարբերակման վերաբերյալ Ներսեսյանցի մոտեցումները հակադրվում էին դրանք նույնական, օրենքից դուրս իրավունքը որպես ինքնուրույն երևույթ չընդունողների մոտեցումներին: Սակայն այստեղ առանձնահատուկ է այն հանգամանքը, որ գիտնականի տեսակետը օրենքի և իրավունքի տարբերակման հարցում զանազանում էր նույնիսկ այն տեսաբանների մոտեցումներից, որոնք նույնպես կողմնակից էին «իրավունք» հասկացության լայն ընկալմանը և օրենքի ու իրավունքի տարբերակմանը:

Այս առումով Ներսեսյանցը նշում է, որ լայն իրավահասկացությունը չի հանգեցրել իրավունքի և օրենքի հստակ տարանջատման, քա-

նի որ բացակայում են իրավական օրենքը կուսակցական կամքով գրված կամայական օրենսդրությունից տարբերակելու չափանիշները:

Դոկտորական աստենախոսության պաշտպանությունից հետո, արդեն որոշակիորեն իրեն պաշտպանված զգալով, Ներսեսյանցը կամաց-կամաց սկսում է ճանապարհ հարթել իրավունքի և օրենքի տարբերակման հիմնախնդրի շուրջ իր տեսական գաղափարների համար: Սակայն բավականին երկար ժամանակ նա այդպես էլ չէր կարողանում հրապարակել այդ թեմայի մասին «Իրավունք և օրենք. վերջիններիս տարբերակումը և հարաբերակցությունը» վերտառությամբ իր առաջին գիտական աշխատանքը, որտեղ օրենքի և իրավունքի հարաբերակցության գաղափարները հանգում են հետևյալին.

✓ «ազատություն» հասկացությունը հակադարձ համեմատական է «կամայականություն», «բռնություն» եզրույթներին: Պետականորեն կազմակերպված հասարակության պայմաններում ազատությունը հնարավոր է և իրական է միայն իրավունքի միջոցով, որն իր հերթին ունի օրինական ուժ,

✓ ազատության, իրավունքի և օրենքի շրջանակում օրինական ուժ ունի միայն այն նորմը, որն ազատության չափ է ներկայացնում: Իրավունքի արժեքն այն է, որ սահմանում է ազատության ոլորտը, սահմանը և կառուցվածքը, հանդես է գալիս որպես ազատության ձև, նորմ և միջոց՝ հիմնված պետական պաշտպանության վրա:

Հետագա տարիներին Ներսեսյանցը զարգացնում է իր այս գաղափարները. 1983 թ. հրատարակվում է «Պետություն և իրավունք» վերտառությամբ ընդհանրացված մենագրությունը: Այդտեղ հեղինակը նշում է, որ օրենքի և իրավունքի տարբերակումը որպես տեսական կառուցվածք երկու հիմնական գործառույթ է կատարում՝ գնահատողական և բացատրական: Օրենքի վերաբերյալ գնահատողական մոտեցման շրջանակում իրավունքը հանդես է գալիս որպես երեք պահանջների համախմբված արտահայտում, առանց որոնց օրենքը կորցնում է իր որակը: Ինչ վերաբերում է բացատրական գործառույթին, ապա դրա էությունն այն է, որ օրենքը և իրավունքը դիտարկվում են որպես փոխկապակցված և միաժամանակ նաև իրական տարբեր երևույթներ:

Միայն իր մենագրության հրապարակումից հետո է Ներսեսյանցին հաջողվում «Խորհրդային պետություն և իրավունք» հանդեսում հրապարակել իր ծրագրային հոդվածը՝ «Իրավունք. սահմանումների բազմազանություն և հասկացության միասնություն»: Այդ արժեքավոր հրապարակման մեջ յուրահատուկ է Ներսեսյանցի այն միտքը, որ այնտեղ, որտեղ իրավունքն ու օրենքը նույնացվում են, իրավագիտությունը վերածվում է օրենսդրագիտության: Եթե մինչ այդ եղած գիտական աշխատանքներում Ներսեսյանցը իրավունքի էությունը բացահայտում էր ազատության միջոցով, ապա այս հոդվածում նա իրավունքը հարստացրեց այնպիսի նոր բովանդակությամբ, ինչպիսիք են հավասարությունը և արդարությունը:

Ահա այսպես ձևավորվեց Ներսեսյանցի ազատական-իրավական հայեցակարգը, որը, ունենալով վաղ փիլիսոփայական-իրավական արմատներ, նրա հեղինակային տեսությունն է: Մի առիթով Ներսեսյանցն անգամ նշում է. «Կանտը կգարմանար, էթե իմանար, թե իր հայեցակարգն ինչպես եմ մեկնաբանում ես»: Խոսքը արդարության գաղափարի մասին է, որը Ներսեսյանցի համար ոչ թե բարոյական, այլ իրավական սկզբունք է:

Ձևական հավասարության գաղափարը Ներսեսյանցին հնարավորություն տվեց ժամանակի ընթացքում առաջ քաշելու և հիմնավորելու ցիվիլիզմի՝ որպես հասարակական նոր կարգի տեսությունը: Այս առումով Ներսեսյանցը նշում էր, որ կարծես թե իրավունքի հետագա զարգացումը տեղի է ունենալու ցիվիլիստական մոդելի հարստացման միջոցով: Այս գաղափարն արտացոլվեց 1989-1996 թթ. հրատարակված բազմաթիվ գիտական հոդվածներում, որոնց դրույթներն ընդհանրացված ներկայացվեցին 2000 թ. հրատարակված «Ցիվիլիզմի մանիֆեստը» աշխատության մեջ:

Ամփոփելով նշենք, որ Ներսեսյանցի կյանքը նույնքան բարդ էր, որքան իր գաղափարները, սակայն միաժամանակ նույնքան լուսավոր, որքան իր հայեցակարգերը: Մի առիթով նա իր կնոջն ասել է, որ մեծ գաղափարի հեղինակին իր ողջ լինելը խանգարում է, որպեսզի ժամանակակիցներն ընդունեն այդ գաղափարի իրական մեծությունը: Հետագա հուշերում տիկին Լապանան այս առիթով հավելել է Ներսեսյանցը գնաց, որպեսզի չխանգարի, որ իր հայեցակարգերն ապրեն և հարասունեն:

Ավարտենք Ներսեսյանցի հետևյալ դրույթով՝ ամենադժվար խիզախությունը մտքի համարձակությունն է:

**Բանալի բառեր** – *Վլադիկ Ներսեսյանց, գիտնական, ազատական-իրավական հայեցակարգ, ցիվիլիզմի մանիֆեստ*

**KAREN AMIRYAN – Жизнь и научная деятельность Владика Нерсесянца (1938-2005).** – Статья посвящена жизни и деятельности замечательного учёного-юриста, автора фундаментальных трудов по философии и теории права, истории политических и правовых учений, уроженца Нагорного Карабаха Владика Нерсесянца. Подробно освещены его детство, учёба, научная борьба, проанализирован ряд работ В. Нерсесянца, их основные положения. Кроме того, в статье содержатся некоторые мысли учёного, а также высказывания о нём коллег и последователей.

**Ключевые слова:** *Владик Нерсесянц, учёный, либертарно-правовая концепция, Манифест о цивилизме*

**KAREN AMIRYAN – Vladik Nersesiantz's Life and Scientific Activity (1938-2005).** – The great scientist VladikNersesiantz's life and scientific activity are discussed in the article presented. The article reveals the interesting facts from his childhood, periods of study and scientific work. The author analyses Nersesiantz's main scientific works and their content. The article also presents some thoughts of Nersesiantz, as well as thoughts of others about him.

**Key words:** *Vladik Nersesiantz, scientist, libertarian legal concept, Civilistic Manifesto*

---

## ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

### ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Միջազգային առումով 21-րդ դարի սոցիալական իրականության բնորոշ համընդհանուր ախտանիշներից են սահմանադրական մշակույթի և սահմանադրական բարոյականության ցածր մակարդակը, սահմանադրական արժեքանության աղճատված ընկալումները, սահմանադրականության դեֆիցիտն ու ձևախեղումները:

Փորձենք այս հիմնախնդրին ոչ թե զգայական ու խրատաբանական անդրադարձ կատարել, այլ համակարգային փոխկապակցության մեջ բացահայտել ոչ միայն իրավիճակի խորքային հիմնական պատճառները, այլև, կայուն զարգացման արդի հրամայականներից ու վերափոխվող հասարակական համակարգերի բնորոշ առանձնահատկություններից ելնելով, առաջադրել սահմանադրական արժեքանության, սահմանադրական բարոյականության ու սահմանադրականության հաստատման հայեցակարգային որոշ մոտեցումներ:

Սահմանադրական արժեքանության հիմնախնդրին մասնագիտական գրականության մեջ շատ անդրադարձներ են եղել:

Գիտական միտքն առաջին հերթին ուշադրության առարկա է դարձրել հասկացության իմացաբանական բնույթի ու բովանդակության բացահայտմանը, սահմանադրական «արժեք» և «սկզբունք» եզրույթների փոխառնչություններին, սահմանադրական բարոյականության, սոցիալական արժեքների սահմանադրականացման առանձնահատկությունների և մի շարք այլ հարցեր: Այդուհանդերձ, մեր կարծիքով, բավարար խորությամբ բացահայտված չեն վերափոխվող հասարակական համակարգերում սահմանադրական արժեքանության դրսևորման ու հատկապես իրացման խորքային առանձնահատկություններն ու դրանցից բխող մարտահրավերներին դիմակայելու մոտեցումները:

Ընդհանուր առմամբ **Սահմանադրության արժեքանությունն** արժեքների այն համակարգն է, որն ընկած է սահմանադրական իրավակարգավորումների հիմքում: Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը տեղի է ունենում կենսագոյի հիմնարար արժեքների իմաստավորման ու դրանց շուրջ հասարակական համաձայնության հենքի վրա<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., 2005, **G. Harutyunyan**, Constitutional Culture: The Lessons of History and the Challenges of Time, Yerevan, 2009:

Սոցիալական արժեքները սահմանադրաիրավական նորմերի միջոցով դառնում են գերակա նշանակության համապարտադիր վարքագծի կանոն՝ ճանաչելով և հասարակական համաձայնությամբ երաշխավորելով սոցիալական ազատությունները: **Սահմանադրական նորմերը հասարակության հիմնարար արժեքների ու իրավական սկզբունքների օրգանական միասնության դրսևորումն են, իսկ դրանց արժեքանական սուբստանցը մարդն է, նրա արժանապատվությունը:**

Մարդկային արժանապատվությունը բացարձակ, «Վերին տեսչության»<sup>2</sup>, ինքնաբավ արժեք է, և այն հասարակական բարոյականության ու հումանիզմի դրսևորման համարժեք պահանջներ է առաջադրում: Բարոյական իրավակարգը չի ենթադրում լոկ անձի բարոյականության սուբյեկտիվ որակների առկայություն: Էականը դրանց դրսևորման համարժեք հնարավորության առկայությունն է, բանական էակի բնականոն գոյի արժեքանական այնպիսի միջավայրի ձևավորումը, երբ անհատը, հասարակությունը և իշխանությունն արժեքային նույն կողմնորոշիչներով են առաջնորդվում:

Իրավական մոտեցումները, իրենց հերթին, բարոյական կարող են լինել, եթե սոցիալական հարաբերությունների օբյեկտիվ բնույթից են բխում և սոցիումի կողմից իմաստավորված կյանքի կանոն են դարձել: Ընդ որում, մարդկային համակեցության իրավական ու բարոյական հիմնարար արժեքներն են սահմանադրական արժեքանության հենքը: Սահմանադրվում են հասարակական հարաբերությունները, որոնց առանցքն օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական արժեքներն են, որոնք իմաստավորման ու կյանքի կոչվելու **շարունակական ճանապարհ** են անցնում:

Մարդը՝ որպես **սահմանադրական արժեքանության առանցք**, ինքնաճանաչվում ու արժևորվում է **ժամանակի հոլովությամբ իր գոյի իմաստավորմամբ**՝ հստակեցնելով արժեքների այն համակարգը, որը տվյալ ժամանակում իր հավաքական գոյի հիմքն է: Այդ համակարգում ամենից առաջ առանձնանում են այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են **հավասարությունը, ազատությունը և արդարությունը:**

Սահմանադրությունը պետք է լինի **հասարակական համաձայնության մարմնացումը հենց այն հիմնարար արժեքների շուրջ**, որոնք որոշակի սոցիալական իրականության պայմաններում անհատի սոցիալական վարքագծի և իշխանությունների հանրային վարքագծի բարոյական հենքն ու բովանդակությունն են (Կանտի բնորոշմամբ՝ նրանց գոյության ներքին բարոյական օրենքն են դառնում):

Անհատի սոցիալական փոխառնչությունների, նրա սոցիալական վարքագծի հանրային նշանակությունն ավելի է մեծանում քաղաքացիական հասարակությունում՝ **նրա տեղի ու դերի արժևորմանը զուգ-**

<sup>2</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 688:



**ընթաց:** Նման հասարակությունում **անձի սոցիալական վարքագիծը պետք է լինի կայուն, կանխատեսելի և ներդաշնակ նրա իդեալներին, ձգտումներին, սպասելիքներին ու սոցիալական առնչությունների իմաստավորված կողմնորոշիչներին:** Իսկ դա հնարավոր է միայն մարդու բանական գոյի արժեքանական ամուր հենքի առկայության, դրան համարժեք սոցիալական միջավայրի ձևավորման պայմաններում:

Այս տեսանկյունից պետք է գնահատվեն ու համարժեք լուծումներ գտնեն այն հիմնախնդիրները, որոնք պատճառ են դառնում սահմանադրականության դեֆիցիտի ու բացասական սոցիալական էներգիայի կուտակման:

Առանցքային նշանակություն է ստանում այն իրողության գիտակցումը, որ Սահմանադրությունը կոչված է երաշխավորելու հանրային կյանքի դինամիկ հավասարակշռությունը և **հանդես գալու որպես կենսագոյի հիմնարար ու ժամանակի մեջ իմաստավորված արժեքներից բխող կանոնների շուրջ շարունակաբար նորոգվող հասարակական համաձայնություն:** Մակայն սահմանադրական տեքստային լուծումները, դրանց բովանդակային զարգացումները դեռևս բավարար չեն, քանզի կարևոր է այդ լուծումների ու իրական կյանքի միջև անջրպետի հաղթահարումը, որն այսօր դարձել է օրակարգային խնդիր բազմաթիվ երկրների համար:

«Սահմանադրականություն» հասկացության ծագումնաբանական ու արժեքանական դրսևորումներին մենք հանգամանալից անդրադարձել ենք «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» մենագրության մեջ (Եր., 2016 թ.)՝ բացահայտելով նաև «սահմանադրական մշակույթ» և «սահմանադրականություն» հասկացությունների օրգանական փոխկապվածությունը: Այստեղ հարկ ենք համարում շեշտել, որ իրավական պետությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը մենք համարում ենք որպես **պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած համոզմունքների, պատկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը սոցիալական հանրության համար հիմք է ծառայում հասարակական համաձայնությամբ սահմանելու և երաշխավորելու իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները:**

Տվյալ ըմբռնման շրջանակներում «սահմանադրականությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայություն, որպես հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում ապրող իրողության գոյություն:

Լայն առումով այն հանդես է գալիս որպես հանրային կյանքում

սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայություն, որպես հասարակության սոցիալական վարքագծի բնութագրման իրավական ընդհանուր սկզբունք:

Հետևությունը միանշանակ է՝ խնդիրը ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառումն է, այլ սոցիալական այնպիսի համակարգի ձևավորումը, որտեղ Սահմանադրության հիմքում դրված են հասարակական գոյի իմաստավորված մնայուն արժեքները, որոնք իրացնում են այդ համակարգի յուրաքանչյուր բջիջ՝ որպես գոյության կենսապայման:

Իսկ այդ տեսակետից ինչպիսի խնդիրների է առնչվում մարդկային հանրությունն իրական կյանքում:

Պարզվում է, որ մարդկության պատմությունը դարձել է տեսակի ինքնառնչչացման հնարավորությունների շարունակական կատարելագործման ու դրանց հետևողական փորձարկման գործընթաց: Նիզակի հայտնաբերումը նախամարդուն հնարավորություն տվեց ոչ միայն կենսամիջոցներ հայթայթելու, այլև ինքնահաստատվելու և գրավելու իշխող դիրք: Աստիճանաբար այդ միտումը դարձավ գիտատեխնիկական զարգացման խթան՝ ինքնահաստատումից ինքնակործանման միջև թողնելով ընդամենը կես քայլ:

Ուղիղ քառասուն տարի առաջ՝ Բելգրադում դոկտորանտուրա անցնելու տարիներին, ինձ բախտ վիճակվեց դիտելու Անտոնիո Կլիմատիի և Մարիո Մորրայի 1975 թվականին նկարահանած «Մավանայի վերջին ճիչը» ֆիլմը: Գեղարվեստական այդ ֆիլմի սյուժեն գերազանցապես կառուցված էր վավերագրական փաստերի վրա: Մի կողմից «վայրի» ու բնական դրսևորումներով կենդանական աշխարհն էր, մյուս կողմից՝ մարդը՝ իր բազում ու անբնական վայրագություններով: Ֆիլմի ավարտից հետո բոլորը դուրս էին գալիս գլխիկոր **ամաչում էին մարդ լինելու համար:**

Մեր ժամանակներում մարդկային վայրագություններն ավելի սահմակեցուցիչ բնույթ են ստացել: Ցավով է ասված՝ «Մարդիկ շատ են, մարդկայինն է քիչ»: Այդ քչությունն արդեն վտանգավոր ու տագնապալի չափերի է հասնում:

Ցավալի փաստն այն է, որ չարը մարդու և մարդկային հասարակության մեջ շատ խոր արմատներ է ձգում, իսկ դրան դիմակայելու մարդկության ձեռնարկած քայլերը կրում են լոկ իրավիճակային բնույթ:

Տեղին է կրկին վերհիշել Աստվածաշնչի Ծննդոց գրքի 6-րդ բաժնում զետեղված հայտնի խոսքերը. «Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարություններ է նյութում, զոջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա, և տրտմեց իր հոգու խորքում: Տեր Աստված ասաց. երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամեն մի էակ..., որովհետև զոջացել եմ, որ ստեղծել եմ նրանց»:

Հուսանք, որ վիճակը դեռևս չի հասել հերթական Մեծ ջրհեղեղին, և մարդկությունը ներկա կացությունից խելամիտ ելք պետք է գտնի:

**Չեմ կարծում, որ պետք է հույսը դնել հրաշքների վրա:**

1166 թվականին հայ իրականության մեջ ստեղծված ծանրագույն պայմաններում Ներսես Շնորհալին օժվում է Հայոց կաթողիկոս: Նա առաջին հերթին պարտավորվածություն էր զգում իր հոտին դուրս բերելու ստեղծված աղետալի վիճակից: Եվ դա արեց՝ իր խոսքն ուղղելով մարդուն՝ իշխանավորին, հոգևորականին, զինվորականին, հասարակ գյուղացուն, կնոջն ու տղամարդուն՝ ասելով, թե, **մարդիկ, դուք ինչպիսին պետք է լինեք, որպեսզի մեր կյանքն այսպիսին չլինի:**

Շնորհալու այդ կոնդակը, որը հետագայում կոչվեց «Թուղթ ընդհանրական» (բոլորին ուղղված գրավոր խոսք), մեծ խորհուրդ է պարունակում: **Մարդու հավաքական վարքագիծն է ստեղծում այն միջավայրը, որում նա ապրում է:** Այդ վարքագիծը պետք է խարսխված լինի արժեքանական կայուն հենքի վրա, ինչը մարդու համար պետք է դառնա ոչ միայն ինքնադրսևորման հիմնական խթան, **այլև վարքի ներքին արգելակիչ:** Արժեքանական այդ սուբստանցը մարդու համար պետք է լինի բանական ինքնադրսևորման երաշխիք, որի բացակայությունն է, որ մարդուն կարող է մղել ոչ մարդկային քայլերի: Նաև այս հանգամանքը նկատի ունենալով էր, որ մեծն Նարեկացին, մարդկային մեղքերի համար Աստուծոց թողություն խնդրելով, նրանց գործած մեղքը համարում էր ոչ թե հանցանք, այլ դժբախտություն: Իրոք դժբախտություն է, երբ բանական արարածը ոչ բանական ինքնադրսևորում է ունենում:

Ժամանակակից իրողություններն այնպիսին են, որ էապես խաթարված են հենց մարդկանց բանական վարքագծի արժեքանական հիմքերը: Եթե ավելի քան 200 տարի առաջ մարդկությունն իր հասարակական գոյի կայուն զարգացումը երաշխավորելու համար ապավինեց մերօրյա սահմանադրությունների ընդունմանը, ապա այսօր շատ երկրներում սահմանադրությունների հիմքում դրված արժեքանության և իրական կյանքի միջև առաջացել է մեծ անջրպետ:

Վերլուծելով նման իրավիճակի, սահմանադրականության դեֆիցիտի առաջացման խորքային պատճառները՝ հանգում ենք այն հետևություն, որ դրա հաղթահարման հիմնախնդիրը հնարավոր է լուծել բացառապես եռամիասնական մոտեցմամբ:

Վերջինիս էությունը հանգում է հետևյալին.

ա) յուրաքանչյուր երկրում անձի սոցիալական ու իրավական վարքագծի հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայությունը,

բ) պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայությունը,

գ) հանրային իշխանությունների հանրային վարքագծի հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայությունը:

Սակայն իրողությունն այն է, որ նման վիճակի հասնելու համար

Ժամանակակից հասարակությունները դեռևս չեն ստեղծել իրավական ու կառուցակարգային անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ: Իսկ հանրային կյանքի իմունային անբավարարությունը դարձել է սոցիալական աղետների հիմնական պատճառը: Բացասական սոցիալական էներգիայի կուտակումները հանգեցնում են այնպիսի կրիտիկական զանգվածի գոյացման, որի դեպքում պայթյունն անխուսափելի է: Իսկ դա նշանակում է, որ իրավունքի գերակայությունը երաշխավորելու համար հանրային կյանքում սահմանադրական հավասարակշռության խախտումները ժամանակին չեն բացահայտվում, գնահատվում ու հաղթահարվում: Սա առանցքային, ելակետային նշանակություն ունի համակարգային կայունության տեսանկյունից:

**Տասնամյակների մեր հետազոտությունները հանգեցրել են այն հետևությանը, որ նշված իրավիճակի հաղթահարումն անհնարին է առանց եռամիասնության հենքի վրա հանրային կյանքի սահմանադրականացման ու համարժեք սահմանադրական մշտադիտարկման համակարգի ներդրման, ինչը, մեր կարծիքով, կարող է դառնալ սահմանադրականության պակասության հաղթահարման, իրավունքի գերակայության ամբողջական երաշխիք ու կայուն զարգացման կարևոր գրավական<sup>3</sup>:** Վերջինիս համար պետք է երաշխավորված լինի նաև սահմանադրական արժեքանության և տվյալ սոցիումը ներկայացնող անհատի արժեքային համակարգի դիալեկտիկական փոփոխապահմանը, որի միջոցով էլ հենց դրսևորվում է անձի սահմանադրական ինքնությունը, բացահայտվում անհատի սահմանադրաիրավական կարգավիճակը:

**Գտնում ենք, որ անձի սահմանադրական ինքնությունը բնորոշվում է այն արժեքների ու քաղաքացիական որակների ամբողջությամբ, որոնցով պայմանավորվում է նրա առանցքային, ելակետային տեղն ու դերը սահմանադրաիրավական հարաբերություններում՝ որպես «Վերին տեսչության» արժեքներով օժտված բանական ստեղծարար գոյի, որպես սահմանադրական արժեքանության ու սահմանադրական բարոյականության անմիջական կրողի:** Իսկ վերջինիս էությունը այն է, թե որքանով է սահմանադրական ինքնությամբ օժտված անհատը դառնում սահմանադրական արժեքանության՝ պարտքի ու պատասխանատվության զգացողությամբ իմաստավորված կրողը:

Ընդ որում՝ «հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգի» և անհատի ինքնաճանաչման արդյունք հանդիսացող արժեքային համակարգի ներդաշնակությունն է երաշխավորում պետության լիարժեք քաղաքացու ձևավորումը: Քաղաքացի, որ պետք է ունենա ամուր հավատ, արժեքային հստակ համակարգ՝ ներդաշնակ հասարակական գոյի իմաստավորման ու սահմանադրա-

<sup>3</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրական մշտադիտարկում, Եր., 2016:

կանացման տվյալ աստիճանին ու դրանց վրա կառուցված՝ անհրաժեշտ քաղաքացիական որակներ:

Սահմանադրական ինքնություն ունեցող ու սահմանադրական բարոյականություն կրող անհատը չի կարող կորցնել իր տեսակի, մարդկային ինքնության որակներն ու պատմական հիշողությունը, նրա համար երկիրը հայրենիք է, այլ ոչ թե պարզապես բնակատեղի կամ աշխատատեղ: Իսկ հողը հայրենիք է դառնում, երբ այն պահում ու պաշտպանում է նախնիների շիրիմները, շաղախված է հայրենիքը պաշտպանելու համար թափված արյամբ ու երկիրը շենացնողների թափած քրտինքով:

Երկրի առաջընթացի կարևորագույն գրավականը հենց սահմանադրական ինքնություն ունեցող քաղաքացին է, որի ինքնադրսևորման երաշխիքը հանրային հարաբերությունների՝ իրավունքի գերակայության սկզբունքի վրա խարսխված իրական սահմանադրականացումն է:

*Բանալի բառեր – սահմանադրականություն, Սահմանադրության արժեքանություն, անձի սահմանադրական ինքնություն, Սահմանադրություն*

**ГАГИК АРУТЮНЯН – *Современные вызовы конституционализма.*** – В статье рассмотрены современные вызовы демократии. Обосновывается, что конституционная идентичность личности является сплавом ценностей и гражданских качеств, которые определяют её место как непосредственного носителя конституционных ценностей и нравственности и роль в конституционно-правовых отношениях.

**Ключевые слова:** конституционализм, конституционная аксиология, конституционная идентичность личности, Конституция

**GAGIK HARUTYUNYAN – *Contemporary Challenges of Constitutionalism.*** – Article discusses contemporary challenges of constitutionalism. Author justifies that constitutional identity of the individual is the complex of values and civil qualities, which determines the essential role and place of the individual as the direct holder of constitutional values and constitutional morality in constitutional-legal relations.

**Key words:** constitutionalism, constitutional axiology, constitutional identity of the individual, Constitution

**ԱԶԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

**ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ**

XVIII-XIX դարերը կարելի է համարել իրավունքի փիլիսոփայության հորդառատ անձրև, քանզի երկու հարյուրամյակի ընթացքում ապարեզ եկան այնպիսի հանճարեղ մտածողներ, ինչպիսիք են Հ. Գրացիոսը, Ֆ. Բեկոնը, Թ. Հոբսը, Ռ. Դեկարտը, Ջ. Լոկը, Շ. Լ. Մոնտեսքյոն, Ժ.-Շ. Ռուսսոն, Ի. Կանտը, Գ. Հեգելը, Կ. Մարքսը, Օ. Կոնթը և այլք: Այս խոշոր մտածողներից ամեն մեկն ստեղծեց փիլիսոփայական իր հայեցակարգը: Քանի որ նոր դարաշրջանում կրոնական աշխարհայացքին փոխարինել էր իրավաբանականը, ապա նրանցից ամեն մեկն իր փիլիսոփայական հայեցակարգը տեղայնացրեց իրավական ոլորտում, ընդհանուր փիլիսոփայական հայեցակարգից ածանցեց իրավունքի իր յուրահատուկ փիլիսոփայությունը: Հետևաբար, այդ ժամանակաշրջանն իսկապես կարելի է համարել իրավական փիլիսոփայության հայեցակարգերի ոսկե դարաշրջան:

Իրավական փիլիսոփայության այդ հորձանուտում և դրանից հետո ձևավորված իրավական ուսմունքների հերթագայության պատմական ընթացքում Վ. Ներսեսյանցի թողած ժառանգությունը գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում առաջ քաշել որոշակի չափանիշներ և փորձել դրանցով արժևորել նրա ազատական-իրավաբանական ուսմունքը: Իրավունքի յուրաքանչյուր փիլիսոփայություն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ելնել որոշակի մոտեցումներից, այն է՝ ա) ուսմունքի առաջացման պատմական պայմանները, բ) հարաբերակցությունը նախորդ և հաջորդ ուսմունքների հետ, գ) փիլիսոփայական հայեցակարգի համընդհանրությունը (ունիվերսալությունը), այսինքն՝ ունակությունը ներառելու և կլանելու համաշխարհային պատմական զարգացման բոլոր և հատկապես նոր երևույթներն ու դրանց դրսևորումները, իմաստավորելու դրանք իր փիլիսոփայական հայեցակարգում, դ) ստեղծողի անհատականությունը, ե) կոնկրետ երկրի, այդ թվում նաև Հայաստանի, գործնական պետաիրավական քաղաքականության համար դրա նշանակությունը:

Եթե այս չափանիշներով մոտենանք XVIII-XX դարերի իրավափիլիսոփայական հայացքներին, ապա վերը թվարկված խոշոր մտածողների շարքից քննարկման արժանի հայեցակարգերից են Գեորգ Վիլհելմ Հեգելի, Կարլ Մարքսի և Վլադիկ Ներսեսյանցի իրավափիլիսո-

փայական հայացքները, որովհետև միայն դրանք են օժտված համընդհանրությամբ, այսինքն՝ ունակ են իրենց փիլիսոփայական սխեմաներում տեղավորելու համաշխարհային պատմական զարգացումը: Մնացած հայեցակարգերն «ունիվերսիումի» և իրավական զարգացման պատմության տեսանկյունից մասնակի, նեղ մոտեցումներ են, ինչպես օրինակ՝ Հ. Քելզենի նորմատիվիստական իրավագիտությունը<sup>1</sup>:

Իրավունքի փիլիսոփայության պատմությունը նոր դարաշրջանում կարելի է ներկայացնել նաև որպես գաղափարական պայքարի որոշակի փուլեր՝ պայքար կրոնական ազատության համար, պայքար քաղաքական ազատության համար, պայքար տնտեսական ազատության համար, իսկ արդի շրջանում՝ պայքար մարդկության գոյատևման համար:

Հեգելի հայեցակարգը ստեղծվեց քաղաքական ազատության համար պայքարի փուլում (XVIII դարի վերջ - XIX դարի սկիզբ): Գեորգ Հեգելը ոգու և բնության, մտածողության և կեցության նույնականության, տրանսցենդենտային ուժ, համաշխարհային քաղաքակրթության շարժիչ ուժ մեկնակետերի վրա հիմնավորեց, որ ազատությունը համաշխարհային պատմության նպատակն է<sup>2</sup>: Ազատության և իրավունքի հասկացությունների որոշակիացման երեք ձևեր են համարվում. ա) վերացական իրավունքը՝ մարդը վերացական ազատ էս է, որն ունի իրավունակություն («Եղիք անձ և հարգիր այլոց որպես անձ»), բ) բարոյականը (мораль)՝ զարգացած իրավագիտակցությունը, որպես մտածելակերպ, որպես մասնավոր անձի խիղճ և կամք, որով նա ինքնորոշվում է, գ) բարոյականությունը (нравственность)՝ երբ ազատության երկու կողմերն ու հասկացությունները օբյեկտիվացվում են առկա աշխարհում ընտանիքի, քաղաքացիական հասարակության, պետության տեսքով, երբ անհատն ունի ստեղծագործական ընդունակություններ կյանքի կառուցման և իրավաստեղծագործության համար: Հեգելը պետության և իրավունքի տիպաբանության հիմնահարցը մեկնաբանեց ազատության զարգացման և պետության տարբեր ձևերում դրա օբյեկտիվացման համաշխարհային պատմական գործընթացի դիրքերից: Համաշխարհային ոգու իրականացման ձևերն են չորս համաշխարհային պատմական հասարակարգերը. ա) արևելյանը, որում ազատ է մեկը, բ) հունականը, որում ազատ են քչերը, գ) հռոմեականը, որում ազատ է արիստոկրատիան, դ) գերմանականը կամ արևմտաեվրոպականը, որում ազատ են բոլորը<sup>3</sup>:

<sup>1</sup> Հանս Քելզենի իրավական ուսմունքի հիմնադրույթների մասին տե՛ս «История политических и правовых учений» / Под общей ред. акад. РАН, д. ю. н., проф. В.С. Нерсесянца. 4-ое изд., М., 2003, էջ 800-804:

<sup>2</sup> Գեորգ Հեգելի պետաիրավական ուսմունքի հիմնադրույթների մասին տե՛ս նույն տեղը, էջ 522-537:

<sup>3</sup> Իրավունքի, օրենքի, ազատության դրսևորման ձևերի մասին հեգելյան հիմնադրույթների, համաշխարհային պատմական չորս աշխարհների մասին մանրամասն տե՛ս նույն տեղը, էջ 522-528, 536-537:

Հեգելի հայեցակարգն ազատական էր, բայց միաժամանակ պետության և իրավունքի տիպերի պատմության ավարտով մոտեցում էր<sup>4</sup>: Այդ տիպերի պատմությունն ավարտվում էր գերմանական հասարակարգային տիպով, ուրեմն մարդկությունը հանգրվանելու էր գերմանական քաղաքակրթության տիրույթում:

Արդեն XIX դարի կեսերին եվրոպական-արևմտյան քաղաքակրթությունը լուծել էր քաղաքական ազատության խնդիրը, սակայն, ազատվելով ֆիզիկական և քաղաքական անազատության շղթաներից, հայտնվել էր սովի ու չքավորության ճիրաններում: Այս պատմական պայմաններում ձևավորվեց մարքսիզմը, որը, օգտագործելով Հեգելի դիալեկտիկան, հռչակեց «ազատություն շահագործումից» կարգախոսը: Քննադատելով բուրժուական ազատության ձևականությունը՝ այն հիմնավորեց «ազատություն առանց իրավունքի» հայեցակարգը, արտափրավական տնտեսական ազատությունը:

Այն, որ տնտեսական շահերը և տնտեսական հարաբերությունները ազդում են պետաիրավական հիմնարկների, քաղաքական պայքարի, ինչպես նաև մարդկանց գիտակցության վրա, մտածողները նկատել են վաղուց: Դեռևս Պլատոնը նշում էր, որ ամեն մի պետություն բաժանվում է երկու կուսակցությունների՝ հարուստների և աղքատների<sup>5</sup>: Այդուհանդերձ, մտածողների մեծ մասը, օրինակ՝ Հեգելը, գտնում էր, որ բանականությունը, մարդկանց կարծիքը և կրքերը համարվում են պատմական զարգացման շարժիչները<sup>6</sup>: Առաջինը Թոմաս Մորը մասնավոր սեփականությունը համարեց բոլոր հասարակական անհարթությունների և չարիքների հիմք և պատճառ<sup>7</sup>:

Ժ.-Ժ. Ռուսսոն հիմնավորեց, որ մասնավոր սեփականությունը

---

<sup>4</sup> Պետության և իրավունքի տիպաբանության պատմական հայեցակարգերը, տարածվելով պետության և իրավունքի ծագման, գոյության ողջ պատմության ընթացքի վրա, լինում են, այսպես կոչված, պատմությունը ավարտող և չավարտող հայեցակարգեր: Խնդիրն այն է, որ պետության և իրավունքի պատմական տիպերի կառուցումը, ընդգրկելով երևույթի պատմությունը մինչև տվյալ հայեցակարգի հեղինակի ապրած ժամանակները, արդյոք նախատեսում (կանխատեսում) է դրանց ապագա տեսակը, թե ոչ: Հեգելի մոտեցումը պատմության ավարտով հայեցակարգ է: Նա պետության և իրավունքի տիպերն ավարտում է իր ժամանակի գերմանական տիպով՝ ապագայում պետության և իրավունքի նոր տիպ չնախատեսելով, ուրեմն դրանց տիպերի պատմությունն ավարտված է: Այն հայեցակարգերը, որ պետության և իրավունքի տիպաբանությունը հասցնելով իրենց ժամանակները, փորձում են իրենց իսկ ընտրած մեթոդաբանությամբ կանխատեսել ապագայում պետության և իրավունքի նոր տիպի առաջացումը, կոչվում են «պատմությունը չավարտող», այսինքն՝ պետության տիպերի հերթափոխման պատմությունը չի ավարտվել, ապագայում կձևավորվեն նոր տիպի պետություն և իրավունք: Օրինակ՝ ըստ Մարքսի իր դարաշրջանին հաջորդելու էր նոր տիպը: Խորհրդային սոցիալիզմի փլուզմամբ հեգելականներն ազդարարացին իրենց հաղթանակը «պատմության ավարտը» (այս մասին ավելին տե՛ս **Ա. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն–1: Դասախոսություն, Եր., 2016, էջ 243-244):

<sup>5</sup> Տե՛ս «История политических и правовых учений» / Под общей ред. акад. РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. 4-е изд., М.: "Норма", 2003, էջ 59:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 522-523:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 160:



հանգեցրեց սոցիալական անհավասարության, որը հակասում էր բնական հավասարությանը: Սոցիալական անհավասարությունը լրացվեց քաղաքական անհավասարությամբ, երբ հարուստները խախտեցին հասարակական դաշինքը և պետությունը դարձրին իրենց ծառայող կազմակերպություն<sup>8</sup>:

Մարքսը և Էնգելսը, հետևելով մասնավոր սեփականությունը քննադատողներին, փորձեցին որոնել գույքային անհավասարության և հասարակական հակասությունների պատճառները: Նրանք ենթադրում էին, որ դրանց հիմքում ընկած են արտադրական համակարգը, հարաբերությունները, որոնց մեջ մտնում են մարդիկ արտադրության ընթացքում: Այդ հարաբերությունների տիպը պայմանավորված է օբյեկտիվորեն, նախորոշված է արտադրական ուժերի զարգացման մակարդակով, այսինքն՝ բնական հարստության, աշխատանքի գործիքների: Արտադրական հարաբերությունները կամ դրանց նշանակությունը որոշում են հասարակության ողջ կարգը, նրա զարգացումը: Արտադրական տնտեսական հարաբերությունների նկատմամբ կյանքի այլ կողմերն ածանցյալ են, հետևանք են: Ուստի տնտեսական հարաբերությունները հիմք են, բազիս, իսկ մնացած հարաբերությունները, այդ թվում պետությունը և իրավունքը՝ վերնաշենք<sup>9</sup>:

Հեգելի բացարձակ ոգու դրսևորման աստիճանների տեսությունը փոխարինվեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների հայեցակարգով՝ իր համապատասխան տարրերով՝ բազիս և վերնաշենք, իսկ համաշխարհային պատմական գործընթացը ներկայացվեց որպես տնտեսական ֆորմացիաների հերթափոխ՝ պետության և իրավունքի իրեն համապատասխանող տիպերով: Եթե Հեգելն ավարտեց պատմությունը տիպաբանական իմաստով, ապա Կ. Մարքսը ենթադրեց, որ պատմությունը շարունակվելու է, և ապագայի տիպը կոմունիստական ֆորմացիան է<sup>10</sup>: Մարքսիզմը հիմնավորեց, որ բուրժուական կարգերը հավերժ չեն: Դրա խորքում ևս հասունանում է հակասությունն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 377-378:

<sup>9</sup> Տե՛ս **Կ. Մարքս**. К критике политической экономии. Предисловие, էջ 3 ([https://www.marxists.org/russkij/marx/1859/criticism\\_pol\\_econ/index.htm](https://www.marxists.org/russkij/marx/1859/criticism_pol_econ/index.htm)):

<sup>10</sup> Մարքսիստական մտեցումը հիմնված է հասարակական-տնտեսական ֆորմացիաների հերթափոխման ուսմունքի վրա: Ֆորմացիան հասարակության պատմական տիպն է, որն ունի որոշակի արտադրական եղանակ, սեփականության գերիշխող ձև, սոցիալական կառուցվածք: Ամեն մի հասարակության մեջ վճռական գործոնը, դրա հիմքը (բազիսը) տնտեսությունն է: Հասարակական մնացած երևույթները և հարաբերությունները (պետություն, իրավունք, կրոն, մշակույթ և այլն) աճում են այդ հիմքի վրա, դրա վերնաշենքն են: Մարդկությունը նախնադարյան համայնականից անցում է կատարել մասնավոր սեփականության և դրանով պայմանավորված՝ դասակարգերի բաժանված հասարակության: Այս բաժանմանը համապատասխան՝ պետության և իրավունքի պատմական տիպերն են՝ արևելյան միապետությունը, ստրկատիրականը, ավատատիրականը (ֆեոդալականը), բուրժուականը, սոցիալիստականը (յուրաքանչյուր տիպի պետության և իրավունքի ընդհանուր բնութագիրը տե՛ս **Ա. Վադարշյան**, նշվ. աշխ., էջ 233-237):

Արտադրական հեղափոխությունն աննախադեպ մեծացնում է արտադրության հնարավորությունները և ծավալները: Արտադրությունը դառնում է հասարակական, որում ընդգրկված են միջոցների և մարդկանց հսկայական զանգվածներ և պահանջում են կառավարման նոր ձևեր: Սակայն մասնավոր սեփականությունն արգելակում է դա և վերածվում է շղթայի արտադրության համար, ինչը հանգեցնում է տնտեսական ճգնաժամերի, որից էլքը սոցիալիստական հեղափոխությունն է և մասնավոր սեփականության վերացումը<sup>11</sup>:

Այսպիսով, մարքսիզմի ձևավորմամբ XIX դարի 2-րդ կեսից համաշխարհային մասշտաբով համընդհանուր, երկու մրցակցող հիմնական փիլիսոփայական հայեցակարգերն էին Գ. Հեգելի և Կ. Մարքսի մոտեցումները: Հետագայում քաղաքական-տնտեսական գործընթացները հանգեցրին այս երկուսի հակադրության, իսկ իրական սոցիալիզմի ձևավորմամբ առաջ քաշվեց Կ. Մարքսի փիլիսոփայական մոտեցումների, պատմության շարունակականության ճշմարտացիության դրույթը:

XX դարն այս երկու սոցիալական իմաստասիրությունների պայքար է, որը գաղափարականից վերածվեց նաև տնտեսականի ու քաղաքականի: Սակայն XX դարավերջին սոցիալիզմի ճամբարի ճգնաժամը և Խորհրդային Միության փլուզումը հիմք տվեցին հասարակագետներին պնդելու Հեգելի ճշմարտացի լինելը: Այս կապակցությամբ ամերիկացի Ֆ. Ֆուկույաման գրեց «Պատմության ավարտը» աշխատությունը՝ հիմնավորելով, որ Հեգելը ճիշտ էր<sup>12</sup>:

Ահա այս համապատկերում Վ. Ներսեսյանցը հանդես եկավ որպես մի տեսաբան, որը համաձայն չէր ո՛չ Գ. Հեգելի և ո՛չ էլ Կ. Մարքսի հետ: Նա խիստ քննադատում էր մարքսիզմը և իրական սոցիալիզմը, բայց նաև չէր ընդունում բնական իրավունքի տեսությունը, Հեգելի օբյեկտիվ իրավական դիալեկտիկան:

Մշակելով իրավունքի էության, կեցության հասկացության սեփական հայեցակարգը, որ հետագայում կոչվեց ազատական-իրավաբանական՝ Վ. Ներսեսյանցը առաջ քաշեց համաշխարհային պատմական զարգացման, պետության ու իրավունքի տիպաբանության իր հայեցակարգը: Այդ ուսմունքը կոչվում է ազատական, որովհետև ի վերջո պատմության նպատակը և իրավունքի էությունն ազատությունն ու իրավահավասարությունն են, իրավաբանական՝ ի հակադրություն նորմատիվիզմի ու լեգիզմի, որովհետև այն կառուցված է իրավունքի և օրենքի տարբերակման չափանիշի վրա<sup>13</sup>:

Ըստ Վ. Ներսեսյանցի՝ համաշխարհային մասշտաբով պետության

<sup>11</sup> Տե՛ս **Маркс К., Энгельс Ф.** Соч., 2-е изд. Т. 4, էջ 445-446:

<sup>12</sup> Այդ մասին տե՛ս **Фукуяма Ф.** Конец истории // "Вопросы философии", 1990, թիվ 3, էջ 133-155:

<sup>13</sup> Պետության և իրավունքի ազատական-իրավաբանական հայեցակարգերի տեսանկյունից հասկացությունների մասին տե՛ս **Четвернин В. А.** Понятия права и государства. М., 1997:

և իրավունքի պատմական տիպերն են էթնիկ, դասային, անհատական-քաղաքացիական, հումանիստական տիպերը<sup>14</sup>: Այս հայեցակարգի առանձնահատկություններն են՝

1) պետությունը ոչ թե պատմական համընդհանուր սովորական օրինաչափություն է, այլ եզակի ֆենոմեն,

2) համաշխարհային մասշտաբով պետք է տարբերել հանրային կառավարումը պետությունից: Հանրային կառավարումն ունի երկու ձև՝ բռնակալություն և պետություն: Պատմության մեջ գերակշռում է բռնակալությունը, այլ ոչ թե պետությունը,

3) պատմությունը չի ավարտվել, այն շարունակվում է, որովհետև ապագայի տիպը հումանիստական պետությունն ու իրավունքն է, որ փոխարինելու է ներկայիս ազատական, անհատական-քաղաքացիական տիպին:

Իր այս հայեցակարգով Վ. Ներսեսյանը հերքեց Հեգելի օբյեկտիվ իդեալիստական դիալեկտիկան և պատմության ավարտը, բայց նաև Կ. Մարքսի գոեհիկ մատերիալիզմը, ապացուցեց, որ իրական սոցիալիզմի պայմաններում մասնավոր շահագործումը փոխարինվում է պետական շահագործմամբ<sup>15</sup>:

Հաջորդ խոշոր ներդրումը պետաիրավական ու քաղաքագիտական մտքի պատմության մեջ Վ. Ներսեսյանցի ցիվիլիստական սեփականության ու հասարակության հայեցակարգն է<sup>16</sup>: Ցիվիլիզմը կարելի է համարել կոնվերգենցիայի տեսության տարատեսակներից մեկը, որը փորձում է երկրային պատմության առաջ քաշած մարտահրավերներին տալ տեսական պատասխաններ: Այդ ուսմունքը ելնում է այն գաղափարից, որ այնտեղ, որտեղ չկա սեփականություն, ոչ միայն չկան, այլև սկզբունքորեն անհնար են ազատությունը, իրավունքը, հավասարությունը, անկախ անձը և այլն: Խոսքը արտադրության միջոցների մասնավոր սեփականության մասին չէ և ոչ էլ սոցիալիստական դիմազրկված, չանհատականացված, բոլորին պատկանող սեփականության, այլ ցիվիլայինի:

Վ. Ներսեսյանցի կարծիքով՝ կապիտալիզմի՝ որպես պատմության ավարտի մասին պատկերացումների հետևողական հաղթահարումը հանգեցնում է ազատության, իրավունքի, սեփականության հետբուրժուական, միաժամանակ նաև հետսոցիալիստական հասարակության, որում սեփականությունը ցիվիլային է: Մեր հանրապետության պարագայում ցիվիլային-իրավական առումով բոլոր քաղաքացիները հավասար չափով և հավասար իրավունքով սոցիալիստական սեփականությամբ

<sup>14</sup> Այդ տիպերի բնութագրերը տե՛ս **Нерсесянц В. С.** *Философия права*. М., 1997, **նույնի՝** Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, **Վ. Վաղարշյան**, նշվ. աշխ., էջ 240-243:

<sup>15</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Нерсесянц В. С.** *Философия права*, էջ 105 :

<sup>16</sup> Մանրամասն տե՛ս **Վ. Ս. Ներսեսյանց**, Ցիվիլիզմի մանիֆեստը: Պատասոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային-պատմական առաջընթացում, Եր., 2001:

յան ժառանգներ էին (են), և յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ պետք է ճանաչվեր (Ճանաչվի) նրա իրավունքն ամբողջ ապաստոցիալիստականացված սեփականության՝ բոլոր քաղաքացիների համար հավասար բաժնի նկատմամբ: Այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքացի պետք է դառնար բոլորի համար հավասար սեփականության նվազագույն բաժնի (անձնական որոշակի, անօտարելի, քաղաքացուն ծնունդից մինչև մահ պատկանող) նկատմամբ սուբյեկտիվ իրավունքի իրական տերը: Դրանից բացի՝ յուրաքանչյուր ոք իրավունք կունենար ձեռք բերելու ցանկացած այլ սեփականություն՝ առանց սահմանափակման, այսինքն՝ թույլատրվում են նաև սեփականության այլ տեսակները:

Ցիվիլիստական սեփականությունը և հասարակությունը, ըստ Ներսեսյանցի, կապիտալիստական պետությունների համար հետևապիտալիզմն է, իսկ սոցիալիստական պետությունների համար՝ հետսոցիալիզմը: Ցիվիլիստական հասարակության գաղափարն այդ երկուսի թերությունների հաղթահարման քաղաքական-իրավական հայեցակարգ, ուսմունք է, սոցիալիզմի կապիտալացման և կապտալիզմի սոցիալիստականացման հատուկ քաղաքական-իրավական-տնտեսական ծրագիր: Հենց այս ծրագիրն է, որ շատ հարմար էր անկախ Հայաստանի համար: Ըստ էության մենք փորձել ենք Կ. Մարքսի սոցիալիզմը և արդեն երեսուն տարի փորձում ենք Հեգելի ազատականությունը կապտալիզմը: Դրա սոցիալ-տնտեսական հետևանքները շատ տխուր են: Ներսեսյանցի ցիվիլիզմի տեսությունը հենց այն քաղաքական-իրավական ծրագիրն էր, որը պետք է կիրառվեր Հայաստանում և հայ մարդուն կկապեր իր հայրենիքի հետ, կդարձներ արմատավորված, ակտիվ, մասնակցող քաղաքացի, և ոչ թե հայացքը դրսին ուղղված, պետությունից օտարված, դժգոհ բնակիչ:

Քանի որ գիտաժողովը նվիրված է Վ. Ներսեսյանցին, բայց դրա թեմատիկ բովանդակությունը միաժամանակ ներառում է սահմանադրագիտության հիմնահարցեր, ապա փորձեմ ավարտել սահմանադրագիտության մեջ նրա արած մեծագույն ներդրումներից մեկի՝ իրավական արժեքաբանության գործնական հիմնահարցերի վերլուծությամբ:

Իրավական արժեքաբանությունը (աքսիոլոգիան) իրավունքը ավանդաբար հասկանում է հասարակական արժեք իմաստով, այսինքն՝ այն հետազոտում է իրավական արժեքները, դրանց դերն ու նշանակությունը մեր կյանքում ու աշխարհի համար: Օրինակ՝ իշխանությունների բաժանման սկզբունքը կամ անմեղության կանխավարկածի սկզբունքը որպես արժեքներ: Սակայն իրավական արժեքաբանությունը, այս հարթությունից բացի, պետք է հասկանալ և դիտարկել նաև մեկ այլ մակարդակում, մասնավորապես՝ գործնական-կիրառական: Այս դեպքում իրավական արժեքաբանության խնդիրն է գնահատել և արժևորել օրենքը և տալ միանշանակ եզրակացություն՝ արդյո՞ք օրենքն իրավական է, թե՞ ոչ, այսինքն՝ օրենքը՝ որպես իրավունքի կե-

ցության ձև, համապատասխանում է իրավունքի էությանը, թե՞ ոչ:

Ըստ իրավաբանական ուժի նորմատիվ ակտերի ստորակարգային համակարգում յուրաքանչյուր մակարդակի ակտ գնահատվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտով: Այս համատեքստում ամեն մի ակտի կամ դրանում ամրագրված դրույթի գնահատման չափանիշն ավելի բարձր ուժ ունեցող ակտը կամ դրույթն է և այդպես շարունակ՝ մինչև Սահմանադրություն (իհարկե, ոչ բոլոր դեպքերում է, որ գնահատումը և արժևորումը կարող են հասնել մինչև Սահմանադրություն): Հարց է առաջանում՝ իսկ ո՞րն է Սահմանադրության՝ որպես օրենքի գնահատման չափանիշը: Հենց այս պատճառով Վ. Ներսեսյանցը չէր ընդունում բնական իրավունքի տեսությունը: Իրավունքի ներսեսյանական հայեցակարգում բնական իրավունքի կատեգորիան բացակայում է, որովհետև բնական իրավունքի տեսությունն ունի բազմազան վարկածներ, որոնք շատ վերացական են, արդյունքում չունեն չափելի, ձևականացված չափանիշներ: Իսկ դա գործնական-իրավական առումով նշանակում է Սահմանադրության գնահատում գիտակցության կամ բանականության միջոցով, ինչն էլ արժեքավորումը, գնահատումը դարձնում է հայեցողական, կաուչուկային, անորոշ: Դրան հակառակ՝ ձևական, իրավական հավասարության սկզբունքը չափելի, որոշակի, ավելի հստակ չափանիշ է սահմանադրական և այլ մակարդակի նորմատիվ կարգավորումները գնահատելու, այն իրավական կամ ոչ իրավական հայտարարելու համար: Օրինակ՝ ինչպե՞ս կարող ենք գնահատել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը բնական իրավունքի տեսության դիրքերից: Երևի թե հնարավոր չէ: Այնինչ իրավահավասարության սկզբունքի չափանիշով այդ հոդվածը հակահրավական դրույթ է, որովհետև խախտված են համակարգային տարրերի՝ ժողովրդի և պետության հնարավորությունների հավասարությունը, հավասարակշռությունը: Հոդվածն ամրագրում է ժողովրդի միայն երկու հնարավորություն՝ ընտրություն և հանրաքվե: Առաջինը իրական կիրառման առումով մինչ այժմ խեղաթյուրված էր: Հանրաքվեի ինստիտուտն օրենսդրական ճանապարհով աղճատված, թերի, ամորձատված էր: Այսպիսի գնահատականը, իհարկե, մեծ մասամբ վերաբերում է Սահմանադրության նախորդ երկու խմբագրություններին, սակայն նաև՝ 2015 թ. Սահմանադրությանը:

Կարող ենք մենք բնական իրավունքի դիրքերից գնահատել 2015 թ. Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը: Երևի թե ոչ, իսկ իրավահավասարության սկզբունքով կարծես թե հնարավոր է: Օրինակ՝ նախաձեռնության սուբյեկտների իրավահավասարության հիմքով: Այս հոդվածում համադրելի են պատգամավորը և ժողովրդական նախաձեռնության սուբյեկտները: Հավասար են արդյոք իր թիկունքում ընդամենը մինչև 10 հազար ենթադրական, բայց իրականում ավելի քիչ ընտրա-

կան ձայներ ունեցող պատգամավորի հնարավորությունները ժողովրդական օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների հետ: Ակնհայտ է, որ ոչ, որովհետև օրենսդրական նախաձեռնության համար պահանջվում է 50 հազար ընտրողի ստորագրություն: Այս մտեցման հիմքով կարող ենք գնահատել իրավական ցանկացած դրույթ, իսկ բնական իրավունքի դիրքերից դա անհնարին է կամ էլ շատ դժվար կամ էլ հայեցողական:

Այսպիսով, նոր և նորագույն դարաշրջանի քաղաքական և իրավական ուսմունքների հորձանուտում իր ուրույն և դեռևս ամբողջովին չարժևորված տեղն ունի Վ. Ներսեսյանցի ազատական-իրավաբանական ուսմունքը, որն իր համընդհանրությամբ, խորքայնությամբ, ցիվիլիստական հասարակության ու սեփականության հայեցակարգով հավակնում է մրցակցելու Գ. Հեգելի և Կ. Մարքսի ուսմունքների հետ, առաջադրելու համաշխարհային հասարակական-քաղաքական և իրավական զարգացման այլընտրանքային ուղի, որը շատ հարմար ու տեղին է նաև ՀՀ իրականության համար, կարող է օգնել ազգային, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մարդկային, իրավական-սահմանադրական և այլ սուր խնդիրները լուծելուն:

**Բանալի բառեր** – *իրավունքի և պետության տիպ, պատմության ավարտ, բնական իրավունք, ցիվիլիզմ, հետկապիտալիզմ, հետսոցիալիզմ, սահմանադրական-իրավական արժեքաբանություն*

**АРТУР ВАГАРШЯН – Либертарно-юридическая теория в обзоре истории философии права.** – В истории философии права своё уникальное и ещё не вполне осмысленное место занимает либертарно-юридическое учение В. Нерсисянца, которое своим универсализмом, глубиной, концепцией гражданского общества и собственности способно конкурировать с учениями Гегеля и Маркса. По сути, Нерсисянец выдвинул альтернативный путь общественно-политического и правового развития. Его учение представляется весьма уместным в наших реалиях и могло бы содействовать решению национальных, политических, экономических, социальных, конституционно-правовых и других острых проблем.

**Ключевые слова:** *тип государства и права, конец истории, естественное право, цивилизм, посткапитализм, постсоциализм, конституционно-правовая аксиология*

**ARTHUR VAGHARSHYAN – Libertarian Legal Theory in the Stream of the History of the Philosophy of Law** - In the turbulent flow of political and legal doctrines of the new and modern era, V. Nersesiantz's libertarian-legal theory has its unique and not yet fully acknowledged place. The mentioned theory by its universalism, depth, concept of civil society and property competes with the doctrines of G. Hegel and K. Marx, putting forward an alternative way of the world socio-political and legal development. This doctrine is also very relevant to the reality of the Republic of Armenia and it can contribute to the solution of national political, economic, social, human, constitutional-legal and other serious problems.

**Key words:** *type of state and law, end of history, natural law, civilism, post-capitalism, post-socialism, legal axiology*

---

**ՎԼԱԴԻԿ ՆԵՐՍԵՍՅԱՆՑԻ ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Ումանք իրենց ողջ կյանքը նվիրում են որոշակի արժեքների, սակայն հազվադեպ է այդ նվիրումը հանգեցնում այնպիսի բացառիկ ներդաշնակության, որ դժվար է լինում միանշանակ եզրակացության հանգել. մա ընդ է նվիրվել արժեքին, թե՛ արժեքն է բացահայտել մարդուն: Կարծում եմ՝ այդպիսին է եղել նաև իրավունքի փիլիսոփայության երախտավոր, ակադեմիկոս Վլադիկ Ներսեսյանցը, քանզի գիտությունը նրա կյանքը դարձրել է արտասովոր: Գիտության նվիրյալ լինելով հանդերձ՝ նա ապրել է մարդ-մտավորականին բնորոշ լիարժեք կյանքով, եղել է երեկոյթների ու ընկերական հավաքների «աղը», միայն իրեն բնորոշ հումորով հրամցրել է թարմ անեկդոտներ, արտասանել է իր լիրիկական ստեղծագործությունները և այլն:

2005 թ. հուլիսին իմանալով, որ բժիշկներն ախտորոշել են վիրահատության ոչ ենթակա թոքերի քաղցկեղ, գիտնականը միանգամայն հանգիստ ասել է. «*Ես ոչնչի համար չեմ ամիստուս*»: Կինը (մասնագիտությամբ ևս իրավագետ է և գիտության մեջ ճանաչված տեսաբան) նկատել է. «*Վլադիկն իր կյանքով է վաստակել այդպիսի պատասխանատու արտահայտություն անելու իրավունքը*»<sup>1</sup>:

Իմ և իմ որոշ ընկերների գիտական գործունեության մեջ առանցքային հետազոտ է թողել Ներսեսյանցի հետ անմիջական ծանոթությունը: 1984 թ. ընդունվեցի ԽՍՀՄ գիտությունների ազգային ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրա: Հենց այստեղ էլ ինձ վիճակվեց ուսման երեք տարիների ընթացքում սերտ շփումներ ունենալ հիրավի համամարդկային արժեքներով ապրող մեծ գիտնականի՝ Վլադիկ Ներսեսյանցի հետ, որը ղեկավարում էր նույն ինստիտուտի *քաղաքական ուսմունքների և իրավունքի փիլիսոփայության բաժինը*՝ ի դեպ, պատմության մեջ միակ անկուսակցական վարիչն է եղել, այն էլ այն բաժնի, որի անվանման մեջ առկա էր «քաղաքական» եզրույթը: Չեմ թաքցնում, ինձ համար չափազանց բարդ էր պարզապես շփվել մի մարդու հետ, որի գաղափարները ձևավորվում ու դրսևորվում էին ինձ և իմ հասակակիցներին դեռևս անհասանելի հարթությունում:

---

<sup>1</sup> Лапаева В. В. Владик Сумбатович Нерсисянц. Ер., 2009, с. 41.

Բնորոշ է Վ. Գրաֆսկու դիտարկումը. «Ներսեսյանցի տեսությունների վրա ավելի շատ հղում են կատարում, քան հասկանում են դրանց խորքային էությունը, իսկ ավելի հաճախ ճիշտ չեն ընտրվում հետազոտության տեսանկյունները»<sup>2</sup>: Հավելենք, որ Վլ. Ներսեսյանցի աշխատություններին հղումներ կատարելու միտումը շարունակվում է նաև մեր օրերում: Ի դեպ, Վ. Գրաֆսկու մտահոգությունը միանգամայն հիմնավորված է. խնդիրն այն է, որ հատկապես դասագրքերում ու ուսումնական ձեռնարկներում իրավունքի էության վերաբերյալ Վլ. Ներսեսյանցի ուսմունքը հաճախ կա՛մ *անհարկի նույնացվում է բնական իրավունքի տեսության հետ*, կա՛մ դիտարկվում է որպես «փիլիսոփայական տարրերով հագեցած»<sup>3</sup>: Այս համատեքստում գոհացնող է այն, որ վերջին շրջանում նկատվում է որոշ աշխուժացում՝ անկախ այն հանգամանքից, թե դրա հեղինակները համամիտ են իրավունքի ազատականության Վլ. Ներսեսյանցի տեսության հետ, թե ոչ, այն հնարավորինս համարժեք ներկայացնում են որպես մեր օրերում լայն տարածում ստացած տեսություն<sup>4</sup>:

Բուրբուրվին այլ է վիճակն իրավունքի էության հիմնախնդիրներով հետաքրքրված նոր սերնդի իրավագետների շրջանում. վերջիններս իրենց հետազոտություններում հիմնականում հղում են Վլ. Ներսեսյանցին, ինչը հույս է տալիս, որ, թերևս, ապագայում ակնկալվում է մեծ իրավագետի հետնորդների ազդու ուժի ձևավորում:

Գիտնականի իրավունքի տեսության նկատմամբ գիտական անչափ մեծ հետաքրքրության, ինչ-որ իմաստով ակնհայտ անհանդուրժողականության գաղտնիքը թերևս թաքնված է հենց այդ տեսության գիտագործնական ուղղվածության մեջ. այն չի սահմանափակվում սուկակադեմիական, խիստ տեսական-փիլիսոփայական հայեցակարգերով, այլ առաջադրում է գործնական տեսանկյունի խնդիրներ, դրանց լուծման որոշակի եղանակներ, որոնք ոչ միշտ է, որ համահունչ են եղել ընթացիկ պետական քաղաքականությանը:

Այսօր ՌԴ ԳԱԱ պետության և իրավունքի ինստիտուտում ամեն տարի կազմակերպվում են մեր հայրենակցի հիշատակին նվիրված իրավափիլիսոփայական ընթերցումներ: Հատկանշական է, որ այդ գիտաժողովներին մասնակցում են ոչ միայն ՌԴ, այլև ողջ աշխարհի ճա-

---

<sup>2</sup> **Графский В. Г.** Интегральная (общая синтезированная) юриспруденция как теоретическое и практические знания // "Материалы философско-правовых чтений памяти академика В. С. Нерсесянца". М., 2006, с. 159.

<sup>3</sup> Տե՛ս օրինակ՝ «Теория государства и права»: Учебник. М., 2004, էջ 800, **Храпанюк В. Н.** Теория государства и права. Учебник. М., 1993., «Теория государства и права». Курс лекций. М., 1999, էջ 162-166:

<sup>4</sup> Տե՛ս օրինակ՝ Макуев Р. Х. Теория государства и права. Учебник. Орел, 2003, էջ 246-249, Мартышин О. В. О концепции учебника теории государства и права. № 8. 2002, էջ 61-65, «Պետության և իրավունքի տեսություն 2»: Դասախոսություն / Արթուր Վաղարշյան: ԵՊՀ, Եր., 2011, էջ 448:



նաչված գիտնականներ: Ընդ որում՝ չեն խորշում ակադեմիկոսի գիտական ժառանգության մասին խոսել նաև այն իրավագետները, որոնք ժամանակին եղել են նրա երդվյալ հակառակորդները (Ք. Տոպոբին, Ա. Միցկևիչ և այլն), անգամ փորձել են խոչընդոտել նրա գիտական աշխատությունների տպագրությունը և այլն:

Վլ. Ներսեսյանցի գիտական ժառանգության արժևորմանը նվիրված գործեր շատ կան, դրանցից հիշատակելի է հատկապես նրա տիկնոջ՝ Վ. Լապանայի «Վլադիկ Սուսրատի Ներսեսյանց» վերտառությամբ կենսագրական մենագրությունը: Ի դեպ, այդ գրքի նախաբանի հեղինակ Գագիկ Հարությունյանը գրել է. «Այս գրքի հեղինակը, ըստ էության, հենց Վլադիկ Սուսրատի Ներսեսյանցն է: Գրքում արտացոլված նրա մտքերը, հասարակական հարաբերությունների իրավական էության վերաբերյալ փիլիսոփայական դատողությունները, մարդկային բնության նրա պոետիկ ընդհանրացումները կհարստացնեն միլիոնավոր մարդկանց գիտական և հոգևոր կյանքը»<sup>5</sup>:

Թերևս դժվար է բացատրել իրավունքի փիլիսոփայության նկատմամբ Վլ. Ներսեսյանցի սիրո գաղտնիքները: Այս կապակցությամբ Վալենտինա Լապանան գտնում էր, որ «Ժողովրդի թշնամի» ճանաչված և աքսորված իր հորը դեռևս մանուկ հասակում կորցրած Վլադիկը եղել է հոր պաշտամունքի և կյանքի դժվարություններին, հատկապես խորհրդային անմարդկային բռնապետությանը հնարավորինս ամուրոգով դիմակայելու ականատեսը, ինչն էլ կանխորոշել է նրա հետագա մտածելակերպը: «Ժողովրդի թշնամու» զավակի գործերը չեն կամեցել ընդունել բուհի փիլիսոփայության ֆակուլտետ, ինչն էլ առիթ է դարձել կայացնելու դժվարին որոշում՝ թաքցնել հոր դատվածության փաստը և հաջորդ տարի ընդունվել իրավաբանական ֆակուլտետ: Միջնակարգ դպրոցը գերազանցությամբ ավարտած երիտասարդին լավագույն դեպքում կարող էին թույլ տալ ընդունվել տեխնիկական մասնագիտությամբ որևէ բուհ, ինչն էլ դրանից երկու տարի առաջ արել էր Վլ. Ներսեսյանցը, սակայն մեկ տարի գերազանցությամբ սովորելուց հետո վերադարձել էր Երևան, այնուամենայնիվ փիլիսոփայական ընդունվելու անքակտ մտադրությամբ:

Եթե զուտ վիճակագրության լեզվով փորձենք արտահայտվել, ապա պետք է փաստենք, որ Ներսեսյանցը հեղինակել է շուրջ 400 գիտական աշխատանք, որոնցից 16-ը՝ մենագրություն: Սակայն վիճակագրությունը հաճախ ի գործու չէ համարժեք արտացոլելու գիտնականի ժառանգության իրական կշիռը: Մենք կարող ենք հղում կատարել բազմաթիվ հանրաճանաչ իրավագետների կարծիքների, սակայն նպատակահարմար ենք համարում վկայակոչել ՌԴ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Դ. Չորկինի

<sup>5</sup> Ланаева В. В., նշվ. աշխ., էջ 4:

հետևյալ դիպուկ եզրակացությունը. «*Ինձ համար հիրավի անչափ հաճելի է, երբ ժամանակակից ասպիրանտներն իրենց եզրահանգումները կառուցելիս հղում են կատարում այնպիսի մեծ գիտնականի, ինչպիսին է Վլադիկ Սումբատի Ներսեսյանցը: Ես գտնում եմ, որ նա իրավունքի փիլիսոփայության ոռու ամենամեծ գիտնականներից է: Դժվար է նրան համեմատել որևէ մեկի հետ և նույն կերպ դժվար է գտնել նրան հավասար որևէ մեկին ինչպես մեր, այնպես էլ անցյալ դարում, և դա այն դեպքում, երբ 20-րդ դարը հարուստ է եղել ականավոր գիտնականներով: Բորիս Չիչերին, Ալեքսանդր Գրադովսկի, Նիկոլայ Կորկունով, Պավել Նովգորոդցև, Սերգեյ Մուրոմցև... այս անունները ոչ միայն ոռուսական, եվրոպական, այլև համաշխարհային նշանակության են»<sup>6</sup>:*

Իսկ ճանաչված իրավագետ, երջանկահիշատակ Վլ. Նազարյանի կարծիքով, «*Իրավագիտության բնագավառում Վ. Ս. Ներսեսյանցի հսկայական նվաճումներից է իրավունքի և պետության նոր տեսության մշակումը, որը մինչ այդ բուհական դասագրքերում շարադրված այդ գիտությունից տարբերվում է ճիշտ այնպես, ինչպես Ա. Էյնշտեյնի ֆիզիկան՝ Բ. Նյուտոնի ֆիզիկայից*»<sup>7</sup>: Նկատենք, որ «նոր տեսություն» եզրույթը իրավագետը իրավամբ օգտագործել է հատկապես երկու հայեցակարգերի՝ ազատական կամ լիբերտային ուսմունքի և ցիվիլիզմի մանիֆեստի առնչությամբ:

Իհարկե, չափազանց լայն է եղել իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրները համակարգված ու համալիր հետազոտելու առաքելություն ստանձնած գիտնականի կողմից բացահայտված գաղափարների շրջանակը, սակայն, կարծում եմ, նրա գիտական ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի, որոնցից առաջինում հեղինակը կենտրոնացած էր իրավունքի և օրենքի էության ու փոխհարաբերության, իրավունքի միանգամայն նոր տեսության՝ *ազատականության ուսմունքի* մշակման վրա, իսկ երկրորդում հիմնականում զբաղվում էր *սոցիալիզմից ցիվիլիզմին* անցման շրջանի բարդագույն հիմնախնդիրների համակողմանի հետազոտությամբ: Ընդ որում՝ այս երկու փուլերի միջև առկա է սերտ կապ, քանզի հենց իրավունքի ազատականության հայեցակարգն է կանխորոշում սոցիալիզմից նոր հասարակարգի անցման անհրաժեշտությունը:

Եթե ներկայումս հստակորեն չեն տարբերակվում «օրենք» և «իրավունք» եզրույթները, անգամ իսկ շփոթում և անհարկի նույնացնում են «օրենքի գերակայություն» և «իրավունքի գերակայություն» եզրույթները, ապա Վլ. Ներսեսյանցի՝ դեռևս 1977 թ. «Советское государство и право» գիտական հանդեսի համար պատրաստած «*Իրավունք և օրենք*.

<sup>6</sup> [www.consultant.ru](http://www.consultant.ru).

<sup>7</sup> Վ. Ս. Ներսեսյանց, Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային-պատմական առաջընթացում: Թարգմանությամբ Վլ. Նազարյանի, Ա. Մանուկյանի և Ս. Միմոնյանի, Եր., 2001, էջ 5:

դրանց տարբերությունը և հարաբերակցությունը» վերտառությամբ հողվածում արտահայտած մտքերը այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: *Դրանում հեղինակն առաջին անգամ փորձ էր արել իրավունքը հակադրել օրենքին* և այն մեկնաբանել ոչ թե բնական իրավունքին բնորոշ կանխադրություններով, այլ առավել լայն՝ ոչ միայն օրենքի, այլև պետության էությունը կանխորոշող երևույթի: Հասկանալի պատճառներով այն, իհարկե, մերժվել էր, իսկ մի քանի տարի անց տպագրվեց վերանայված տեսքով: Բարեբախտաբար նախնական տարբերակը պահպանվել էր տիկին Լապանայի անձնական արխիվում<sup>8</sup>: Սակայն գիտական համառ խառնվածքի տեր անհատ լինելով՝ Վլ. Ներսեսյանցը, այնուամենայնիվ, իրավունքի ու օրենքի փոխհարաբերության մասին իր տեսությունը կարողացել է հրապարակել, ճիշտ է այլ վերտառությամբ և մի փոքր խմբագրելուց հետո: Ընդ որում, հիշյալ գիտական հանդեսի կազմակերպած «կլոր սեղանի» նյութերը հրապարակելիս խմբագիրներն իրենց հերթին ևս «որոշ» ուղղումներ էին արել: Տիկին Վալենտինա Լապանայի խոսքերով՝ դրանք արտաքուստ չնչին միջամտություններ էին, սակայն էապես խաթարել էին բուն գաղափարը<sup>9</sup>:

Գիտական հանդեսի այդ տարիների գլխավոր խմբագիր Ա. Միցկևիչը մերժումը պատճառաբանել է այն փաստարկներով, որ այդ տեսությամբ ամբողջովին անտեսվում են իրավագիտության մեջ արմատացած իրավունքի էության առնչությամբ անբեկանելի գաղափարները, որ իբր կոռեկտ չէ հղում կատարել Կ. Մարքսին, քանի որ վերջինիս ուսմունքից այդպիսի եզրահանգումներ բխեցնելն առնվազն խելամիտ չէ և այլն: Նկատենք, որ Վլ. Ներսեսյանցը հետագայում առավել հիմնավոր փաստարկներ է բերել իր մոտեցումների իրավաչափությունը հիմնավորելու, այդ թվում՝ Կ. Մարքսի գաղափարների խորքային հարցադրումները բացահայտելու համար:

*Ներկայացնելով իրավունքը որպես հավասարության, ազատության և արդարության եռամիասնություն՝ Վլ. Ներսեսյանցը գտնում էր, որ թեև ազատությունը հավասարության օբյեկտն է, սակայն այն այնպես պետք է կարգավորի ազատությունը, ներազդի վերջինիս վրա, որ ապահովվի լիարժեք արդարություն:* Այս եռամիասնությունը Վլ. Ներսեսյանցի եղբայրը՝ Վազգեն Ներսեսյանցը, համեմատում էր սուրբ երրորդության՝ հոր, որդու և սուրբ հոգու եռամիասնության հետ, ինչին Վլ. Ներսեսյանցն առանձնապես չի հակառակվել:

Իրավունքի և օրենքի փոխհարաբերության վերաբերյալ Վլ. Ներսեսյանցի գաղափարները *զգալիորեն հարստացնում են իրավունքի գերակայության սկզբունքը:* Այդ հայեցակարգի շրջանակներում արդեն բավարար չեն համարվում օրենքի՝ իրավունքին խիստ համապատասխանության և նմանաբնույթ այլ պահանջները: Այս դեպքում իրավուն-

<sup>8</sup> Տե՛ս Ланаева В. С. նշվ. աշխ., էջ 118-124:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 19-21:

քը դիտվում է ոչ միայն որպես որևէ օրենսդրական ակտով ամրագրված իրավական վարքագծի կանոնների, այլև հարաբերությունների համակարգ, որը ոչ թե հաջորդում, այլ նախորդում է օրենքին: Ըստ այդ հայեցակարգի՝ իրավունքն ու պետությունը խիստ սահմանազատված չեն, այլ մեկ միասնություն են:

Ընդ որում՝ հիշյալ եռամիասնության շրջանակներում ձևական հավասարության գլխավոր միջոցը Վլ. Ներսեսյանցը համարում էր *փոխհատուցման ինստիտուտը*, ըստ որի՝ ի սկզբանե սոցիալապես խոցելի խավի ներկայացուցիչներին ոչ թե տրվում են արտոնություններ, կամ իրականացվում է տարբերակված ֆինանսահարկային քաղաքականություն, այլ արդեն իսկ միատեսակ, խտրականությունից զերծ քաղաքականությամբ առաջացած ոչ իրավահավասար իրավիճակը շտկվում է արդար փոխհատուցումների միջոցով:

Ի դեպ, ներկայումս արևմտյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում, դարձյալ փաստացի իրավահավասարություն ապահովելու նկատառումով, նախապատվությունը տրվում է միևնույն իրավախախտման համար տարբերակված չափով տուգանք նշանակելու եղանակին, ինչը, սակայն, շատերի կողմից ընկալվում է որպես չարդարացված խտրականության դրսևորում: Բնորոշ է այն, որ միևնույն իրավախախտման, ասենք՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար ֆիզիկական անձանց նկատմամբ նշանակվող տուգանքի չափը պայմանավորված է նրանց եկամուտներով, որի վերաբերյալ տեղեկությունը սահմանված կարգով կուտակվում է պետական իրավասու մարմիններում (խոսքը եկամուտների ու ծախսերի վերաբերյալ հայտարարագրերի մասին է): Ըստ այդմ՝ տուգանքի չափերը կարող են անհամեմատ տարբեր լինել, որի հիմքում ընկած են ոչ միայն կանխարգելման սկզբունքի երաշխավորման, այլև ձևական հավասարության առնչությամբ արդի պատկերացումները: Իհարկե, այս մոտեցման դեպքում հարկ է լինում վերանայել պատասխանատվության անհատականացման, ձևական հավասարության վերաբերյալ քրեական իրավունքում ձևավորված հայեցակարգերը:

Մեր երկրում ևս այս խնդիրը ձեռք է բերել արդիականություն, սակայն այդ առնչությամբ լիարժեք միասնական լուծում դեռևս չի առաջադրվել, և, կարծում ենք, վերը նշված հայեցակարգը կարող է սպառիչ էլակետ ծառայել իրավական համապատասխան լուծումների համար: Մասնավորապես, պետական սանկցիաների, այդ թվում՝ տուգանքի չափը տնտեսական հանցագործությունների ու զանցանքների դեպքում պայմանավորված է ոչ այնքան պատճառված վնասի, որքան ստացված կամ ստացվելիք եկամուտների չափով: Նույն կերպ, օրինակ, հարկերից խուսափելու հանցանքի վտանգավորության աստիճանը կանխորոշվում է գումարի այն չափով, որքանով տվյալ իրավունքի սուբյեկտը չարամտորեն խուսափել է հարկը վճարելուց: Սակայն

այս մոտեցումը հետևողական ու համակարգված գնահատելը դեռևս չափազանց վաղ է, քանզի նույն քրեական կամ վարչական օրենսդրությունում հաճախ հիմք է ընդունվում ոչ թե անմիջապես տնտեսությանը, այլ *կոնկրետ անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառված վնասի չափը, թեպետ տվյալ իրավախախտումների անմիջական օբյեկտը հենց տնտեսական գործունեությունն է*: Բնորոշ է այն, որ դեռևս ցարական Ռուսաստանի քրեական օրենսդրությունում վտանգավորության աստիճան էր համարվում ոչ թե շահույթի, այլ շրջանառության չափը, ինչը նաև ներկայումս է ընդունելի լուծում Արևմտյան Եվրոպայի երկրներում:

Կարծում ենք՝ եթե տեսականորեն մի պահ փորձեինք քրեական և վարչական պատասխանատվության ոլորտում հետևողականորեն ներդնել Վլ. Ներսեսյանցի իրավունքի ազատականության հայեցակարգը, ապա հարկ կլինեք սանկցիաների չափի հիմքում դնել ոչ միայն պատճառված վնասի, այլև իրավունքի տվյալ սուբյեկտի եկամուտների չափը (սակայն ոչ տվյալ գործունեությունից ստացված շահույթի չափը), իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված իրավախախտումների դեպքում՝ նաև շրջանառության ծավալը: Վերջին հաշվով, տնտեսական գործունեության դեմ ուղղված իրավախախտումների վտանգավորության աստիճանը ոչ թե այս կամ այն կոնկրետ գործարքով ստացված եկամտի, այլ տնտեսական գործունեությանը պատճառված վնասի չափն է, որն արդեն դրսևորվում է տնտեսական մրցակցության և ազատ տնտեսական գործունեության սկզբունքի խաթարման աստիճանով, ինչի լավագույն ցուցիչը շրջանառության ծավալն է: Այլ կերպ ասած՝ չգրանցված առևտրային կազմակերպությունը հնարավոր է տևական ժամանակով շահույթ չստանա, սակայն մեծ շրջանառությամբ խաթարի տնտեսական մրցակցության սկզբունքը, խոչընդոտի այլոց ազատ տնտեսական գործունեությունը և այլն: Այս տեսանկյունից արդեն գործնականում գրեթե անլուծելի խնդիր է դառնում, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածով ամրագրված այն մոտեցումը, որ հանցակազմի հատկանիշ է ճանաչվում անձանց, կազմակերպություններին և պետությանը պատճառված զգալի վնասը:

Վլ. Ներսեսյանցի համար գոյություն չեն ունեցել բացարձակ, անմեկնելի ճշմարտություններ, սակայն դա բնավ չի նշանակել, որ իրավունքի փիլիսոփայության միանգամայն նոր գաղափարներ առաջադրելիս նա տարվել է ինքնանպատակ նորամուծություններով. յուրաքանչյուր տեսություն, ուսմունք կամ տեսակետ բացառապես հազեցած են համարձակ, բայց և սպառիչ ու հավաստի հիմնավորումներով, առանձնանում են իրավաքաղաքական արդի բարդ իրավիճակում հնարավորինս լավագույն լուծումներ առաջադրելու մղումով:

Խորհրդային իրավամտաձեւակերպից իրավունքի փիլիսոփայութ-

յան արդի գաղափարախոսության անցնելու բարդ ու հակասական իրավիճակում ոչ միայն իրավական անհրաժեշտ մշակույթ ձևավորելու, այն համակողմանի պատկերացնելու, այլև ինքնատիպ ու խիստ համոզիչ խոսք ասելու ունակությունը տրված է ոչ բոլորին: Այս տեսանկյունից Վլ. Ներսեսյանցը երջանիկ բացառություն էր, քանզի եկավ համարժեք ընկալելի դարձնելու ոչ միայն խորհրդային իրավագիտակցությանը խորթ, բայց և արդեն լայն տարածում ստացած գաղափարները, այլև բարձրացնելու դրանց նշաձողը և անգամ դրանց հեղինակների համար մեկ անգամ ևս իրենց տեսակետները վերանայելու անթաքույց անհրաժեշտությունն ընդգծելու առաքելությամբ: Մեծ գիտնականի այդ ջանքերը պսակվեցին հաջողությամբ, որի վկայությունն են բարձր գնահատականները, որոնցից մի քանիսին մենք արդեն անդրադարձանք:

*Ի դեպ, Վլ. Ներսեսյանցը սիրում էր հաճախ կրկնել, որ գրավիտացիան տարածվում է միայն ֆիզիկական օրենքների վրա, իսկ սոցիալական օրենքները չեն խրախուսում հոգևոր արժեքները «դեն նետելը», այլ կերպ ասած՝ դրանց քամահրանքով վերաբերվելը, քանի որ դրանք կա՛մ այլևս չեն վերադառնում, կա՛մ վերադառնում են անձանաչելիորեն «հրեշավոր» տեսքով ու հարկադրում գողջալ:*

Վլադիկ Ներսեսյանցի գրավոր խոսքը, նյութի շարադրանքը անվերապահորեն բարդ են, այն ուղեկցվում են բազմաթիվ նոր գաղափարներով ու եզրույթներով, սակայն նյութը խրթին չէ. այն պարզապես նախատեսված է իրավունքի փիլիսոփայության գաղափարների նկատմամբ խորքային պատկերացումներ ունեցողների համար: Նրա գաղափարները քիչ թե շատ ճիշտ ընկալելու համար պահանջվում է պատշաճ պատրաստվածություն, սակայն նույնիսկ դա հաճախ բավարար չի լինում դրանք լիարժեք ընկալելու համար, ինչն ընդգծել են նաև նրա գործընկերները:

Չափազանց բարդ է հակիրճ անդրադառնալ իրավագետի գիտական ժառանգությանը և համակարգված ներկայացնել դրա ազդեցությունն իրավունքի զարգացման արդի հեռանկարների կանխորոշման կտրվածքով, քանզի բուն ժառանգությունն ավելի քան բազմաշերտ է ու համընդգրկուն: Մյուս կողմից՝ իրավունքի զարգացման հեռանկարները կանխորոշելիս հարկ է նկատի ունենալ, որ իրավունքի փիլիսոփայության գիտակը արել է այնպիսի բազմասպեկտ դիտարկումներ, որոնք հնարավորություն են տալիս ծրագրելու իրավունքի զարգացման էվոլյուցիոն փուլերը, ընդ որում՝ *յուրաքանչյուր փուլի ակնկալվելիք ձեռքբերումները կարող են հետագա բարելավումների կայուն նախապայման լինել:*

Հանրահայտ է, որ Վլ. Ներսեսյանցը եղել է իրավունքի պոզիտիվիզմի (լեզիզմի) անհաշտ հակառակորդը, սակայն նա բնավ չի բավարարվել քննադատությամբ, այլ մշակել է իրավունքի միանգամայն նոր հայեցակարգ, ըստ որի՝ ամեն մի օրենք, որն անգամ ապահովվում է

պետության հարկադրանքով, դեռևս իրավունք չէ: «*Իրավունքը, - գրում է Վլ. Ներսեսյանցը, - մարդկության համաշխարհային պատմության մեջ ազատության մաթեմատիկան է, մարդկանց՝ որպես ձևականորեն (իրավաբանորեն) ազատ անհատների հավասարության առաջընթացը: Իրավունքի մեխանիզմի՝ ձևական (իրավական) հավասարության միջոցով մարդկանց՝ սկզբում անազատ զանգվածն աստիճանաբար, պատմական զարգացմանը զուգընթաց վերափոխվում է ազատ անհատների: Իրավական հավասարությունը հնարավոր և իրական է դարձնում ազատությունը համընդհանուր նորմատիվ-իրավական ձևի ներքո, որոշակի իրավակարգի տեսքով*»<sup>10</sup>:

Ինքնատիպ ու խորաթափանց էին Վլ. Ներսեսյանցի գաղափարները նաև *սոցիալական պետության* էության առնչությամբ: Նրա համոզմամբ՝ սոցիալական կարող է համարվել այն պետությունը, որի սոցիալական քաղաքականության հիմքում դրվում է *ձևական հավասարությունն ապահովելու իրավական սկզբունքը*<sup>11</sup>: Իսկ ձևական հավասարության երաշխիք էր համարում հավասար իրավունակությունը, որին կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ պետությունը սոցիալական թույլ պաշտպանված խմբերին ցուցաբերում է այնպիսի աջակցություն, առանց որի վերջիններս չէին կարող սուսկ իրենց ընդհանուր իրավունակությամբ ձեռք բերել այնպիսի կարգավիճակ, որը բնորոշ կլիներ մյուս սոցիալական խմբերին:

Հակադրվելով տարածված այն տեսակետին, թե ձևական իրավահավասարությունը յուրաքանչյուրին հավասար հնարավորությունների ընձեռումն է, Վլ. Ներսեսյանցը գտնում է, որ յուրաքանչյուրին տրվող հնարավորությունների շրջանակը չի կարող արհեստականորեն միատեսակ լինել, այն պետք է պայմանավորված լինի տվյալ անձի համար այնպիսի իրավական կարգավիճակ ապահովելու պահանջով, որի դեպքում կապահովվի հնարավորինս իրական հավասարություն: Այլ կերպ ասած՝ հավասար հնարավորությունների ընձեռումը կարող է ոչ թե ապահովել իրական իրավահավասարություն, այլ էլ ավելի խորացնել փաստացի անհավասար կարգավիճակը: Հնարավորությունների շրջանակը թելադրված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տարիքը, առողջական վիճակը և այլ օբյեկտիվ հանգամանքներ: Ընդ որում՝ ձևական հավասարության վերոհիշյալ մեկնաբանությունն ունի գիտական հստակ արժեք, այն է՝ միայն այդպիսի հավասարության պայմաններում անձը կարող է օժտված լինել *ազատությամբ*:

Վլ. Ներսեսյանցի հետազոտություններն առավել ընդգծված գիտազործնական նշանակություն ունեցան ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով անցման շրջանի հրամայականով թելադրված իրավափիլիսոփայական բարդագույն խնդիրների լուծումները բացահայտելու համա-

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>11</sup> См. u **Нерсесянц В. С.** Философия права. М., 1997, էջ 30:

տեքստում: Իր իսկ բնորոշմամբ, փաստորեն, պետք է տեղի ունենար անցում սոցիալիզմից քաղաքակրթություն: Իրավագետների շրջանում ձևավորվել էր իսկական խառնաշփոթ. մի մասը հակված էր այն տեսակետին, թե սոցիալիզմ դեռևս չի ձևավորվել, իսկ պատմական նոր փուլը հենց լավագույն նախադրյալներ է ստեղծել այն վերջնականապես կառուցելու համար: Մյուս հատվածն ընդհանրապես ենթադրում էր, որ երբևէ իրական սոցիալիզմ կառուցելու փորձեր չեն էլ ձեռնարկվել, որ զորանոցային սոցիալիզմ ձևավորելու համար ստեղծվել են լավագույն նախապայմանները:

Խորհրդային համակարգի փլուզման հիմնական պատճառ էր համարվում ոչ այնքան բուն համակարգի էությունը, որքան սոցիալիզմի գաղափարներից շեղվելը: Այլ կերպ ասած՝ հասարակական իրավագիտակցությունը ոչ միայն միատարր չէր, այլև առանձնանում էր խիստ բևեռվածությամբ, որի պայմաններում հիրավի անկաշկանդ դատողություններ անելն ու օրավուր աճող մարտահրավերներին դիմակայելու ունակ տեսություններ մշակելը պահանջում էին աներևակայելի տաղանդ:

*Վլ. Ներսեսյանցը, անդրադառնալով նշված երկփեղկվածությանը, նկատում է, որ զանգվածների գիտակցության հենքը «կոշտ» պրակտիկայի և «զուտ» գաղափարի սինթեզն է, ընդ որում՝ պրակտիկայի և գաղափարի նման բարդ փոխհարաբերության խնդիրը համարվում է խիստ այժմեական, իսկ առանձին դեպքերում՝ գրեթե անհաղթահարելի: Այդպիսի իրավիճակներում չափազանց դժվար է լինում առաջադրել նոր գաղափարներ, քանզի իրավագիտակցության հիմքում գերիշխում է այն մտայնությունը, որ ձախողումների իրական պատճառը ոչ թե բուն գաղափարն է, այլ դրա սխալ ընկալումն ու կիրառումը: Խիստ քննադատության ենթարկելով սոցիալիզմի գաղափարը բացառապես շեղված պրակտիկայով բացատրելը՝ Վլ. Ներսեսյանցը գտնում էր, որ դրանով վարկաբեկվում է ոչ միայն պրակտիկան, այլև բուն գաղափարը:*

Ըստ նրա՝ ցանկացած, այսպես կոչված, «զուտ» գաղափար ինքնըստինքյան չի կարող արժանանալ «զուտ» պրակտիկայի, քանզի այս կամ այն չափով շեղումներն անխուսափելի են, սակայն նաև գաղափարը պետք է լինի այնքան կոռ ու հնարավորինս նվազ խոցելի, որ նվազագույնի հասցվեն շեղումները կամ, ինչպես ինքն էր նկատում, «ձևախեղումները» և «խեղաթյուրումները»: Միաժամանակ, թյուրըմբռնումներից ձեռնպահ մնալու նկատառումով հարկ է նկատել, որ սոցիալիզմի հասարակարգի նկատմամբ Վլ. Ներսեսյանցը բնավ չի դրսևորել միանշանակ ժխտողական վերաբերմունք. «Ցիվիլիզմի հայեցակարգը ցույց է տալիս, որ սոցիալիզմը ո՛չ պատմական սխալ է, ո՛չ էլ իզուր ծախսված ժամանակ, որ մեր նախորդների և հայրենակիցների մի քանի սերունդների աննախադեպ զոհերն իզուր չեն եղել, որ սոցիալիզմի ժամանակ առաջին անգամ (սոցիալիստական սեփական



նության տեսքով) համամարդկային քաղաքակրթության ավելի բարձր, ավելի արդարացի, ավելի մարդասիրական աստիճանի անցնելու նախադրյալներ են ստեղծվել»<sup>12</sup>:

Իր բազմաթիվ աշխատություններում անդրադառնալով հետխորհրդային շրջանի իրավափիլիսոփայական հայեցակարգերին՝ հեղինակը առանձնացրել է միմյանցից սկզբունքորեն տարբերվող երեք հայեցակարգեր: Դրանցից «կապիտալիստամետ» հայեցակարգի կողմնակիցները ելակետ էին ընդունում այն, որ սոցիալիզմը պատմական սխալ էր, և պետք է վերադառնալ կապիտալիզմին: Հաջորդ՝ այսպես կոչված «մարքսիստական-կոմունիստական» հայեցակարգը, որին արդեն մասամբ անդրադարձանք վերևում, փորձում էր վերակենդանացնել սոցիալիզմը՝ պատճառաբանելով, որ այն ձախողվել է խեղաթյուրումների և ձևախեղումների հետևանքով: Եվ, վերջապես, առաջ էր քաշվում *ցիվիլիզմի* հայեցակարգը, որի հիմնադիրն էր ակադեմիկոսը, ըստ որի՝ ոչ թե անհրաժեշտ է անցում կատարել կամ վերադառնալ կապիտալիզմին, այլ հարկ է ձևավորել այնպիսի սոցիալ-տնտեսական և պատմաիրավական հասարակարգ, որտեղ կերաշխավորվի «իրավունքի ձևերի (ներառյալ՝ սեփականության, պետության և իրավական այլ ձևեր) պատմական զարգացման, սոցիալական կյանքում ազատության, հավասարության և արդարության առաջընթաց»<sup>13</sup>:

Վլ. Ներսեսյանցը իրավունքի, հասարակարգի ու ընդհանրապես սոցիալական բոլոր երևույթների հիմքում որպես կանխորոշիչ գործոն համարում էր սեփականությունը. «... *Սոցիալիզմն իր բացասական փորձով ապացուցեց, որ սեփականությունը (իսկ դա, առաջին հերթին, արտադրության միջոցների նկատմամբ սեփականությունն է) ոչ թե իրավունքի ու մարդկանց ազատության արտահայտման սոսկ ելակետային և կարևոր ձևերից մեկն է, այլ ազատության ու ընդհանրապես իրավունքի համար անհրաժեշտ և քաղաքակիրթ հողը: Որտեղ չկա սեփականություն, այնտեղ ոչ միայն չկան, այլև սկզբունքորեն անհնար են ազատությունը, իրավունքը, հավասարությունը, անկախ անձը և այլն*»<sup>14</sup>:

Թերևս սեփականության իրավունքի էության համարժեք ըմբռնումն էր գիտնականին մղում ներկայացնելու սոցիալիզմից անցումը այնպիսի քաղաքակիրթ հասարակարգի, որի դեպքում սոցիալիզմի օրոք ձեռք բերված սեփականությունը հավասարապես կբաշխվի բնակչությանը, իսկ հակառակ դեպքում պարզապես տեղի կունենան հանրային գույքի հափշտակություն և պետության հոգսերից տարանջատվելու անհազ ձգտում, որոնք ընդհանուր ոչինչ չեն ունենա ժողովրդա-

<sup>12</sup> Վ. Ս. Ներսեսյանց, Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային-պատմական առաջընթացում, էջ 4:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>14</sup> Նույն տեղում:

վար ու քաղաքակիրթ արժեհամակարգի հետ: Վլ. Ներսեսյանցը, տարիներ անց արդեն համոզված լինելով, որ Ռուսաստանում իր կանխատեսումները, ցավոք, իրականացան, նկատում է. «... Ներկայիս սեփականատերերն իրենց վրա չեն վերցրել նույնիսկ իրենց բյուրոկրատական-սեփականատիրական պետությունը պահելու ծախսերը և այդ բերքը դրել են ոչ սեփականատերերի՝ հասարակության համբերատար ու օրինապահ մեծամասնության, հեշտությամբ հարկվող և բազմիցս կողոպտվող հարկատուների վրա: Մակայն ... «քաղաքակիրթ երկրներում», որոնց մասին դուք հիշում եք սոսկ ձեզ համար ձեռնտու դեպքերում, մասնավոր սեփականությունը չի ստեղծվել ո՛չ սոցիալիստական սեփականությունը «զավթելու» միջոցով, ո՛չ էլ սոցիալիստական ժառանգության ուրիշի բաժինների հաշվին: Մի մոռացեք ձեր սեփականության ու ձեր իշխանության կոնկրետ տեղի և կոնկրետ ժամանակի մասին: Ձեր առջև մի հասարակություն է, որը դեռևս հրաժեշտ չի տվել իր սոցիալիստական անցյալին և հրաժեշտ չի տա, քանի դեռ այս կամ այն ձևով ձեզանից չի ստացել սոցիալիստական ժառանգությունից իրեն հասանելիք արդարացի մասը: Հենց դուք եք մեղավոր սոցիալիզմին՝ նման վտանգավոր ձևով (և առաջին հերթին՝ ձեզ համար) ձգձգվող հրաժեշտ տալու համար»<sup>15</sup>:

Նկատենք, որ այս տողերը միաժամանակ բովանդակում են սոցիալիստական մտածելակերպից հնարավորինս արագ ձերբազատվելը, այսպես կոչված, խորհրդային «բարի ժամանակները» մոռանալը խոչընդոտող հիմնական երևույթի խիստ ինքնատիպ բացատրությունը: Խորհրդային համակարգի փլուզումից հետո մարդիկ չեն կարողանում համակերպվել այն գաղափարի հետ, որ ժողովրդի հանրային սեփականությունը չէր կարող հավասարապես բաշխվել: Իսկ դրա անհրաժեշտությունը, ըստ Վլ. Ներսեսյանցի, բնորոշ էր հենց անցման փուլին, քանզի ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման փուլում ձևավորվել է բոլորովին այլ իրավիճակ, մասնավորապես՝ գոյություն չի ունեցել հանրային սեփականություն, ուստի չի էլ ծագել դրա արդարացի բաշխման խնդիր:

Վլ. Ներսեսյանցը գտնում էր, որ հենց մասնավոր սեփականության զարգացման օրենքներն են պահանջում, որ այն կենտրոնանա հասարակության փոքրամասնության ձեռքում, ինչը տեղի կունենար նաև սոցիալիստական սեփականությունը հավասարապես բաշխելուց հետո, սակայն դա արդեն կլիներ բնական գործընթաց և արհեստականորեն չէր ուղեկցվի պարտադրված համաշխարհայինություններով և չէր հանգեցնի զանգվածների դժգոհությանը:

Լինելով գերմանական դասական փիլիսոփայության հսկաներ Հեգելի և Կանտի ուսմունքների լավագույն գիտակներից (1975 թ. դոկտո-

---

<sup>15</sup> Նույն տեղում:

րական ատենախոսություն է պաշտպանել «Հեգելի քաղաքական-իրավական տեսությունը և դրա մեկնաբանությունը» թեմայով՝ Վլ. Ներսեսյանցը գտնում էր, որ Հեգելը, փաստորեն, ֆեոդալիզմից անմիջապես հետո կապիտալիզմը պատմության ավարտ համարելով, օբյեկտիվորեն սահմանափակվել է պատմական զարգացումների տվյալ փուլին բնորոշ երևույթների փիլիսոփայական ընդհանրացմամբ, մասնավորապես՝ Հեգելը չէր կարող կանխորոշել սեփականության այնպիսի կառուցակարգ, որը կհամատեղեր մասնավոր սեփականությունը բնույթով դրան նման մեկ այլ սեփականության հետ: Տվյալ դեպքում հեղինակը նկատի է ունեցել իր առաջ քաշած ցիվիլիզմի նախապայման «քաղաքացիական սեփականության» տեսությունը:

Ի դեպ, 20-րդ դարի սկզբներին սոցիալիզմի ծագման հնարավորության մասին ևս սակավաթիվ իրավագետներ են համամիտ եղել: *Ի. Ա. Պոկրովսկին այն եզակի իրավագետներից էր, որը գիտականորեն հիմնավորում էր սոցիալիզմի, սոցիալիստական սկզբունքներով համայնավարական սեփականության, այլանային տնտեսության հնարավորության մասին*<sup>16</sup>: Նա ոչ թե հակված էր այդ ուսմունքին, այլ պարզապես գործնականում հնարավոր էր համարում այդպիսի համակարգի ձևավորումը հեղափոխության շնորհիվ՝ միաժամանակ կանխորոշելով այդ համակարգի անխուսափելի կործանումը: Ի դեպ, հենց այս «անհեռատես» կանխատեսման համար Ի. Պոկրովսկին գրկվել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնից:

Այսպիսով, Վլ. Ներսեսյանցը փորձում է հիմնավորել, թե ինչու է Հեգելի կապիտալիզմը համարել պատմական առաջընթացի բարձրակետ, ինչու նա չի կանխատեսել պատմության և իրավունքի էվոլյուցիայի միջանկյալ փուլ, որի հաղթահարումն արդեն չէր կարող իրականացվել կապիտալիզմին անցման պարզունակ սկզբունքով: Վլ. Ներսեսյանցը, ինչպես և քաղաքացիական իրավունքի դասական Ի. Պոկրովսկին, այսպիսով, այն գաղափարն են հիմնավորում, որ սոցիալիզմը, միանգամայն հնարավոր լինելով հանդերձ, անցումային հասարակարգ է, որ այն պատմության ավարտը չէ: *Ի տարբերություն Ի. Պոկրովսկու՝ Վլ. Ներսեսյանցը գտնում է, որ սոցիալիզմից անցում կապիտալիզմին հնարավոր չէ, քանի որ ի սկզբանե խախտվում են մասնավոր սեփականության ձևավորման կապիտալիզմին բնորոշ կանոնները՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ:*

Վլ. Ներսեսյանցը նույն կերպ էր բացատրում նաև սոցիալիզմը պատմության ավարտ համարելու Կ. Մարքսի ուսմունքի իրավափիլիսոփայական ակունքները: Այս դեպքում դարձյալ այն դրույթն էր առա-

<sup>16</sup> См. у Покровский И. А. Основные проблемы гражданского права. М.: "Статут" (в серии «Классика российской цивилистики»), 1998, էջ 37:

ջադրվում, որ պատմական զարգացումների տվյալ փուլը Կ. Մարքսին հնարավորություն չէր տալիս տեսնելու հնարավոր էվոյուցիան: Իր գաղափարների և այլ խոշոր փիլիսոփաների, հատկապես Հեգելի և Մարքսի տեսությունների միջև էական հակադրությունը Վլ. Ներսեսյանցը բացատրում է հետևյալ կերպ. «Օբյեկտիվ պատմական սահմանափակվածության անխուսափելիության ուժով այս հայեցակարգերից յուրաքանչյուրը յուրովի բացարձակացրել է հարաբերականը պատմության տեսանելի հատվածը ներկայացնելով որպես ընդհանրապես պատմության ավարտ»<sup>17</sup>: Տվյալ դեպքում նկատի է առնվել այն, որ Հեգելը պատմության ավարտ է համարել կապիտալիզմը, իսկ Մարքսը՝ սոցիալիզմը:

Մեծ իրավագետին մտահոգում էր այն, որ սոցիալիզմից սեփականաշնորհման «վայրենի» կանոններով կապիտալիզմին անցումը կարող է էլ ավելի ետ մղել հասարակարգի որակը՝ «արթնացնելով» դրանում *ֆեոդալիզմի տարրեր*. «Ղեպի սեփականության հարաբերությունների ֆեոդալիզացում շեղումը սկիզբ դրվեց հենց մասնավորեցման գործընթացով, որի հետևանքով իրական սեփականության ձեռքբերումը դարձավ սոսկ փոքրամասնության արտոնություն, այնպես որ այդ պայմաններում ձևավորվող սեփականության հարաբերություններն իրենցից ներկայացնում են հատուկ իրավունք-արտոնությունների խայտաբղետ խառնակույտ»<sup>18</sup>: Չարգացնելով սոցիալիզմից կապիտալիզմին անցնելու գաղափարների անհեռանկարայնության դրույթը՝ Վլ. Ներսեսյանցը նշում է. «Եթե սոցիալիզմը, չնայած դրա հետ կապված չարիքին, պատմական սխալ չէ, ապա սոցիալիզմը պետք է ունենա (ի տարբերություն կապիտալիզմի) իր ապագան և, հետևաբար, սխալ է դեպի կապիտալիզմ վերադառնալու մասին պատկերացումը»<sup>19</sup>:

Սոցիալիզմի ակնհայտ փլուզումը նկատի ունենալով՝ Վլ. Ներսեսյանցը գտնում էր, որ սոցիալիզմի հաղթահարման խնդիրը չի կարելի լուծել «Կարթագենի սկզբունքով»՝ մեխանիկական ոչնչացմամբ, հակակապիտալիստական տրամադրությունները պարզապես հնարավոր չէ ոչնչացնել, այն կառաջացնի անհարկի նոր սոցիալական հակասություններ. «Այստեղ տրոփում է համաշխարհային պատմության նյարդը»<sup>20</sup>: Ի դեպ, մասնավորեցման և այդ համատեքստում բարեփոխումների հեղինակները ևս դա մասամբ գիտակցում էին և բացահայտ չէին հռչակում կապիտալիզմին անցնելու նկրտումների մասին, անգամ խուսափում էին դրա վերաբերյալ հիմնարար իրավական ակտերում

<sup>17</sup> Վ. Ս. Ներսեսյանց, Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային-պատմական առաջընթացում, էջ 69:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 19:

հիմնադրություններ ամրագրել, ինչի վառ օրինակն էր ՌԴ 1993 թ. Սահմանադրությունը:

Ցիվիլիզմի հասարակարգում Վլ. Ներսեսյանցը չէր բացառում քաղաքացիական սեփականությանը զուգահեռ նաև պետության սեփականությունը, պարզապես գտնում էր, որ դրա օբյեկտը պետք է լինի ոչ թե ապաստոցիալիզացված սեփականությունը, այլ հարկերը<sup>21</sup>: Ընդ որում, ընդգծվում էր, որ ցանկացած այլ հասարակարգի դեպքում պոստսոցիալիզմի գաղափարն ուղղակի անընդունելի է, և սոցիալիզմը այն եզակի հասարակարգն է, որ թույլ է տալիս անցում կատարելու լիարժեք պոստսոցիալիզմի:

Պոստսոցիալիզմի պայմաններում քաղաքացիական սեփականության մի որոշ հատված կարող է նաև օտարվել կամ տրվել վարձակալությամբ, սակայն հարկ է սահմանել այն անձեռնմխելի հատվածը (օրինակ՝ ընդերք, անտառներ, ջրային ռեսուրսներ և այլն), որը մշտապես մնալու է որպես հանրային սեփականություն:

Սոցիալիզմի փլուզման փուլում սկսված մասնավորեցման գործընթացը, ըստ Վլ. Ներսեսյանցի, շեղում էր, ինչը սկիզբ դրեց սեփականության հարաբերությունների ֆեոդալականացմանը: Այդ իրավիճակին հանրության մեծ մասը չի կարող համակերպվել, իսկ «... երկրում շարունակվող անդորրը, եթե դա իրականում կա, երբեք էլ հասարակության մեծ մասի համաձայնությունը չէ կատարվածի հետ, այլ սոսկ առանց բռնի գործողությունների արդարացի, խաղաղ բարեփոխումների միջոցով ստեղծված իրավիճակը փոխելու հնարավորության նկատմամբ հույսի իներցիան»<sup>22</sup>:

**Ցիվիլիզմի մեկնակետը, այսպիսով, սեփականության առնչությամբ հասարակական պայմանագրի կնքման անհրաժեշտությունն է, այդ պայմանագրի գինը՝ «...վճար է սեփականության կազմավորված բոլոր ձևերի սոցիալական օրինականացման և համընդհանուր համաձայնության, երկրի ներսում ու դրանից դուրս դրանք բացահայտելու, օրինական գոյության և կենսագործունեության համար»<sup>23</sup>:**

Թեպետ Վլ. Ներսեսյանցին հաճախ են մեղադրել պրակտիկայից կտրված, զուտ տեսական դատողություններով տարվելու մեջ, այնուամենայնիվ, կարծում ենք, նա երբեք չի կորցրել իրատես լինելու ունակությունը: Նախ, նա մի քանի տարի շարունակ եղել է պրակտիկ փաստաբան, որին առաջարկել են անգամ տեղափոխվել Ստավրոպոլի փաստաբանական գրասենյակ, որը խորհրդային տարիներին համարվում էր փաստաբանական լավագույն օղակներից մեկը: Բացի այդ, Վլ. Ներսեսյանցը շատ լավ գիտակցել է, որ անգամ իր մեթոդաբանությամբ իրականացված սոցիալական քաղաքականության արդյունքներով

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 38:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 79:

հնարավոր չէ ապահովել լիարժեք իրավահավասարություն, որ վերջինիս ցուցիչը պայմանավորված է պատմական զարգացման տվյալ փուլում իրավական մշակույթի որակով, այլ կերպ ասած՝ փաստացի իրավահավասարության նախապայմաններ ստեղծելու պետական կամքի աստիճանով ու բազմաթիվ այլ սուբյեկտիվ ու օբյեկտիվ գործոններով: Ավելին, իր գաղափարներից նա մշտապես բխեցրել է որոշակի քաղաքականության ուրվագիծ:

Վլ. Ներսեսյանը երբեք չի տարվել հավակնոտ եզրահանգումներով ու գիտական աշխատությունների «սենսացիոն» վերտառություններով, նրա մենագրություններում պարզապես հնարավոր չէ հանդիպել բանավեճ չհանդուրժող գնահատականների կամ դատողությունների: Մյուս կողմից՝ նրա առաջադրած լուծումներն այնքան այժմեական են, որ անվերապահորեն կարող են պիտանի լինել նաև մեր օրերում ծագած ճգնաժամային երևույթները հաղթահարելու համար: Ընդ որում, Վլ. Ներսեսյանը հատուկ ընդգծել է, որ իր գաղափարները բնավ չեն սահմանափակվում ռուսական իրողությամբ. *«Այն ամենը, ինչ այս աշխատությունում ասված է ցիվիլիզմի մասին՝ Ռուսաստանը նկատի ունենալով, ըստ էության, այս կամ այն ճշգրտումներով, վերաբերում է նաև ցանկացած այլ պոստսոցիալիստական երկրի, ներառյալ՝ Հայաստանը: Հայ ընթերցողն ինքը կպարզի համապատասխան ճշգրտումների բնույթը»*<sup>24</sup>:

Փորձենք ամփոփ ներկայացնել ակադեմիկոս Վլադիկ Ներսեսյանցի՝ արդի իրավական հիմնախնդիրների լուծմանը միտված իրավափիլիսոփայական հիմնարար գաղափարները:

1. Իրավունքը գրված օրենքը չէ, այն հավասարության, ազատության և արդարության եռամիասնության համընդհանուր ձևն է, որտեղ ազատությունը հավասարության օբյեկտն է, իսկ հավասարությունը, կարգավորելով այդ օբյեկտը, երաշխավորում է լիարժեք արդարություն:

2. Իրավունք և օրենք փոխհարաբերությունում օրենքը երկրորդական արժեք ունի, այն ստորադասվում է իրավունքին և ենթակա է գնահատման, քանի որ, ի տարբերություն իրավունքի, կարող է լինել լավը, ինչպիսին է իրավական օրենքը, կամ՝ վատը:

3. Գաղափարի արժեքը մեծապես կախված է ժամանակի ճիշտ ընտրությունից. հավասարապես անընդունելի է ինչպես ժամանակից շուտ, այնպես էլ անհարկի ուշացումով այն կիրառելը:

4. Սեփականությունը ազատության և ընդհանրապես իրավունքի անհրաժեշտ ու քաղաքակիրթ հողն է:

5. Սոցիալիզմին կարող է փոխարինել միայն այնպիսի հասարակարգ (ցիվիլիզմը), որում գերիշխող կլինի իրավունքը, ինչը ենթադրում է քաղաքացիական սեփականության ձևավորում:

6. Սոցիալիզմից նոր քաղաքակիրթ հասարակարգի անցումը դան-

---

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 4:

դադում է հենց հանրային սեփականության ոչ իրավաչափ բաշխման հետևանքով:

7. Ցանկացած գաղափարի կենսունակությունը մեծապես պայմանավորված է դրա իրավակիրառ պրակտիկայով, եթե տեղի են ունենում ձևախեղումներ և ձախողումներ, ուրեմն տվյալ գաղափարն ինքնին խոցելի է:

8. Սոցիալական պետության էությունը սոցիալական այնպիսի քաղաքականությունն է, որի հիմքում դրվում է տարբեր հնարավորությունների միջոցով ձևական հավասարություն իրականացնելու իրավական սկզբունքը:

Ինչ խոսք, այս շրջանակը չափազանց հարաբերական է, և հազիվ թե իրավաչափ և իրատեսական համարվի որևէ սկզբունքով սպառնիչ ցանկ կանխորոշելը: Պարադոքս է, բայց փաստ, որ գիտնականը ևս գիտակցել է բոլոր հարցերում *բացարձակ ճշմարտության հասնելու նաև իր անկարողությունը*. «*Երբեմն թվում է, թե մի լավ մտածելու դեպքում ամեն ինչ կպարզվի, բայց երբ լավ մտածում ես, հասկանում ես, որ դա միայն թվում է*»: Եվ իր այս միտքն առավել լիարժեք դարձնելու նկատառումով հավելել է. «*Հաղթահարիր քո մեջ հերոսին*»<sup>25</sup>: Բնականաբար, տվյալ դեպքում խոսքը կարծեցյալ հերոսի մասին է:

Իսկ նրա գաղափարների հետագա ճակատագրի առնչությամբ ավելի քան դիպուկ է արտահայտվել Վալենտինա Լապանան. «*Վշտիկը հեռացավ, որպեսզի չխոչընդոտի իր հայեցակարգերի ինքնուրույն կյանքով ապրելու իրավունքը*»<sup>26</sup>: Իսկ կյանքը ցույց տվեց, որ այդ հայեցակարգերը կենսունակ են և ի գորու են առանց դրանց հեղինակի աջակցության անգամ առաջընթաց ճանապարհ հարթելու:

Հասարակական կյանքի այս հարափոփոխ հորձանուտում դեռ մեծ հարց է, թե մեծագույն գիտնականի որ միտքը որ պահին ձեռք կբերի առանցքային նշանակություն, դրանցից հատկապես որը կդառնա ապագայի խնդիրների բանալին, ուստի հարկ ենք համարում այդ հարցերին պատասխանել իր իսկ խոսքերով. «*Ապագան չի կարելի հորինել կամ ստեղծել միայն անցյալի և ներկայի նյութից, քանի որ ապագայի այդ գլխավորն ու հենց այդ ապագան ստեղծողը, այսինքն՝ բուն նորը, միշտ էլ դուրս է ապագայի մասին բոլոր նախորդ պատկերացումների տեսանելիության շրջանակից*»<sup>27</sup>:

**Բանալի բառեր** –*իրավական ժառանգություն, իրավական օրենք, իրավունքի փիլիսոփայություն, բնական իրավունք, «կոշտ» պրակտիկա, «մաքուր» գաղափար, ցիվիլիզմ*

<sup>25</sup> Ланаева В. В., նշվ. աշխ., էջ 120:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>27</sup> Վ. Ս. Ներսեսյանց, Ցիվիլիզմի մանիֆեստը, էջ 51:

**ГЕВОРГ ДАНИЕЛЯН – *Философско-правовое наследие Владика Нерсесянца и актуальные проблемы развития права.*** – В статье систематизировано и обобщено философско-правовое наследие академика РАН Владика Нерсесянца, сопоставленное с актуальными проблемами отечественной правовой системы. В частности, обосновано, что политико-правовая идея или законодательная инициатива не могут считаться прогрессивными или приемлемыми, пока должным образом не учтены необходимые для их реализации особенности развития, уровень правовой культуры, материальный и социальный потенциал общества.

Сравнительный анализ приводит и к другим ключевым выводам, отправной точкой для обоснования которых послужили правовые идеи академика Нерсесянца.

**Ключевые слова:** *правовое наследие, правовой закон, философия права, естественное право, «жёсткая» практика, «чистая» идея, цивилизм*

**GEVORG DANIELYAN – *Vladik Nersesiantz's Legal-philosophical Heritage and Actual Issues of the Development of Law.*** – The author has summarized and systematized Vladik Nersesiantz's (Academician of RF, legal scholar of Armenian origin) legal-philosophical heritage. Based on the comparison of the latter one with the current issues of the Armenian legal system, the author brings forward scientific-practical conclusions, in particular, the author argues that any legal-political idea or any legislative initiative cannot be considered progressive or acceptable without reservations unless such factors as development particularities, the level of legal culture formation, material and social potential of the society, etc. required for implementation of such legislative initiative, are properly taken into account.

As a result of a comparative analysis this article also presents other conclusions of key importance which are formed, mostly, based on the legal ideas of academician Vladik Nersesyants.

**Key words:** *legal heritage, legal statute, the philosophy of law, natural right, «tough» practice, «pure» idea, civilism*



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Նորագույն պատմության վերջին տասնամյակները հասարակական հարաբերությունների ներպետական բոլոր ոլորտներում, ինչպես նաև միջազգային հարաբերությունների համակարգում այժի են ընկնում աննախադեպ փոփոխությունների դինամիկայով: Միննույն ժամանակ տեղի են ունենում տեխնոլոգիական առաջընթացի գլոբալ բեկումներ, որոնք մարդու կյանքն ու հասարակության գործառնավորումը տեղափոխում են որակապես նոր տեղեկատվական ձևաչափ:

Սակայն խիստ արդիական հիմնախնդիր է շարունակում մնալ այն հանգամանքը, որ մարդկությունը դեռևս անկարող է հասկանալ այդ նոր ձևաչափում միջազգային հարաբերությունների համակարգի և ներպետական հասարակական հարաբերությունների հակամարտաբանական բնույթը, որի պատճառով անհնար է դառնում փաստացի ձևավորված հակամարտությունների կառավարումը, քանզի այսօրվա դրությամբ բացակայում են համակարգային մակարդակում նախապես մշակված և գործի դրված իրավական կարգավորման կառուցակարգեր, որոնք հնարավորություն կստեղծեն համակարգային մակարդակում արձագանքելու այդ հակամարտություններին:

Գլոբալացման պայմաններում նշված բոլոր գործընթացների առանցքային խնդիրը **ընդհանուր իրավական տարածության ստեղծումն է:** Քանզի քաղաքական, սոցիալ-տնտեսական բոլոր գործընթացները գործառնավորում են նոր իրողություններում, և իրավական կարգավորման մոդելը մշակվում է օպերատիվ արձագանքման ռեժիմում, իսկ օպերացիոն մակարդակում առաջանում է իրավակիրառման վակուում, որը լրացվում է հին կառուցակարգով, որը փաստացի չի կարող հաղթահարել ընթացիկ կոնֆլիկտային իրավիճակը: Այսպիսով, կառավարչական բնույթի հակամարտությունը վերափոխվում է իրավականի, և գործի է դրվում մի արատավոր շրջափուլ, երբ իրավական հակամարտությունը գործի է դնում կառավարչական հակամարտություն:

Այս ամենի հետևանքով առաջանում է խիստ վտանգավոր միտում, երբ իրավունքի գերակայության սկզբունքը՝ որպես սահմանադրականության հիմնարար բազիս, կարող է փաստացի ապամոնտաժվել կամ ուղղակի ոտնահարվել կամ էլ ընդհանրապես չկիրառվել: Ընդ որում՝ սահմանադրականության հիմնական գործառնական առաքելու-

թյունը համարվում է պետականության իրավական ամրագրումը, որը գործում է բացառապես այնպիսի իրավական տարածությունում, որում կարող է առկա լինել իրավունքի ուժի սկզբունքը:

Հետևանքը լինում է այն, որ կա մ իրավունքն ընդհանրապես բացակայում է, կա մ էլ փոխարինվում է պայմանական-կոնվենցիոնալ համաձայնություններով, որոնք հիմնվում են հակամարտության կողմերի հետաքրքրությունների ու շահերի իրավիճակային պահանջարկի վրա, ուստի ինքնաբերաբար սկսում է գործել «ուժի իրավունքը»: Մրա հետևանքով մեր օրերում խարխլվում են աշխարհակարգի և միջազգային իրավունքի հիմքերը, փլվում են այնպիսի միջազգային հիմնարար համաձայնություններ, ինչպիսիք են Իրանի միջուկային ծրագրի համատեղ գործողությունների պլանը, միջին և ցածր հեռահարության հրթիռների վերացման պայմանագիրը, ազրեսիվ հարձակումների են ենթարկվում Արժույթի համաշխարհային հիմնադրամի կողմից համաձայնեցված համաշխարհային առևտրի հիմնարար սկզբունքները: Արդյունքում միջազգային իրավունքը փոխարինվում է «սահմանված կարգի վրա հիմնված կանոններով»<sup>1</sup>:

Հետևաբար իրավունքի համակարգ կառուցելիս ամենաառանցքային հարցը համարվում է այնպիսի կոորդինատների համակարգի նախագծումը, որում իրավունքի գերակայության սկզբունքը (իրավունքի ուժ) ոչ միայն համարվում է հնարավոր, այլև օբյեկտիվ վերլուծության ձևականացման հիման վրա ամրագրվում է սահմանադրականորեն՝ բացառելով իրավունքի դրսևորման կախվածությունը ուժերի աշխարհաքաղաքական դասավորվածությունից, որոնք ուղղված են ենթակայության աստիճանակարգով ազգային շահերի ուրվագծմանը<sup>2</sup>:

***Սա մարդկության առջև ծառայած քաղաքակրթական հիմնական մարտահրավերն է այն առումով, թե իրավական միտքն ու գիտությունը, ի դեմս իրավագիտության, արդյոք ունակ են հաղթահարելու այս հիմնախնդիրը, որն առնչվում է անկանխատեսելի հակամարտությունների ծագմանը և համակարգային լուծմանը, հակամարտության իրավական, ինչպես նաև իրավունքի հակամարտաբանական բնույթի բացահայտմանը, որի շնորհիվ կառավարչական գիտությունը կկարողանա իրավունքի գերակայության հիման վրա մշակված ու գործող իրավական տարածությունում ապահովել համաշխարհային հանրության սահմանադրական վարքագիծը:***

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգային հակամարտությունների ծագումնաբանության համալիր հետազոտութ-

<sup>1</sup> Выступление и ответы на вопросы министра иностранных дел России С. В. Лаврова на конференции «Средиземноморье: римский диалог». Рим, 23 ноября 2018 года // [http://www.mid.ru/posledniye\\_dobavleniye/asset\\_publisher/MCZ7HQUMdqBY/content/id/3419721](http://www.mid.ru/posledniye_dobavleniye/asset_publisher/MCZ7HQUMdqBY/content/id/3419721)

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Վ. Այվազյան, Սահմանադրականության սիստեմատեխնիկան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2018, 1(1), Եր., էջ 78:

յան շրջանակներում մենք հրատարակել ենք գիտական մի շարք հոդվածներ, որոնք նպատակաուղղված են եղել նոր ձևավորվող «Իրավական հակամարտաբանություն» գիտական դասընթացի շրջանակներում մեթոդաբանական գործիքակազմի համակարգմանը: Մույն հոդվածն ըստ էության գիտական հոդվածների թեմատիկ վերլուծական ենթահամակարգերի տրամաբանական լրացում է<sup>3</sup>:

***Ուստի ներկա դեպքում մեր նպատակն է առանձնացնել սահմանադրականության հիմնախնդիրների ծագման հիմնարար պատճառները և դրանց լուծման հնարավոր ուղիները:***

***1. Ընդհանուր իրավական տարածության հիմնախնդիրը:***

Հիմնախնդրի ծագման գլխավոր պատճառը ***սահմանադրականության միանշանակ ձևաչափի բացակայությունն*** է, քանի որ գոյություն չունի սահմանադրականության մետրիկա, որը հնարավորություն կընձեռնի համընդհանուր գնահատման ձևական տրամաբանությամբ և գործիքակազմով սահմանադրականության իրավունքի շրջանակներում գնահատելու իրավունքի գործողության համարժեքությունը իր բոլոր դրսևորումներում: Այստեղ անհրաժեշտ է շեշտադրել այն միտքը, որ ***ոչ թե սահմանադրական իրավունքը, այլ սահմանադրականության իրավունքն է հանդես գալիս որպես պետականագոյացման շրջանակներում հասարակական համալիր գործընթացի իրավական ամրագրման առանձին ինստիտուտ և գործի է դնում հենց իրավունքի՝ որպես իրավական օբյեկտի իրավական լեգիտիմության մետրիկան:*** Դրանով սահմանվում է հեգելյան «իրավունքի և ոչ իրավունքի»<sup>4</sup> շեմը, և գոյանում է իրավունքի բովանդակային գործողության տարածությունը:

Իսկ սահմանադրականությունն արդեն այդ մետրիկայով իրավունքի ցանկացած դրսևորման համարժեքության գնահատականն է: Այսինքն՝ առանց սահմանադրականության իրավունքի հնարավոր չի լինի որոշել՝ արդյոք գործող Սահմանադրության համապատասխանության ձևաչափում իրավունքն իր օպերացիոն մեկնաբանությամբ սահմանադրական է, թե ոչ, առանց սահմանադրականության մետրիկայի նախնական գնահատման համակարգի:

Մյուս հիմնարար գործոնն առանձին պետության շրջանակներում միասնական սահմանադրաիրավական տարածությունում պետականության գոյացման, կայացման և գործառնավորման իրավական ամրագրման համընդհանուր ընդունված մոտեցման գիտական հիմնա-

<sup>3</sup> Տե՛ս «Конституционализм и базовый системный конфликт структурной целостности конституционно-правового регулирования» // «Евразийский юридический журнал», 2015, № 1(80), էջ 128-132, «Принципы конституционализма в экономической системе» // «Правовое государство: теория и практика». Выпуск 1 (47), 2017, էջ 167-177, «Конфликтотенная природа принципа верховенства права и генезис системных конфликтов конституционно-правового регулирования» // «Бизнес в законе». Экономико-юридический журнал. М., 2016, выпуск 2, էջ 120-127, «Конфликтологическая природа несовершенства в системе международного права» // "Пробелы в российском законодательстве". М., 2016, выпуск 3, էջ 242-248:

<sup>4</sup> Гегель Г. В. Ф. Философия права. М.: "Мысль", 1990.

վորվածության մեթոդաբանական և մեթոդական անկարողությունն է: Նույնը վերաբերում է նաև պետությունների կոնգլոմերացիաների պարագայում ինտեգրացիոն գործընթացների հետևանքով ձևավորվող **համաշխարհային հանրությանը**, որը, կարծում ենք, չի համապատասխանում մարդկության իրավասուբյեկտության մետրիկային, որի գլոբալ քաղաքակրթական սահմանադրականության իրավունքի շրջանակներում և ոչ թե կոնվենցիոնալ ձևաչափում պետք է ձևավորվի և գործի միջազգային իրավունքը:

## **2. Իրավասուբյեկտության հիմնահարցը:**

Միննույն ժամանակ գոյություն ունի նաև «առաջնորդվողի» սինդրոմի իրավիճակ, որն էլ իր հերթին գործի է դնում կառավարման համակարգային հակամարտությունը, որտեղ կառավարող սուբյեկտը պարտավոր է լինել «առաջնորդող», սակայն նրա գործողությունները (չառ հաճախ ինքնաբերիկ) նախաձեռնվում են օպերացիոն-իրավիճակային մակարդակում՝ նպատակ հետապնդելով շտկել հետևաքնները առանց վերացնելու պատճառը: Սկսվում է կառավարման արատավոր շրջափուլ, որում մենք արձագանքում ենք վիրուսի գործողությանը, սակայն այն չենք վերացնում, քանի որ «առաջնորդողը» չգիտի դրա ծագման բնույթը, և հետևաբար բացակայում է այն կանխելու և վերացնելու համարժեք կառուցակարգը: Ակնհայտ է, որ հակամարտաբանության առումով տվյալ հակամարտությունը չի համարվում սոսկ իրավիճակային, սակայն այն ունի համակարգային կարգավիճակ (ուստի տերմինաբանական առումով որակավորվում է որպես համակարգային հակամարտություն), և շրջափակման մեջ է առնում կառավարման համակարգի և իրավական կարգավորման ունակությունը, որի հետևանքով «առաջնորդողը», մուտացիայի ենթարկվելով, վերածվում է «առաջնորդվողի», այսինքն՝ վերջինս, օժտված լինելով ծառայած խնդիրը լուծելու իրավական իշխանական լիազորություններով և կրելով պատասխանատվություն, հանդես է գալիս որպես «առաջնորդվող» արդեն ինքնակամ գործող ֆունկցիոնալի կարգավիճակով «ինչպես կատարվի» սկզբունքով առանց իր նկատմամբ որակականության վերահսկողության մետրիկայի: Այս պարագայում սահմանադրական հիմնարար սկզբունքները հաճախ ծխածածկույթի դեր են խաղում՝ օրենքի անունից քաղաքական և անձնական նպատակահարմարություն իրականացնելու համար<sup>5</sup>: Իրավական առումով դա արտահայտվում է նրանով, որ սուբյեկտն ունի «առաջնորդողի» լիազորություններ, այսինքն՝ հիմնախնդիրն ըստ իրավական պատասխանատվության առարկայի լուծելու նրան վերապահված իրավունքները համաչափ են նրա պարտականություններին՝ հարցին լուծում տալու մեթոդին տիրապետելու ունակությունների միանշանակ ապացուցվածությամբ:

<sup>5</sup> St' u «Деформации конституционализма в Евразийском пространстве». Интервью с председателем Конституционного Суда Республики Армения, доктором юридических наук, профессором Арутюняном Гагиком Гарушевичем // «Евразийский юридический журнал», 2010, 7(26) // <http://www.eurasialaw.ru/>.

Սակայն անգամ օբյեկտիվ պատճառներով դրանց բացակայության պարագայում (երբ գիտակիրատական մակարդակում հայտնի չէ բնույթը, և բացակայում է մեթոդը) նա ինքնաբերաբար գործի է դնում իրավունքի հյուսվածքների էրոզիա՝ հանդես գալով «առաջնորդողի» իրավունքներով, սակայն «առաջնորդվողի» պարտականություններով:

Այս խնդիրը հնարավոր է լուծել բացառապես հիմնարար մոտեցմամբ, այսինքն՝ հիմնարար գիտության գործիքակազմով:

Նշված գործոնը համարվում է այն հիմնարար պատճառներից մեկը, որը սահմանադրություն ստեղծելիս հանգեցնում է ինչպես սահմանադրականության իրավունքը հասկանալու և գործի դնելու անկարողության, այնպես էլ դրանից բխող օրենսդրական համակարգ ստեղծելու և իրավակիրատ մակարդակում սահմանադրական մետրիկայով ու մեկնաբանության կանոնակարգով ցանկացած օրենքի գործողություն հասկանալու անկարողության:

Հիմնարար գիտությունը կազմակերպված մտքի դրսևորման այլ ձևերից (պայմանական տեսական, իրավիճակային հայեցակարգեր, դոկտրինալ դրվագային սահմանումներ, օպերացիոն-գործիքային համակարգեր, որոնք կենտրոնանում են բացառապես գիտական մտքի կիրառական կողմի վրա, բիհեիորիստական համակարգեր<sup>6</sup>, էլ չասած՝ կեղծ կամ մերձգիտական համակարգերը, որոնք վերլուծական գործընթացը տեղափոխում են վերլուծական ադանդավորության հարթություն) տարբերվում է նրանով, որ ի սկզբանե իր առջև խնդիր է դնում ապահովել տեսական հենքի, հետազոտության գիտավերլուծական գործիքային համալիրի ամբողջականություն, փորձարարական-ապրոբացիոն հաստատումների կիրառական համակարգի և կառավարման միասնականություն: Միայն այս դեպքում են սահմանվում գիտելիքների լեգիտիմության իրավական կարգավիճակը և դրանց պրակտիկ կիրառման արդյունքների պատասխանատվությունը: **Այս առումով միանգամայն իրավացի է իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչ Գ. Ֆ. Պուխտան, որը գրում է. «Դրական իրավագիտությունը զբաղվում է արդեն գոյություն ունեցող իրավունքով, իսկ փիլիսոփայականը՝ նրանով, թե ինչպիսին պետք է լինի այն»<sup>7</sup>:**

Ուշադրության արժանի է նաև գերմանացի հայեցակարգային մեծ մտածող Կանտի առաջադրած իրավունքի սահմանադրական համակարգի՝ որպես առավելապես կայուն իրավական սուբստանցի կառուցակարգման սկզբունքը, համաձայն որի՝ ապագայի պատմությունը կերտվում է այսօր և ոչ թե նախկինում ձեռք բերված դրական փորձի և ողբալի արդյունքների, այլ որոշակի սահմանադրական իդեալի հիմքի

<sup>6</sup> Behavior, behaviour անգլերեն եզրույթը թարգմանաբար նշանակում է վարքագիծ. քաղաքական բիհեիորիզմը ձգտում է առանձին մարդու վարքագիծը մանիպուլյացիոն քաղաքական իշխանության կայունության համար: Մարդու վարքագծի բոլոր դրսևորումները ածանցվում են քաղաքական իշխանությունից: Մանրամասն տե՛ս <https://studfiles.net/preview/5458426/page:2/>

<sup>7</sup> Пухта Г. Ф. Энциклопедия права. О науке права // "История философии права". СПб., 1998, с. 377.

վրա (որը կարող է ընկալվել որպես արքայի, ապրիորի՝ ելնելով դրա անվիճելիությունից)<sup>8</sup>:

### **3. Համակարգային հակամարտությունը:**

Առանց սահմանադրաիրավական ամրագրման բովանդակային մոդելի հնարավոր չէ որոշել սահմանադրականության խախտման փաստը՝ հենվելով լոկ սահմանադրության տեքստի սուբյեկտիվ մեկնաբանության վրա: Սահմանադրությունը չի կարող գործառել առանց համակարգային ձևաչափի, որը թույլ է տալիս նույնականացնել ինչպես կարգավորման առարկան և դրա իրականացման օրենսդրական կառուցակարգը, այնպես էլ սահմանադրական մշտադիտարկման գործիքակազմը:

Անթույլատրելի է նաև սահմանադրության մեջ անխոհեմորեն և տեխնիկական առումով ամրագրել միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ներպետականի նկատմամբ:

Առանց վերը նշված սկզբնապատճառների լուծման հնարավոր չէ վերացնել իրավունքի գործողության այս կամ այն դրսևորման սահմանադրականության որոշման սուբյեկտիվ գործոնը և համապատասխանաբար ապահովել սահմանադրաիրավական կարգավորման հավասարակշռված պրակտիկա, որը պետք է հենվի «սահմանադրական դատարան-օրենսդրական համակարգ-դատական համակարգ» աստիճանակարգի վրա:

Այս խնդրի լուծված չլինելը հանգեցնում է այն բանին, որ սահմանադրաիրավական կարգավորումը անմիջական կախվածության մեջ է ընկնում վերօրենսդրական մակարդակում սահմանադրական դատարանների կողմից օրենքի գործողության գնահատման սուբյեկտիվ բաղադրիչը նվազագույնի հասցնելու կարողությունից, որը իրավական կարգավորման ինստիտուտ չէ: Մա էլ հենց բոլոր սահմանադրական դատարանների հիմնական հիվանդությունն է՝ հատկապես վերագրային սահմանադրաիրավական կարգավորման մակարդակում:

Իրավունքի էության միանշանակության բացակայությունը իրավագիտության համակարգի անկատարության հիմնապատճառն է, որի հետևանքով իրավունքի գործողությունը թե՛ տեսականորեն, թե՛ կիրառական առումով չի համալրվում լիարժեք իրավաչափությամբ, որի առկայությունը պարտադիր է սահմանադրականություն և սահմանադրաիրավական կարգավորում իրականացնելու համար: Ստեղծված իրավիճակի հանգուցալուծման համար առաջնահերթ նշանակություն է ստանում համալիր մեթոդաբանական գործիքակազմի մշակումը, որը կստանձնի իրավաբանական չափանիշների հայեցակարգային կազմավորումը իրավունքի էության հատկանիշների հիման վրա, համապատասխան կանոնակարգով կիրականացնի նրանց գործառական դրսևորման իրավական ամրագրումը և իրավակիրառման համակարգի առարկայական համալրումը, որի շնորհիվ իրավունքի գործողությունը կունենա համակարգային ամբողջականություն:

<sup>8</sup> Տե՛ս **Кант И.** Критика чистого разума. М., 1994, էջ 92:

Համակարգային մակարդակում իրավունքի գործողության ձևախեղումը մեր մշակած մոտեցման մեջ համակարգային հակամարտություն է:

Վերը նշված խնդիրը լուծելու նպատակով մենք մշակել ենք «Իրավական հակամարտաբանություն» գիտական ենթահամալիր, որի առաջնահերթ խնդիրն է իրավունքի գործողության նկարագրումն ու մեկնաբանությունը համակարգային հակամարտության ձևաչափում, իրավունքի գործողության համակարգային մակարդակում շեղման բացահայտումը, որի հետևանքով խախտվում են իրավունքի համակարգի ամբողջականությունը և իրավաչափությունը, ինչպես նաև հնարավոր է դառնում հայեցակարգային մակարդակում նկարագրել սահմանադրականության սկզբունքների ձևախեղումը և սահմանադրական իրավունքի խախտման փաստարկումը:

Սահմանադրականության համակարգային հակամարտությունների գենեզիսի մեթոդաբանական համալիրի առջև ծառայած առանցքային հարցը իրավունքի էության տեսանկյունից շարունակում է մնալ մարդկության պատմության մեջ հավաքական գոյի ամենասկանդալային ռեցիդիվին առնչվող հարցին պատասխանելու փաստացի ունակությունը. ինչպե՞ս են պետությունն ու հասարակությունը միմյանց հետ փոխգործակցում, որի պատճառով չեն արդարացնում մեկը մյուսին՝ միմյանց զգելով խճուկ և անարժան վիճակի մեջ...<sup>9</sup>:

**Բանալի բառեր** – սահմանադրականություն, իրավունքի գերակայություն, սահմանադրաիրավական կարգավորում, համակարգային հակամարտություն, իրավական համարադրականություն, իրավունքի էություն, սահմանադրականության ձևաչափ

**ВАРДАН АЙВАЗЯН – Системные конфликты конституционализма и возможные пути их решения.** – Комплексно исследуя генезис системных конфликтов конституционно-правового регулирования, автор издал ряд статей, которые систематизируют методологический инструментарий ещё только зарождающейся научной дисциплины «Правовая конфликтология». Настоящая статья является логическим дополнением аналитических блоков, по отдельности раскрытых в этих статьях.

**Ключевые слова:** конституционализм, верховенство права, конституционно-правовое регулирование, системные конфликты, правовая конфликтология, сущность права, формуляр конституционности

**VARDAN AYVAZYAN – Systemic Conflicts of the Constitutionalism and Possible Solutions.** – As part of a comprehensive study of the Genesis of Systemic Conflicts in Constitutional-Legal Regulation, the author has published a number of articles aimed at systematizing methodological tools within the emerging new scientific discipline "Legal Conflictology". This article is a logical addition to the thematic analytical blocks separately disclosed in the mentioned articles.

**Key words:** constitutionalism, rule of law, constitutional-legal regulation, systemic conflicts, legal conflictology, essence of law, format of constitutionalism

<sup>9</sup> Տե՛ս **де Ясан Э.** Государство. Челябинск, 2016, էջ 28:

---

**ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԴԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ**

Ժամանակակից սահմանադրագիտության կարևորագույն խնդիրներից են Սահմանադրության անմիջական գործողությանն առնչվող հարցադրումները: Այդ առնչությամբ գրականության մեջ և պրակտիկայում առկա են բազմապիսի, երբեմն նաև իրարամերժ տեսակետներ:

Մի շարք երկրների սահմանադրություններով<sup>1</sup>, այդ թվում՝ մինչև 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխությունները՝ ՀՀ Սահմանադրության 6 հոդվածով սահմանված էր, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Այդ կարգավորումը հաճախ հանգեցնում էր այնպիսի եզրակացությունների, որ նշված նորմը ենթադրում է բոլոր սուբյեկտների կողմից ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական կիրառում, իսկ այդ հանգամանքն իր հերթին պահանջում է դրանց մեկնաբանում:

Ներկայացված հարցադրումը վերլուծելու համար առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, թե ինչ է ենթադրում «Սահմանադրության անմիջական գործողություն» հասկացության բովանդակությունը, և արդյոք այն նույնանում է «Սահմանադրության անմիջական կիրառում» հասկացությանը:

Նշենք, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի գործողությունը բնութագրվում է որպես իրավունքի հատկանիշ (կարողություն)՝ որոշակի միջավայրում ունենալու գաղափարամոտիվացիոն ազդեցություն անհատի, անձանց հանրային վրա և արդյունքում, իր նպատակներին ու սկզբունքներին համապատասխան՝ ապահովելու մարդու իրավաչափ գործունեությունը և վարքագիծը<sup>2</sup>: Այլ կերպ՝ իրավունքի գործողությունը այն ամբողջ ազդեցությունն է, որն իրավունքն ունենում է անձանց գիտակցության և ընդհանուր առմամբ հասարակական հարաբերությունների վրա<sup>3</sup>:

Մինչդեռ իրավունքի կիրառումը՝ որպես իրավունքի իրացման ձև, պետության՝ ի դեմս վերջինիս իրավասու մարմինների, ակտիվ իշխա-

---

<sup>1</sup> Տե՛ս օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 15 հոդված, Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրության 5 հոդված և այլն:

<sup>2</sup> Տե՛ս "Элементарные начала общей теории права". М.: "Право и закон", 2003 // [https://elementary\\_law.academic.ru/92/Действие\\_права](https://elementary_law.academic.ru/92/Действие_права):

<sup>3</sup> Տե՛ս **Иванов А. А., Иванов В. П.** Теория государства и права. М., 2007 // <https://textbook.news/gosudarstva-prava-teoriya/deystvie-prava-pravovoe-vozdeystvie-pravovoe-141059.html>:



նական գործունեությունն է՝ որոշակի իրավաբանական գործ լուծելու առումով<sup>4</sup>: Այն իրավասու մարմինների՝ օրենքով սահմանված հատուկ ձևերով իրականացվող պետաիշխանական գործունեության տեսակ է՝ ուղղված կոնկրետ դեպքում իրավունքի նորմերի իրացմանը և իրավունքի կիրառման ակտերի ընդունմանը: Այլ կերպ իրավունքի կիրառումը պետաիշխանական գործունեության տեսակ է՝ միտված իրավակարգավորումները կյանքի կոչելուն<sup>5</sup>: Ներկայացված բնորոշումները հիմք են տալիս եզրակացնելու, որ իրավունքի իրացման նշված ձևն օժտված է մի շարք առանձնահատկություններով, որոնցից քննարկվող համատեքստում հարկ ենք համարում նշել այն, որ ի տարբերություն իրավունքի իրացման այլ ձևերի՝ իրավունքը կարող է կիրառվել սուկ դրա համար իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Ավելին, իրավունքի կիրառումը կրում է պետաիշխանական բնույթ, և դրա արդյունքում ընդունվող ակտերն ունեն հստակ իրավաբանական ուժ և պարտադիր են կատարման հասցեատերերի համար<sup>6</sup>:

Հետևաբար, հիշյալ համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միմյանցից լիովին տարբերվում է «իրավունքի գործողություն» և «իրավունքի կիրառում», ուստի նաև՝ «Սահմանադրության գործողություն» և «Սահմանադրության կիրառում» հասկացությունների բովանդակությունը:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ Սահմանադրության գործողությունը այն ազդեցությունն է, որը Հիմնական օրենքն ունենում է կոնկրետ սոցիալական հանրույթի և այդ շրջանակներում առաջացող հասարակական հարաբերությունների կանխորոշման ու կարգավորման տեսանկյունից: Մինչդեռ Սահմանադրության կիրառումը սահմանված հատուկ ձևերով իրականացվող իրավասու մարմինների պետաիշխանական գործունեությունն է՝ ուղղված կոնկրետ դեպքում սահմանադրական նորմերի իրացմանը և դրանց կիրառման համապատասխան ակտերի ընդունմանը: Այլ կերպ՝ Սահմանադրության կիրառումը պետաիշխանական գործունեության տեսակ է՝ ուղղված սահմանադրական կարգավորումների կյանքի կոչմանը:

Ներկայացված բնորոշումների համատեքստում ակնհայտ է Սահմանադրության ազդեցությունը կոնկրետ սոցիալական հանրույթի և այդ շրջանակներում առաջացող հասարակական հարաբերությունների կանխորոշման ու կարգավորման հարցերում: Ակնհայտ է նաև, որ

<sup>4</sup> Տե՛ս "Теория государства и права". Учебник. М.: «Зерцало», 2004 // [https:// dic. academic.ru/dic.nsf/ruwiki/364959](https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/364959):

<sup>5</sup> Տե՛ս **Григорьев А. С.** Юридическая техника: учебное пособие. Электронное издание. Тюмень: Издательство Тюменского государственного университета, 2015, էջ 184, <https://lawbook.online/yuridicheskoy-tehniki-osnovyi/primenenie-norm-prava-ponyatie-priznaki-formyi-67556.html>:

<sup>6</sup> Տե՛ս [https://dic.academic.ru/dic.nsf/enc\\_law/1840/ПРИМЕНЕНИЕ](https://dic.academic.ru/dic.nsf/enc_law/1840/ПРИМЕНЕНИЕ):

այդ ազդեցությունն անմիջական է և **ամրագրված կարգավորումների շրջանակներում** միջնորդավորված չէ այլ ակտերի ընդունման ու գործարկման անհրաժեշտությամբ: Այլ հարց է, որ Սահմանադրությունն ինքնին կարող է ենթադրել հասարակական հարաբերությունների ամբողջական կարգավորման համար այլ ակտերի ընդունման անհրաժեշտություն: Սակայն նույնիսկ նշված իրավիճակներում էլ Սահմանադրությունն օժտված է անմիջական գործողության հատկանիշով՝ **Հիմնական օրենքով ամրագրված կոնկրետ կարգավորումների շրջանակներում**: Մասնավորապես, այն դեպքերում, երբ Սահմանադրությունը նախատեսում է, որ կոնկրետ հարցերին առնչվող մանրամասները սահմանվում են օրենքով<sup>7</sup>, չի կարելի եզրահանգել, որ Հիմնական օրենքն այլևս չունի անմիջական գործողություն: Պարզապես նշված դեպքերում վերջինիս անմիջական ազդեցությունը սահմանափակվում է այն կոնկրետ հարաբերությունների կարգավորման շրջանակներով, որոնք հստակորեն ամրագրված են սահմանադրական նորմում: Ավելի կոնկրետ՝ ներկայացված իրավիճակներում Սահմանադրությունն անմիջականորեն ենթադրում է, որ քննարկվող հարցադրումները ենթակա են լրացուցիչ կանոնակարգման, իսկ այդ լրացուցիչ կարգավորումներին առնչվող մանրամասները պետք է ամրագրվեն հենց օրենքով և ոչ որևէ այլ ակտով:

Հետևաբար, Սահմանադրությունը բոլոր դեպքերում ունի անմիջական ազդեցություն ու գործողություն, և **ամրագրված կարգավորումների շրջանակներում** միջնորդավորված չէ այլ ակտերի ընդունման ու գործարկման անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է սահմանադրական նորմերի անմիջական կիրառմանը, կարծում ենք, որ տրամաբանական չէր լինի ենթադրել, որ հասարակական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից անմիջական ազդեցություն ունեցող նորմերը չեն կարող կիրառվել համապատասխան մարմինների կողմից: Այլ հարց է, որ այդ ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ հստակ չափանիշներ ու սկզբունքներ և սահմանադրական նորմերն իրացնել սոսկ վերջիններիս համատեքստում:

Մասնավորապես, առաջին կարևոր հանգամանքը, որն այդ առումով պետք է ուշադրության արժանանա, այն է, որ Սահմանադրության կիրառումը **իրավասու սուբյեկտների** կողմից իրականացվող պետաիշխանական գործունեության տեսակ է, և դրանցից բացի ցանկացած այլ մարմնի կողմից վերջինիս իրականացումն իրավաչափ համարվել չի կարող:

Կարևոր է նկատի ունենալ և այն, որ սահմանադրական նորմերը անմիջական ազդեցություն են ունենում սոսկ այն հարաբերությունների տեսանկյունից և հարաբերության այն սուբյեկտների նկատմամբ, ո-

---

<sup>7</sup> Տե՛ս օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 49, 51, 52 և մի շարք այլ հոդվածներ:

րոնց առումով կիրառելի ու վերաբերելի են: Հարաբերությունների և դրանց կանոնակարգման առումով օրինակը ներկայացրինք կոնկրետ հարցադրմանն առնչվող մանրամասները օրենքով կարգավորելու առնչությամբ սահմանադրական նորմի վերլուծության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է իրավահարաբերության կոնկրետ մասնակիցների առումով սահմանադրական նորմերի ազդեցությանն ու վերաբերելիությանը, նշենք, որ, որպես կանոն, սահմանադրական նորմի ձևակերպումից ակնհայտ է, թե վերջինս ում նկատմամբ է տարածվում և ում միջև է հարաբերություններ առաջացնում: Միևնույն ժամանակ առկա են այնպիսի սահմանադրական նորմեր, որոնց ազդեցության շրջանակը իրավահարաբերության կոնկրետ մասնակիցների առումով երբեմն միանշանակ չի ընկալվում, տարակարծությունների տեղիք է տալիս, ինչն իր հերթին հանգեցնում է դրանց ոչ տեղին և խնդրահարույց կիրառմանը:

Խոսքն առաջին հերթին մարդու սահմանադրական իրավունքների և դրանց ազդեցության շրջանակի մասին է: Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական հիմնարար իրավունքները փոխհարաբերություններ չեն առաջացնում մասնավոր սուբյեկտների միջև, հասցեագրված են սոսկ պետությանը և ուղղակիորեն չեն սահմանափակում մասնավոր սուբյեկտներին:

Մի շարք գործերով ԱՄՆ գերագույն դատարանը, օրինակ, մատնանշել է, որ սահմանադրական նորմերը, այդ թվում՝ սահմանադրական համապատասխան փոփոխությունները, վերաբերում են բացառապես պետության գործունեությանը և ոչ թե որևէ մասնավոր սուբյեկտի: Միևնույն ժամանակ, հիշյալ մարմնի դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ ոչ պետական սուբյեկտի գործունեությունը որոշակի հանգամանքներում կարող է դիտարկվել որպես «պետական գործունեություն», հետևաբար սահմանափակված լինել սահմանադրական իրավունքներով: Դրանք, մասնավորապես, այն իրավիճակներն են, երբ ոչ պետական մարմնի գործողություններն անմիջականորեն ուղղորդվում են պետական իշխանության կողմից, երբ իրականացվում են պետական հարկադրանքի կամ էական խրախուսանքի արդյունքում, երբ այդ գործողություններն իրականացվում են պետության մասնակցությամբ, ինչը կարող է արտահայտվել կառավարման, դրամական կամ գույքային միջոցների տրամադրմամբ, կամ երբ, չնայած ակնհայտ պետական ներգրավվածության բացակայության, այդ գործողությունները վերաբերում են այն լիազորություններին և գործառույթներին, որոնք սովորաբար իրականացնում է պետական իշխանությունը: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ նշված բոլոր իրավիճակներում սահմանադրական իրավունքների վերաբերելիությունը մասնավոր գործունեությանն անուղղակի է, քանզի բոլոր ներկայացված դեպքերում պետությունն է իրականում պատաս-

խանատու կոնկրետ գործողությունների համար:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը ևս նշել է, որ հիմնական իրավունքների առաջնային նպատակը մարդու իրավունքների պաշտպանությունն է պետական իշխանության միջամտություններից: Միաժամանակ դատարանը հավասարապես կարևորել է այն հանգամանքը, որ Հիմնական օրենքն արժեքներից զուրկ փաստաթուղթ չէ: Հիմնական իրավունքներին առնչվող բաժինը ստեղծում է արժեքների նպատակային համակարգ, որը մեծապես ամրապնդում է հիմնական իրավունքների գործողությունը: Այսպիսով, ակնհայտ է, որ հիմնական իրավունքներն ազդում են նաև մասնավոր իրավունքի զարգացման վրա: Վերջինիս ցանկացած կարգավորում պետք է համապատասխանի արժեքների տվյալ համակարգին, և ցանկացած դրույթ պետք է մեկնաբանվի արժեքների այդ համակարգի ոգով: Այսպիսով, Գերմանիայում հիմնական իրավունքները կատարում են նաև մասնավոր իրավունքի զարգացման տեսանկյունից ազդեցություն ունեցող կարևոր գործառույթ և, որպես այդպիսին, անուղղակիորեն սահմանափակում են մասնավոր սուբյեկտներին, ինչը գրականության մեջ որակվում է «հորիզոնական ազդեցություն» կամ «երրորդ կողմի ազդեցություն» եզրույթներով:

Հետևաբար, թեև սահմանադրագիտության շրջանակներում ընդունված ընդհանուր տրամաբանությունն այն է, որ հիմնական իրավունքներն ունեն անմիջական ուղղահայաց ազդեցություն, սակայն կոնկրետ հանգամանքների առկայության պարագայում բացառված չեն նաև դրանց միջնորդավորված հորիզոնական ազդեցությունն ու դերակատարությունը<sup>8</sup>:

Ինչ վերաբերում է քննարկվող հարցադրմանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ թեև 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածը նախատեսում էր, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, այդուհանդերձ, 47 հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Յուրաքանչյուրի վրա դրված նշված պարտականությունը հաճախ ընկալվում էր որպես հիմնական իրավունքների գործողությունը նաև մասնավոր սուբյեկտների հարաբերությունների վրա տարածելու հնա-

---

<sup>8</sup> Տե՛ս **Chirwa M. D.** The Horizontal Application of Constitutional Rights in a Comparative Perspective, **Barak A.** Constitutional Human Rights and Private Law // Review of Constitutional Studies, Vol. III, № 2, Yale Law School Legal Scholarship Repository. 1-1-1996, էջ 219-281, **Thomas Schmitz**, Basic Elements of Fundamental Rights Doctrine, [http://www.iuspublicum-thomasschmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz\\_FR-Doctrine\\_Jakarta-2014.pdf](http://www.iuspublicum-thomasschmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz_FR-Doctrine_Jakarta-2014.pdf) :

րավորություն, ինչը, սակայն, ինչպես նշեցինք, հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական պատկերացումներին:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը 2014 թ. ընդունված ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում արձանագրեց, որ նշված ընկալումը հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական պատկերացումներին, և այն համարեց նոր հայեցակարգային մոտեցումներ պահանջող խնդիր<sup>9</sup>: Արդյունքում՝ նշված դրույթը տեղ չգտավ 2015 թ. դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության տեքստում:

Միննույն ժամանակ, ինչպես արդեն նշեցինք, թեև ուղղահայաց գործողության դոկտրինի տեսանկյունից հիմնական իրավունքները հասցեագրված են պետությանը, սակայն վերջինս ամբողջանում է միջնորդավորված հորիզոնական գործողության դոկտրինով, համաձայն որի՝ իրավունքի իրացման ընթացքում ամեն դեպքում հարկ է հաշվի առնել սահմանադրական համապատասխան արժեքները:

Հետևաբար, վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիմնական իրավունքների առնչությամբ հայեցակարգային մոտեցումների հիմքում պետք է ընկած լինի այն ընկալումը, որ հիմնական իրավունքներն անմիջականորեն հասցեագրված են դրանցով սահմանափակված պետությանը, սակայն, այդուհանդերձ, մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում համապատասխան լուծումները պետք է գտնել՝ սահմանված սահմանադրական արժեքներին համապատասխան ու դրանց համատեքստում: Այդ առումով հետաքրքիր է, օրինակ, Շվեյցարիայի 1999 թ. Սահմանադրության 35 հոդվածը, համաձայն որի՝ իշխանությունները հոգ են տանում այն մասին, որ հիմնական իրավունքները, որքանով որ դա հնարավոր է, իրացվեն նաև մասնավոր անձանց միջև հարաբերություններում:

Հիշյալ համատեքստում կարևոր է նաև նկատի ունենալ, որ վերը դիտարկված որոշակի իրավիճակներում մասնավոր սուբյեկտների գործողությունները կարող են դիտվել որպես «պետական գործունեություն» և սահմանափակված լինել հիմնական սահմանադրական իրավունքներով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ մարդու սահմանադրական իրավունքների կիրառումն անհրաժեշտ է իրականացնել նշված հանգամանքները նկատի ունենալով, իսկ վերջիններիս անմիջական գործողության ու կիրառման տեսությունները կարող են

---

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Եր., 2014 թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

հիմնված լինել հենց այդ հանգամանքների հաշվառմամբ ձևավորվող հայեցակարգային մոտեցումների վրա:

Ամփոփելով նշենք, որ սահմանադրական նորմերն ունեն անմիջական ազդեցություն միայն այն հարաբերությունների տեսանկյունից և հարաբերության այն սուբյեկտների նկատմամբ, որոնց առումով կիրառելի ու վերաբերելի են, իսկ նշված նորմերը կարող են կիրառել պետաիշխանական լիազորություններով օժտված միայն այն մարմինները, որոնք այդ առումով իրավասու են:

**Բանալի բառեր** – *Սահմանադրության անմիջական գործողություն և անմիջական կիրառում, սահմանադրական իրավունքներ, ուղղահայաց ազդեցություն, հորիզոնական ազդեցություն*

**АНАИТ МАНАСЯН – Непосредственное действие Конституции в контексте современной конституционно-правовой мысли.** – В статье рассматриваются вопросы непосредственного действия и непосредственного применения Конституции. Утверждается, что содержание указанных понятий различно. Действие Конституции – это воздействие, которое она оказывает на конкретное социальное сообщество, регулируя создающиеся в его рамках общественные отношения. Тогда как применение Конституции – это осуществляемая в предусмотренном порядке государственно-властная деятельность правомочных субъектов, направленная на реализацию конституционных норм в конкретном деле, и принятие соответствующих актов их применения.

**Ключевые слова:** *непосредственное действие и непосредственное применение Конституции, конституционные права, вертикальное действие, горизонтальное действие*

**ANAHIT MANASYAN – Direct Effect of the Constitution in the Context of the Modern Constitutional-Legal Thought.** – Issues with regard to the direct effect and direct application of the Constitution are considered in the article. The Author concludes that the content of the mentioned terms, in their essence, differ from each other. In Author's opinion, effect of the Constitution is the influence that the Basic Law has on the concrete social society from the viewpoint of predetermination and regulation of the social relations, formed within the frames of it. Meanwhile, the application of the Constitution is the state-power activity of competent bodies, implemented in the defined special manner, and aimed at the realization of constitutional norms in a concrete case and adoption of corresponding acts of their application.

**Key words:** *Direct effect of Constitution and direct application of Constitution, constitutional basic rights, application of basic rights, vertical effect, horizontal effect*

---

**ՑԻՎԻԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ՀԱՅ ԱԶԳԻ  
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՏԱՐՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ**

Մարդկության պատմության ընթացքում շատ են եղել հասարակությունները ձևափոխելու, դրանցում առավել նախընտրելի տարբերակներ կենսագործելու տեսություններ, ինչպես նաև դրանք կիրառելու փորձեր: Որոշ դեպքերում դրանք հաջողվել են մասնակիորեն, երբեմն էլ ձախողվել: Գրեթե ոչ մի դեպքում, սակայն, առանձին տեսության և առանձին նախընտրելի հասարակարգի ամբողջական կենսագործում չի եղել: Եվ դրա հիմնական պատճառն առաջ քաշված տեսական պատկերացումների և իդեալական գաղափարների՝ առանձին վերցրած ազգի, հասարակության կեցույթում գործնականում լիարժեքորեն կենսագործելու անհնարինությունն է եղել:

Սա բացատրվում է նաև նրանով, որ ազգերն ու հասարակությունները, լինելով համաշխարհային գործընթացների փոխազդեցության ներքո, ազդելով և ազդվելով արտաքին աշխարհի գործոններից, այնուամենայնիվ ունեն կեցության ընկալման սեփական «Ժամանակը»<sup>1</sup>: Եվ որևէ տեսություն, ինչ-որ հասարակարգի պատկերացում դժվար թե կարողանան դառնալ մի ամբողջ ազգի ու հասարակության կեցության «շապիկ», եթե դրանք չեն բխում ազգային էությունից և չեն ձևավորվում այդ ազգի քաղաքակրթական հասունացման ընթացքում:

Ամեն ազգ ու հասարակություն, ունենալով սեփական տեղը համաշխարհային պատմության բաբախող նյարդի վրա, ապրելով ազատության և հավասարության պայքարի սեփական առաջընթացը, որոշակիացնելով ապագայի սեփական տեսլականը, գտնվում է քաղաքակրթական հասունացման իր ուրույն հունում: Դրանից բացառություն չեն նաև հայ ազգը և Հայաստանի Հանրապետության հասարակությունը:

Մենք, ըստ էության, գտնվում ենք քաղաքակրթական հասունացման այն փուլում, երբ ազգային էությունը ներքին և արտաքին գործընթացների բերումով բյուրեղանում է այն աստիճանի, որ առաջացնում է ազգի «ինքնուրույն գիտակցություն», որն էլ իր հերթին՝ ինքնիշխան պետություն ունենալու պահանջ:

XX դարի վերջին ձեռք բերելով անկախություն՝ հայ ազգն ու ազգի

---

<sup>1</sup> Տե՛ս **Տ. Վ. Միմոնյան**, Ժամանակի ընկալման և սոցիալական սկզբնական ու ընթացիկ հիշողության դերը անկայուն և անցումային հասարակություններում / Պետություն և իրավունք, թիվ 1(51), 2011, էջ 56-67:

հայրենաբնակ հատվածը առավել ևս XXI դարի երկրորդ տասնամյակում գործնականում զգում էին ինքնիշխան պետություն ունենալու կարևորությունը: Եվ սա ոչ միայն արտաքին քաղաքականության ասպարեզում, այլ նաև երկրի ներսում սոցիալ-տնտեսական, պետաիրավական հարմար և արդյունավետ կառուցակարգեր ձևավորելու և դրանք ազատորեն օգտագործելու բնագավառում:

Որոշումներ ընդունելու հարցում հարաբերականորեն ազատ և անկաշկանդ լինելն արդիական է XXI դարի երկրորդ տասնամյակում, քանի որ սոցիալ-քաղաքական ասպարեզում արդեն լսելի է դառնում անկախության ժամանակաշրջանում ձևավորված սերնդի ձայնը, որը բացակայել է հայկական իրականությունում մոտ վեց հարյուր տարի, ինչպես նաև հանդարտվել են խիստ հակախորհրդային, հակակոմունիստական և հակակապիտալիստական տրամադրությունները: Այս պայմաններում քաղաքակրթական առումով ազգային հարցերի շուրջ որոշումներ կայացնելու համար ողջախոհության առավել բարձր մակարդակ է ենթադրվում:

Ավելին, միայն նման գիտակցության հասած հասարակությունն է ունակ կատարելու ազատ ընտրություն սոցիալ-տնտեսական եղած կառուցակարգերից՝ որոշակիացնելով այն միակը, որը կարող է համապատասխանել ազգային էության հասունացման ընթացքին: Այո, հենց ընթացքին և ոչ թե մակարդակին, քանի որ չափազանց կարևոր է շեշտը դնել գործընթացի վրա՝ որպես հարընթաց փոփոխության արտահայտություն: Հետևաբար ինչ տեսություն ու պատկերացում էլ փորձենք որդեգրել հայկական արդի իրականությունում կենսագործելու համար, ընդգծված ձևով պետք է որոշակիացնենք հասարակական հարաբերությունների շարժընթացը և ոչ թե զարգացման մակարդակը:

Եթե փորձում ենք այս համատեքստում դիտարկել հայ անվանի իրավաբան Վ. Ներսեսյանցի հեղինակած «Ցիվիլիզմի մանիֆեստը»<sup>2</sup>՝ որպես «պատմության ավարտի» յուրահատուկ կանխատեսում և նախկին հասարակարգերի դրական կողմերը մատնանշող փաստաթուղթ, ապա բավականին համալիր պատկեր ենք ստանում թե՛ հայկական իրականությունում դրա հնարավոր կիրառման և թե՛ դա կենսագործելու առումով առավել արդյունավետ սոցիալ-տնտեսական և պետաիրավական կառուցակարգ ձևավորելու հարցում:

Իսկ ինչո՞ւ հենց այս փաստաթուղթը: Պատճառը տրամաբանական է: Իրավաբանական գրականությունում, կարծես թե, սա միակ գիտական համալիր աշխատանքն է, որ փորձում է իմաստավորել սոցիալիստական հասարակարգից կապիտալիստականի անցումը՝ դիտարկելով այն ոչ թե նախկին սխալից դեպի նոր ճշմարտություն տա-

<sup>2</sup> Տե՛ս **Нерсесянц В. С.** Манифест о цивилизме. (Национальная идея России во всемирно-историческом прогрессе равенства, свободы и справедливости) // <http://www.trinitas.ru/rus/doc/0001/005a/00011082.htm>



նող պատմական ընթացք կամ ազգերի՝ ընդհանրապես սոցիալիստական կացութիւնը պատմական սխալ կամ ժամանակավրէպ որակող քայլ, այլ պարզապէս պատմական իրադարձություն, որը տեղավորվում է ազգերի և հասարակությունների քաղաքակրթական զարգացման օրինաչափությունում կամ որպէս դրա ուրույն դրսևորում:

Այս մոտեցումը ամբողջությամբ կիրառելի է հայկական իրականության համար, քանի որ հայ ազգի հայրենաբնակ հատվածը, որը այսօրվա Հայաստանի Հանրապետության հասարակությունն է, անցել է սոցիալիստական հասարակարգի միջով, սեփական կեցության պետաիրավական բովանդակությունը շատ դեպքերում իմաստավորել է այլ հասարակարգի առանձնահատկություններով, ինքն էլ մերժել է այդ ամենը՝ անցնելով կապիտալիստական տիպի հասարակարգի: Եվ արդյունքում հետխորհրդային մյուս հասարակությունների նման չի կարողացել որոշակիացնել հասարակարգի՝ իր համար առավել արդյունավետ տարբերակը՝ անընդհատ բախվելով նախկինի և ներկայի դրական ու բացասական կողմերին ու դրանց անհաշտ անհամատեղելիությանը:

Իսկ դրա լուծման բանալին տվել է Վ. Ներսեսյանցը՝ փորձելով նոր իրականությունում համատեղել նախկին՝ սոցիալիստական տնտեսավարության ձևի դրական կողմերն իր առաջ քաշած ազատական իրավամտաձողության առաջադիմական կողմերի հետ՝ այս կերպ տալով հետսոցիալիստական հասարակարգի սեփական տեսլականը:

Միննույն ժամանակ այս գործընթացում նա ընդգծում է իրավունքը՝ որպէս *«մարդկության համաշխարհային պատմությունում ազատության մաթեմատիկա, որը մարդկանց՝ որպէս իրավաբանորեն ազատ անհատների հավասարության առաջընթաց է»*<sup>3</sup>:

Հետսոցիալիստական հասարակարգի այս ձևը Ներսեսյանցն առանձնացրեց որպէս ուրույն հասարակարգ, որն անվանեց ցիվիլիստական: Եվ քանի որ սոցիալիզմի ու կապիտալիզմի անտագոնիստական ու հարատև բախման հիմնական անկյունաքարը մասնավոր սեփականությունն էր, նա ցիվիլիստական հասարակարգում փորձ արեց լուծել այս հարցը հաշտեցման տարբերակով: Այս կերպ Ներսեսյանցը առաջ բերեց ազատական հասարակությունում քաղաքացիական սեփականության հայեցակարգը:

Այս մոտեցումը իրավաբանական տեսանկյունից ամենից տրամաբանականն էր: Ինչպէս ինքն էր նշում *«Ցիվիլիզմի մանիֆեստում»*. *«Իրավունքի տեսանկյունից բոլոր քաղաքացիները սոցիալիստական սեփականության ժառանգորդներն են հավասար չափով և հավասար իրավունքով»*<sup>4</sup>: Ավելին՝ նա պնդում էր, որ *«միայն քաղաքացիական սե-*

<sup>3</sup> **Нерсесянц В. С.** Манифест о цивилизме. 1. Социализм и постсоциализм // <http://www.trinitas.ru/rus/doc/0001/005a/00011082.htm>

<sup>4</sup> **Нерсесянц В. С.** Манифест о цивилизме. 3. Цивилизм и гражданская собственность каждого // <http://www.trinitas.ru/rus/doc/0001/005a/00011082.htm>

*փականության ճանաչումը կտա իրավաչափության, կայունության և հասարակական պաշտպանվածության, ինչպես նաև սեփականության մյուս բոլոր ձևերի իրական սոցիալական լեգիտիմություն և երաշխիք*<sup>5</sup>: Իսկ քաղաքացիական սեփականությունն ասելով նա հասկանում էր սեփականության այն ձևը, որը քաղաքացու նվազագույն, անօտարելի սեփականությունն էր, և վերջինս մյուս քաղաքացիների հետ պետք է հավասարաչափ մաս ունենար ընդհանուր սեփականությունից և ստանար նաև դրանից որոշակի շահութաբաժին՝ որպես այդ պետության քաղաքացի:

Սակայն նա սեփականության այս ձևն առաջ էր բերում 1990-ական թվականների համընդհանուր, լայնամասշտաբ և հիմնականում քառասյին մասնավորեցման գործընթացը մեղմելու նպատակով, որը կնվազեցներ այդ նույն մասնավորեցման ռիսկերը և այն բացասական հետևանքները, որոնց ականատեսը եղանք բոլորս XX դարի վերջին և դեռ շարունակում ենք զգալ մինչ այսօր:

Պատմական այն փուլը, որի համար գրվեց «Ցիվիլիզմի մանիֆեստը», կորցրեց դա կիրառելու հնարավորությունը: Եվ այսօր մենք կրկին դիտարկում ենք դրանում առկա քաղաքացիական սեփականության ձևի կենսագործման հավանականությունը՝ որպես սոցիալական բեռնացման ու «վուլգար» կապիտալիզմի բացասական որակները մեղմելու գործիք: Սակայն այսօրվա իրականությունը բավականին համալիր է, քանի որ հասարակության զգալի հատվածն արդեն մտածում է ոչ թե համայնական սեփականություն ունենալու, այլ սեփական ունեցվածքը բազմապատկելու մասին: Այսինքն՝ կրկին առաջանում է քաղաքացիական սեփականություն ունենալու անհրաժեշտության գիտակցումը, ինչը, սակայն, սոցիալական շարժընթացի ու քաղաքակրթական հասունացման խնդիրն է արդեն:

Կրկին անդրադառնալով հայ ազգի էության քաղաքակրթական հասունացմանը և դրա համատեքստում Ներսեսյանցի «Ցիվիլիզմի մանիֆեստում» առաջ քաշված հասարակարգի ու քաղաքացիական սեփականության կիրառման հավանականությանը՝ պետք է նշել, որ թեև դրանք պատմական առումով համատեղելի են և տեսականորեն անգամ մոտարկելի, սակայն բաց է մնում այն հարցը, թե ինչպես է հնարավոր այն գործնականում կիրառել, եթե բացակայում են դրա կենսագործման համար անհրաժեշտ գործիքակազմը և, որ ամենակարևորն է, հասարակական պահանջը կամ առնվազն դրա անհրաժեշտության գիտակցումը:

Ֆ. Նիցշեն գրում էր. «*Հասունացել են քո պտուղները, սակայն դու քո պտուղների համար դեռ չես հասունացել*»: Այս խոսքը դիպուկ է նաև մեր պարագայում, երբ շատ գաղափարներ ծնվում են մեզանում, սա-

---

<sup>5</sup> Նույն տեղում:

կայն մենք ինքներս դեռևս բավարար հասունացած չենք լինում այդ գաղափարները կենսագործելու համար: Ավելին՝ հասունացած չենք լինում քաղաքակրթական տեսանկյունից:

Հետևաբար, հայ ազգի քաղաքակրթական հասունացման ընթացքն է, որ պետք է առաջ բերի քաղաքացիական սեփականություն՝ ձևավորելու սոցիալական գիտակցումն ու պահանջը, իսկ այնուհետև՝ դրա կենսագործման ինստիտուցիոնալ հիմքերը: Իսկ այդ գործընթացի քաղաքակրթական և պատմական նախադրյալներն արդեն առկա են: Հայ ազգն անկախության ձևավորումից ու պետականաշինության զգայական մակարդակից արդեն դանդաղ անցում է կատարում այդ նույն պետականաշինության դատողական մակարդակ, որտեղ սկսում են գերակայել ոչ թե հույզերը, որոնք այդքան կարևոր են հանուն անկախության պայքարում, այլ հաշվարկը՝ որպես պետականության համար իրական ինքնիշխանություն ձևավորելու գրավական: Այս փուլի զարգացման ընթացքում են միայն հնարավոր քաղաքացիական սեփականության անհրաժեշտության սոցիալական պահանջի ձևավորում և միգուցե նաև կենսագործում:

**Բանալի բառեր** – *քաղաքակրթական հասունացում, քաղաքացիական սեփականություն, սոցիալիստական սեփականություն, հասարակական գիտակցություն, հարակալական պահանջ, «Յիվիլիզմի մանիֆեստ»*

**TARON СИМОНЯН – Цивилистический общественный порядок в контексте цивилизационного развития армянского народа.** – Анализируя Манифест о цивилизме В. Нерсисянца применительно к современной армянской действительности, нужно особо остановиться на цивилизационном развитии народа. Это очень важно, поскольку аппроксимация теории или даже общественного порядка к экзистенциальной реальности нации невозможна, если у них нет линий соприкосновения. В статье речь идёт о сопоставлении нашей социальной действительности с тем, что трактуется в Манифесте о цивилизме, с учётом цивилизационного развития армянского народа.

**Ключевые слова:** *цивилизационное созревание, гражданская собственность, социалистическая собственность, социальное сознание, социальный спрос, Манифест о цивилизме*

**TARON SIMONYAN – Civilistic Public Order in the Context of Armenian NationMaturement.** – While discussing V. Nersesianz’s CivilisticManifesto in the framework of the Armenian reality of XXI century, one can emphasize the importance of the civilizational maturation of a nation. This is very important, because there can be no approximation of a theory or even a social order to a nation’s existential reality, if they have no lines of convergence. This paper brings to light the possibility of matching the Armenian social reality to that of drafted in the CivilisticManifesto taking into account the civilizational maturation of the Armenian nation.

**Key words:** *civilizational maturation, civilian property, socialist property, social consciousness, public demand, Civilistic Manifesto*

---

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

### ՎԻԿՏՈՐՅԱ ՕՉԱՆՅԱՆ

*Հնարավոր չէ ավելի լավ աշխարհ կառուցել  
առանց ավելի լավ անհատների:*

Մ. Կյուրի

Սոցիալական պետության հայեցակարգը ավելի քան հարյուր հիսուն տարվա պատմություն ունի: Կասկած չի հարուցում, որ հասարակության, իրավունքի և պետության զարգացման գործընթացին զուգահեռ դինամիկ զարգանում է նաև սոցիալական պետության հայեցակարգը՝ որպես հասարակություն-պետություն և մարդ-պետություն հարաբերությունների էական բնութագիր: Համաշխարհային և ներհայաստանյան զարգացումների համատեքստում Հայաստանի երրորդ Հանրապետության համար սոցիալական պետության հայեցակարգի վերաիմաստավորումն այսօր, առավել քան երբևէ, արդիական է:

Սոցիալական պետության հայեցակարգի փոփոխությունները հասկանալու համար անհրաժեշտ է հայացք նետել դրա ձևավորման և զարգացման պատմությանը: Առաջին անգամ «սոցիալական պետություն» եզրույթը («Sozialstaat») շրջանառության մեջ է դրել Լորենց ֆոն Շտայնը<sup>1</sup>, այնուհետև որպես պետության կողմից առաջարկվող սոցիալական ծառայությունների փաթեթ այն տեղ է գտել Օտտո ֆոն Բիսմարկի պահպանողական բարեփոխումներում: Այս եզրույթի հիմնական բովանդակությունն այն է, որ թե՛ հասարակության, թե՛ պետության հիմնական նպատակն անհատի ազատ զարգացումն ապահովելն է, հիմնական արժեքը՝ մարդու ազատությունն ու արժանապատվությունը, հետևաբար՝ պետությունը պետք է հոգ տանի անհատի բարեկեցության մասին: Շտայնը պետությունը չի դիտում որպես դասակարգային պայքարի ասպարեզ, այլ կարծում է, որ այն կարևորագույն դեր է խաղում սոցիալական հակասությունները հարթելու և սոցիալական համերաշխություն հաստատելու գործում: Պետությունը, ըստ նրա, պարտավոր է ապահովել բացարձակ իրավահավասարություն հասարակության բոլոր դասակարգերի և յուրաքանչյուր ինքնորոշվող անհատի համար, ինչպես նաև նպաստել իր բոլոր քաղաքացիների տնտեսական և սոցիալական առաջընթացին, որովհետև վերջին հաշվով քա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Koslowski, Stefan** (2017), “Lorenz von Stein as a disciple of Saint-Simon and the French Utopians”. *Revista europea de historia de las ideas políticas y de las instituciones públicas*, էջ 11, <http://www.eumed.net/rev/rehipip/11/koslowski.html>

ղաքացիների բարեկեցությունը պետության առաջնության նախապայման է, և հենց այս առումով կարելի է խոսել սոցիալական պետության մասին, պետության, որի գլխավոր նպատակը տնտեսական և սոցիալական առաջընթացն է<sup>2</sup>:

Հետագայում սոցիալական պետության հայեցակարգը զարգացում ապրեց. այն կարևորեց նաև պետության կողմից մարդու բարեկեցությանն ուղղված նպատակային քաղաքականություն իրականացնելը, առաջին հերթին և հիմնականում՝ սոցիալական ապահովագրություն, սոցիալական ու առողջապահական հատկացումներ և ծառայություններ: Սոցիալական պետության հայեցակարգը նույն եզրույթով կիրառվում է Գերմանիայում, Իտալիայում, Թուրքիայում, Ռուսաստանում, իսկ Ֆրանսիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում՝ լատիներեն «providentia» բառի իմաստային նշանակությամբ՝ «պետություն՝ հոգատար պահպան»:

Սոցիալական պետության հայեցակարգը զարգացում է ապրել նաև սկանդինավյան պետություններում: 1929 թ. Շվեդիայի վարչապետ Փ. Հանսոնը առաջ քաշեց «Folkhemmet»-ի տեսությունը, որի իրականացման շնորհիվ Շվեդիայում էապես բարձրացավ հասարակության կենսամակարդակը<sup>3</sup>:

Սոցիալական պետության հայեցակարգի զարգացման մեկ այլ ուղղություն է համընդհանուր բարեկեցության պետությունը («welfare state»), որը տարածում է գտել անգլախոս երկրներում առաջին համաշխարհային պատերազմից հետո: Համընդհանուր բարեկեցության պետության տեսության առաջացումը կապում են Մեծ Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայելի այն գաղափարի հետ, որ իշխանության միակ պարտականությունը ժողովրդի բարեկեցության ապահովումն է<sup>4</sup>: Հետագայում համընդհանուր բարեկեցության պետության հայեցակարգի զարգացման գործում մեծ ներդրում ունեցավ բրիտանացի սոցիոլոգ Թոմաս Համֆրի Մարշալը, որի բնորոշմամբ՝ ընդհանուր բարեկեցության պետությունը ժողովրդավարության, բարեկեցության և կապիտալիզմի հատուկ համադրություն է, որի միջոցով պետությունը յուրաքանչյուրի համար ապահովում է նվազագույն բարեկեցության մա-

<sup>2</sup> St' u **Штейнфон Л.** История социального движения Франции с 1789 г., հղումն ըստ **Милецкий В. П.** Социальное государство: эволюция идей, сущность и перспективы становления в современной России // "Политические процессы в России в сравнительном измерении". СПб., 1997, էջ 82:

<sup>3</sup> **Folkhemmet** - թարգմանաբար՝ ժողովրդի տուն: Պետք է նշել, որ թեև սոցիալական պետության շվեդական մոդելը հաճախ կոչում են «շվեդական սոցիալիզմ», սակայն folkhemmet-ը սոցիալ-դեմոկրատական քաղաքական գաղափարախոսության ծնունդ է, որտեղ էգալիտարիզմն ունի բոլորովին այլ իմաստ, քան սոցիալիստների մոտ. այն չի ենթադրում մասնավոր սեփականության վերացում կամ տնտեսական կացութաձևի փոփոխություն:

<sup>4</sup> St' u **Disraeli, Benjamin.** Sybil, or the Two Nations, Book 4, Chapter 12, [www.gutenberg.org](http://www.gutenberg.org), Ebook #3760:

կարդակ, որպեսզի նպաստի անհատի լիարժեք մասնակցությանը ազատական-ժողովրդավարական հասարակության մեջ: Որպես համընդհանուր բարեկեցության պետության մոդելին հասնելու միջոց Մարշալը առաջին հերթին նկատի ուներ եկամտի արդարացի վերաբաշխումը պրոգրեսիվ հարկման միջոցով, իսկ որպես մոդելի հիմնական բնութագրիչներ՝ անվճար կրթությունն ու առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական պաշտպանությունը սոցիալապես խոցելի խմբերի համար<sup>5</sup>: Հարկ է նշել, որ Մարշալը 1956-1960թթ. զբաղեցրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հասարակական գիտությունների բաժնի ղեկավարի պաշտոնը և համահեղինակ է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի նախագծի, որում մարդու հիմնական իրավունքների համատեքստում էապես արտացոլվել են պետության՝ համընդհանուր բարեկեցության ապահովման պարտականությունը և գործառույթները:

Մասնագիտական գրականության մեջ առկա է բանավեճ այն մասին, թե ինչով են միմյանցից տարբերվում «սոցիալական պետություն» և «համընդհանուր բարեկեցության պետություն» հասկացությունները: Տարածված տեսակետներից մեկն այն է, որ սոցիալական պետության հայեցակարգը ենթադրում է պետության հոգածություն բնակչության սոցիալապես խոցելի խմբերի (երեխաներ, ծերեր, հաշմանդամություն ունեցող անձինք) նկատմամբ, մինչդեռ համընդհանուր բարեկեցության պետության հայեցակարգը կառուցված է բոլորի համար հավասար հնարավորություններ ապահովելու սկզբունքի վրա, և օբյեկտ է դիտվում ողջ հասարակությունը:

Այնուամենայնիվ, ժամանակակից զարգացումները հասարակական գիտությունների ոլորտում, ինչպես նաև կոնվերգենցիոն գործընթացները և փոփոխությունները տարբեր պետությունների օրենսդրություններում և քաղաքականություններում վկայում են այն մասին, որ «սոցիալական պետություն» և «համընդհանուր բարեկեցության պետություն» հասկացությունների միջև տարբերությունները պայմանական են: Ավելին, սրանցից որևէ մեկի օգտագործումը հաճախ պայմանավորված է տվյալ պետության պետաիրավական ավանդույթով, մայրցամաքային և անգլո-ամերիկյան իրավական համակարգին պատկանելու հանգամանքով, աշխարհագրական դիրքով, պետաիրավական հայեցակարգի վրա այս կամ այն իրավական ավանդույթի ազդեցությամբ ու այլ գործոններով և ոչ միշտ է արտացոլում համապատասխան հայեցակարգը: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ նշված է «սոցիալական պետության» մասին, մինչդեռ կարգավորումների բովանդակությունն առավել մոտ է հա-

---

<sup>5</sup> Տե՛ս **Marshall T. H.**, *Citizenship and Social Class: And other Essays*. Cambridge [Eng.: University Press, 1950], [http://www.jura.uni-bielefeld.de/lehrstuehle/davy/wustldata/1950\\_Marshall\\_Citizenship\\_and\\_Social\\_Class\\_OCR.pdf](http://www.jura.uni-bielefeld.de/lehrstuehle/davy/wustldata/1950_Marshall_Citizenship_and_Social_Class_OCR.pdf)

մընդհանուր բարեկեցության գաղափարին: Ի վերջո, պետության սոցիալական դերի և նշանակության իմաստավորման դեպքում համաշխարհային քաղաքական և իրավական միտքը ընթանում է նույն սկզբունքային ուղղությամբ, հետևաբար կարևոր է «սոցիալական պետություն» երևույթի բովանդակության լիարժեք բացահայտումը, որն անհրաժեշտ է դառնում հատկապես մեր օրերում, երբ ֆինանսական և տնտեսական ճգնաժամը, աղքատությունն ու բազում պետություններ ու ժողովուրդներ ներառող միգրացիոն գործընթացները նորանոր մարտահրավերներ են նետում սոցիալական պետությանը:

Իսկ այդ մարտահրավերները երբեմն այնքան են փոխում իրերի դրությունը, որ պետության սոցիալական դերի մասին ավանդական պատկերացումները դառնում են այլևս անիրական: Մի կողմից, գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ աճում են մարդկանց պահանջումները՝ առաջացնելով համապատասխան հակազդեցություն պետության կողմից: Որոշ պետություններում սոցիալական ոլորտի բյուջետային հատկացումները հասնում են համախառն ներքին արդյունքի 40 %-ի: Մյուս կողմից, սոցիալական ոլորտի ծառայությունների բարձր որակ ապահովելու համար անհրաժեշտ է պետության եկամուտների ավելի բարձր մակարդակ, որը սովորաբար ապահովվում է հարկերի անընդհատ ավելացման միջոցով, իսկ դա հազիվ թե քաղաքական տեսանկյունից ընդունելի և իրավական տեսանկյունից հիմնավորելի լինի ժողովրդավարական հասարակությունում: Այս դեպքում պետությունը կարող է կանգնել կա՛մ սոցիալական երաշխիքների ծավալի նվազեցման, կա՛մ ծառայությունների որակի անկման վտանգի առջև: Մեկ այլ խնդիր է բնակչության ծերացումը. սոցիալական պաշտպանության համակարգի աճող ծախսերը բացասաբար են ազդում տնտեսության վրա: Զանգվածային միգրացիան ևս ստեղծում է այնպիսի իրավիճակ, երբ պետությունը ի գործու չէ համարժեք արձագանքելու մարդկանց սոցիալական առաջընթացի ապահովման կարիքներին<sup>6</sup>:

Պատահական չէ, որ վերջին տարիներին սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն վարող եվրոպական պետություններում բավականին մեծ համակրանք են վայելում «աջ» պահպանողական և հետադիմական կողմնորոշում ունեցող ուժերը: Նոր ուժգնությամբ են հնչում քննադատություններ սոցիալական պետության հայեցակարգի հասցեին՝ որպես փախստականների և միգրանտների կարիքների բավարարմանն ուղղված մեխանիզմի: Բացի այդ, սոցիալական պետությունը հաճախ քննադատվում է որպես ձրիակերության մշակույթ ձևավորող, աշխատելու ցանկությունը, անձնական և ընտանեկան պատասխանատվությունը խաթարող, կախվածություն առաջացնող և ան-

---

<sup>6</sup> Այսպես, 2015 թ. փախստականների հոսքը Գերմանիա եղել է ավելի քան 2 միլիոն մարդ, որից 1.14 միլիոնը բնակություն է հաստատել Գերմանիայում՝ փոխելով հասարակության կառուցվածքի պատկերը և կարիքների քարտեզը (տե՛ս [www.destatis.de](http://www.destatis.de)):

հատի նախաձեռնողականությունը սպանող մեքենա, որը ծանր բեռ է դառնում հարկատու բնակչության համար: Գիտական ուսումնասիրության առարկա է դարձել *աջակցությունից կախվածության* երևույթը՝ որպես ձեռքբերովի (սովորած) անօգնականության դրսևորում, որի պայմաններում անհատը սկսում է բավարարվել պետության կողմից տրվող սոցիալական աջակցությամբ և ծառայություններով՝ համարելով, որ ավելիին ընդունակ չէ, միևնույնն է՝ իր ներդրած որևէ ջանք իր կյանքում դրական փոփոխություն չի բերի<sup>7</sup>:

Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ հետինդուստրիալ հասարակության մեջ տեղի ունեցող գլոբալացման գործընթացների պայմաններում ազգային տնտեսությունները այլևս հարաբերականորեն ինքնուրույն, փակ համակարգեր չեն: Տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը դառնում է անդրազգային, ֆինանսական շուկաները միջազգայնորեն սերտորեն փոխկապակցվում են: Ազգային սոցիալական պետությունների քաղաքականությունների շրջանակներում նշված իրողությունները հնարավոր չէ կառավարել. պահանջվում են միջազգային սոցիալական համագործակցության և առաջընթացի մոդելներ:

Ակնհայտ է դառնում, որ այս պայմաններում սոցիալական պետության բովանդակության սահմանափակումը սոցիալապես խոցելի խմբերի սոցիալական պաշտպանությամբ, պրոգրեսիվ հարկմամբ և եկամուտների վերաբաշխմամբ, գործազրկության վերացմանն ուղղված ծրագրերով, մայրության և մանկության պաշտպանությամբ, բժշկական ապահովագրությամբ որևէ կերպ արդարացված չէ: Եվ ուրեմն, ո՞րն է բարձրացված խնդիրների լուծումը: Արդյո՞ք սոցիալական պետության հայեցակարգը սպառել է իրեն: Արդյո՞ք սոցիալական պետությունն իրավունքի միջոցով արդեն իրականացրել է հնարավոր առավելագույնը իր սոցիալական կոչման համատեքստում՝ երաշխավորելով իրավահավասարությունը և արգելելով խտրականությունը, ամբողջով մարդու սոցիալական իրավունքների լայն շրջանակ և նախատեսելով սոցիալական շերտավորումը մեղմելուն ուղղված եկամուտի վերաբաշխման արդյունավետ միջոցներ:

Սոցիալական պետության կոչումը եղել և մնում է անհատ-պետություն և հասարակություն-պետություն հարթություններում սոցիալական առաջընթացի ապահովումը, սակայն այդ առաքելությունը վերախմբափոխվելով և մարդուն որպես բարձրագույն արժեք դիտելու, մարդու արժանապատվության անօտարելիության և մարդու իրավունքների առաջնայնության սահմանադրական սկզբունքների համա-

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Dixon, J. and Frolova, Y. (2011), Existential Poverty: Welfare Dependency, Learned Helplessness and Psychological Capital. *Poverty & Public Policy*, 3: 1-20. doi:10.2202/1944-2858.1158, ինչպես նաև՝ Ա. Ղարազույան, Ձեռքբերովի անօգնականությունը որպես հետխորհրդային իրականության սոցիոնշակութային այխտանիշ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 1 (19), էջ 51-62:



տեքստում: Մարդու երջանկությունը, քաղաքացիական հասարակության մեջ լիարժեք ինքնարտահայտվելու ու դրսևորվելու, զարգանալու և առաջընթաց ապրելու իրական հնարավորությունը դառնում են գլխավոր նպատակ պետության համար<sup>8</sup>: Կանխադրությունների այսպիսի փոփոխությունը ենթադրում է էականորեն նոր շեշտադրումներ սոցիալական պետության գործառույթների և գործիքակազմի ոլորտում:

#### Ա. Չանտեսելով ոչ ոքի

2015 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Փոխելով մեր աշխարհը. կայուն զարգացման օրակարգը 2030» հանձնարարականը<sup>9</sup>, որով ամրագրվեցին 17 համընդհանուր նպատակներ՝ Կայուն զարգացման նպատակները: ՄԱԿ-ի անդամ 193 պետությունները պարտավորվեցին հասնել դրանց մինչև 2030 թվականը: Նպատակների մեծ մասը վերաբերում է մարդու տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների իրականացմանը ողջ մոլորակում: Հատկանշական է, որ բոլոր նպատակների միջուկն է մեկ հիմնական սկզբունք՝ ոչ ոքի չանտեսել: Այս սկզբունքի հիմքում ընկած է «արդար իրավահավասարություն» (equity) հասկացությունը, որը ենթադրում է, որ պետության հատուկ քաղաքականության ուղղություն պետք է լինի երաշխավորումը, որ տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված միջամտությունները հասնում են բոլորին և յուրաքանչյուրին, այդ թվում՝ որևէ պատճառով սոցիալապես մեկուսացված խմբերին<sup>10</sup>: Այդպիսի պատճառ կարող է լինել բազմակի իրավագրկության հանգամանքը<sup>11</sup>, որը

<sup>8</sup> շեշտաբեր է, որ որոշ տեսաբաններ ընդգծում են այն հանգամանքը, որ սոցիալական պետության հոգածության կենտրոնում անհատի հայտնվելը պայմանավորված չէ պետության «ալտրոնիստական» նկրտումներով, պետության շահի՝ անհատի շահին ստորադասմամբ կամ պետության դերի փոփոխությամբ, այլ դրա համար հիմք է ծառայում այն կանխադրությամբ, որ պետության մեջ հավասարակշռություն, անվտանգություն, սոցիալ-քաղաքական կայունություն ու համահունչ զարգացում հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, եթե պետության սոցիալական հիմքը քաղաքացիական հասարակությունն է՝ իր ինքնաբերական, ինքնավար, ինքնակարգավորվող, զարգացող և նախաձեռնող անհատներով: Այդպիսի հասարակության գոյության համար անհրաժեշտ է պետության նպատակային միջամտությունը (տե՛ս, օրինակ, **Кочеткова Л. Н.** Теория социального государства, **фон Штейн Л.** "Философия и общество", № 3 (2008), էջ 76):

<sup>9</sup> See u Resolution A/RES/70/1 of 25 September 2015

<sup>10</sup> «**Equity**» եզրույթը երբեմն թարգմանվում է «սոցիալական արդարություն»: Իրականում այս եզրույթի բովանդակությունը միջազգային զարգացման ոլորտում իրավունքների իրականացման համար հավասար հնարավորություններն են, լայն իմաստով կյանքում հավասար մեկնարկի այնպիսի պայմանների ստեղծումը, որտեղ անհատը կարող է հավասարապես ինքնարտահայտվել՝ իհարկե ստանալով անհավասար արդյունքներ՝ մարդկանց բնածին տարբերությունների (տաղանդ, ունակություն) շնորհիվ: Այլ կերպ ասած՝ իրավունքների իրականացման արդյունքում փաստացի հավասարության բացակայության պատճառ պետք է լինեն մարդկանց այնպիսի տարբերությունները, որոնք հնարավոր չէ մեղմել նպատակային պետական քաղաքականության միջոցով: Կրթության անհասանելիության, անբավարար առողջապահության, աղքատության պատճառով իրավունքների իրականացման վերջնարդյունքը կայուն զարգացման նպատակների առումով անընդունելի է: Այստեղ առաջարկվում է «equity» եզրույթը օգտագործել որպես «արդար իրավահավասարություն»:

<sup>11</sup> «Բազմակի իրավագրկում» հասկացությունը և չափման մեթոդաբանությունը

հանգեցնում է բազմաչափ աղքատության<sup>12</sup>: Կայուն զարգացման նպատակների իրականացումը, որը պարտադիր է բոլոր նշված պետությունների համար, իրականում նախանշում է սոցիալական պետության գործունեության նոր շրջանակ, որտեղ պետության միջամտության արժեքաբանական հիմք են դառնում բոլորի և յուրաքանչյուրի իրավունքների առավել լիարժեք իրականացումը, մարդկանց երջանկությունը, իսկ մեթոդական հիմքը ոչ ոքի չանտեսելու սկզբունքն է՝ յուրաքանչյուրի համար հավասար մեկնարկ և հավասար հնարավորություններ ապահովելու պայմաններով: Նման մոտեցման դեպքում պետության միջամտության և մարդու իրավունքների ազատ իրականացման միջև թվացյալ հակադրությունը դադարում է գոյություն ունենալ, իսկ պետության այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են իրավականն ու սոցիալականը, սկսում են փոխարացնել միմյանց:

### **Բ. Ներդրում մարդկային կապիտալի մեջ**

Գիտության, տեխնիկայի, տնտեսության զարգացումը մարդկային հասարակության համար ստեղծում է համեմատաբար բարձր կենսամակարդակ ունենալու հնարավորություն: Համաշխարհային բանկի՝ վերջերս հրատարակած «Աշխարհի զարգացման զեկույց 2019»-ում մանրամասն ուսումնասիրվել են մարդկային աշխատանքի բնույթի փոփոխության միտումները: Հետաքրքիր է, որ գիտատեխնիկական բուն առաջընթացը էապես փոխել է մարդ-արտադրություն հարաբերությունների բնույթը (ռոբոտացման և ավտոմատացման շնորհիվ), սակայն չի նվազեցրել մարդու կարևորությունը աշխատանքի մեջ: Այդուհանդերձ, փոխվում է աշխատանքի բնույթը՝ պահանջելով մարդուց այլ գիտելիքներ և հմտություններ: Ուսումնասիրությունների հիման վրա զեկույցում առաջադրվում է այն դրույթը, որ մարդու գիտելիքները, հմտությունները, առողջությունը և տոկոսությունը *մարդկային կապիտալ են*, որի բարելավումը մարդուն հնարավորություն է տալիս լինելու ավելի արտադրողական, ճկուն և ստեղծարար՝ նոր աշխատաշուկայում և տնտեսության նոր կացութաձևի մեջ<sup>13</sup>: Մարդկային կապիտալի վիճակը ցույց է տալիս, թե ինչպիսին կարող են լինել արտադրողականությունը, տնտեսության վիճակը և մեկ շնչին բաժին ընկնող

մշակել է Օքսֆորդի համալսարանի սոցիալական քաղաքականության ինստիտուտը: Տե՛ս [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/464430/English\\_Index\\_of\\_Multiple\\_Deprivation\\_2015\\_-\\_Guidance.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/464430/English_Index_of_Multiple_Deprivation_2015_-_Guidance.pdf):

<sup>12</sup> Բազմաչափ աղքատությունը, ի լրումն դրամային աղքատության, ներառում է այնպիսի հիմնական պահանջմունքների բավարարման անհասանելիություն, ինչպիսիք են բնակարանային պայմանները, սնունդը, կրթությունը, հանգիստը, սոցիալական շփումները: Ըստ ՅՈՒՆԻՄԵՖ-ի 2016թ. «Երեխաների աղքատությունը Հայաստանում» հետազոտության, երեխաների 64%-ը Հայաստանում ապրում է 2 և ավելի չափումներով աղքատության մեջ: Մարզերում՝ գյուղական համայնքներում, այս ցուցանիշը հասնում է 82 %-ի: Տե՛ս [https://www.un.am/up/library/Child\\_Poverty\\_Armenia\\_N-MODA\\_Report\\_2016\\_eng.pdf](https://www.un.am/up/library/Child_Poverty_Armenia_N-MODA_Report_2016_eng.pdf):

<sup>13</sup> Տե՛ս World Development Report 2019 – The Changing Nature of Work <http://www.worldbank.org/en/publication/wdr2019>

համախառն ներքին արդյունքը: Մարդկային կապիտալի ինդեքսը մարդկային կապիտալի այն ցուցանիշն է, որն այսօր տվյալ պետությունում ծնված երեխան կարող է ունենալ 18 տարին լրանալու պահին՝ ի համեմատ երեխայի, որը ստացել է լիարժեք կրթություն և առողջապահության ծառայություններ: 2018 թ. տվյալներով՝ 157 երկրներում իրականացված այս հետազոտությունը ցույց է տալիս, որ երեխաների կեսից ավելին լրիվ գործունակության տարիքում աշխատանքի շուկա մտնելիս կլինի լավագույն դեպքում 50 %-ով ավելի պակաս արտադրողական, քան կարող էր լինել: Հայաստանի Հանրապետության համար 2018 թ. հոկտեմբերի տվյալներով Մարդկային կապիտալի ինդեքսի ցուցանիշը 0.57 է<sup>14</sup>:

Այս ամենը վկայում է այն մասին, որ սոցիալական պետության մեծ «ծախսերը», որոնք կատարվում են սոցիալական ոլորտի վրա (կրթության, առողջապահության, ընտանիքի, մայրության և մանկության սոցիալական պաշտպանության ուղղությամբ), իրականում կարող են լինել «ներդրումներ», ընդ որում՝ 18 տարվա ժամկետում գնահատված եկամտաբերությամբ ներդրումներ: Սոցիալական պետության գործառույթների մեջ սոցիալական ու տնտեսական առաջընթացները շարժվում են զուգահեռ, հետևապես սոցիալական պետության կարևորագույն գործառույթ պետք է դառնա մարդկային կապիտալի մեջ ներդրումը, այլ ոչ թե սոսկ աջակցությունը: Սոցիալական պետության նոր հայեցակարգը պահանջում է սոցիալական պաշտպանության համակարգի վերանայում, սոցիալական ապահովության համակարգերի գործառման, սոցիալական աշխատանքի և սոցիալական աջակցության տրամադրման նոր մոտեցումների ամրագրում և գործարկում՝ հիմք ընդունելով այն կանխադրույթը, որ դրանք ներդրումներ են ուղղված կյանքի և առողջության, կրթության, աշխատանքի, անձնական անձեռնմխելիության ու բռնությունից պաշտպանված լինելու և այլ հիմնարար իրավունքների լիարժեք իրականացման հնարավորության ստեղծմանը:

#### **Գ. Սոցիալական կապիտալ**

Տնտեսագետների մեծ մասը «սոցիալական կապիտալ» հասկացությունը կապում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են վստահությունը, ցանցերը, համագործակցությունը: Իրավունքի սոցիոլոգիայի և ընդհանուր սոցիոլոգիայի շրջանակներում առաջադրվում է այն տեսակետը, որ սոցիալական կապիտալը պետության, կազմակերպությունների, անհատների միջև վստահության վրա հիմն-

---

<sup>14</sup> Դա նշանակում է, որ Հայաստանի այսօրվա երեխաները լրիվ գործունակության տարիքին հասնելու պահին կունենան իրենց մարդկային կապիտալի միայն 57 %-ը, համապատասխանաբար՝ իր պոտենցիալ արժեքից գրեթե կրկնակի ցածր կլինի նաև մեկ աշխատող շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը: Տե՛ս [http://databank.worldbank.org/data/download/hci/HCI\\_2pager\\_ARM.pdf](http://databank.worldbank.org/data/download/hci/HCI_2pager_ARM.pdf)

ված ազատ համագործակցության հարաբերություններն են, որոնք խթանում և խրախուսում են համագործակցությունը՝ ի շահ բոլոր կողմերի<sup>15</sup>: Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ սոցիալական կապիտալը նպաստում է տնտեսական աճին, քանի որ անհատների միջև համագործակցությունը ոչ միայն ավելի դյուրին է դարձնում ընդհանուր նպատակի հասնելու գործընթացը, այլև նվազեցնում է դրա ծախսերը: Սոցիալական մեծ կապիտալ ունեցող հասարակություններում գորեղ են անհատներին ակտիվ համագործակցության դրդող գործոնները, այդ հասարակություններում ավելի արագ են զարգանում նորարարությունը և տեխնոլոգիաները<sup>16</sup>: Դրական սոցիալական միջավայրը պարարտ հող է ստեղծում քաղաքացիական հասարակության հնարավորությունների և ներուժի լիարժեք դրսևորման համար: Փոփոխվող իրողությունների պայմաններում քաղաքացիական հասարակությունը կարող է դառնալ սոցիալական պետության գլխավոր գործընկերը բոլորի և յուրաքանչյուրի բարեկեցությանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման գործում: Մասնավորապես, սոցիալական պաշտպանության համակարգի գործիքների շարքում կարևոր նշանակություն ունեն սոցիալական մոբիլիզացիան և համայնքում կազմակերպվող ծառայությունները, սոցիալական ապահովության ոչ ֆորմալ ձևերը, որոնց իրականացման հիմնական դերակատարները հենց քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու խմբերն են:

Այսպիսով, եթե վերը քննարկված գործոնների լույսի ներքո փորձենք նորովի իմաստավորել սոցիալական պետությունը, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ կանխադրույթները.

- ✓ պետության համար բարձրագույն արժեք է մարդը.
- ✓ պետության գլխավոր նպատակն են համընդհանուր բարիքը և սոցիալական արդարությունը՝ յուրաքանչյուր անհատի ազատ զարգացման և լիարժեք դրսևորման հնարավորությունների ստեղծման միջոցով.
- ✓ պետության համար իր միջամտության ուղղությունները որոշելիս կարևորագույն սկզբունք է ոչ ոքի չանտեսելը.
- ✓ պետությունում առկա է քաղաքական համաձայնություն այն հարցի շուրջ, որ սոցիալական ոլորտը՝ սոցիալական պաշտպանությունը, կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, պետք է դիտվի քաղաքականության առաջնայնություն ոչ թե միջինացված ցուցանիշների, այլ իրական պահանջմունքների գնահատականի հիման վրա, որի համար պետությունն ունի վիճակագրական անհրաժեշտ տվյալներ

<sup>15</sup> Տե՛ս **Juan Carlos Aguilera**, Social Capital and Economic Growth, Master's thesis, Lund University. 2016, էջ 6: <http://lup.lub.lu.se/luur/download?func=downloadFile&recordId=8618986&fileId=8618987>

<sup>16</sup> Տե՛ս **Fukuyama Francis**. (1995). Trust: The Social Virtues and the Creation of Prosperity. New York: Free Press:

հավաքելու, վերլուծելու և քաղաքական որոշումների և համապատասխանաբար՝ իրավական ակտերի ընդունման ժամանակ դրանք օգտագործելու գործուն կառուցակարգեր.

✓ պետությունն ունի ծրագրային բյուջե և երկարաժամկետ պլանավորում է իր ներդրումները մարդկային կապիտալի մեջ՝ ի դեմս հատկացումների ծավալի պահպանման և ավելացման այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են կրթությունը, մշակույթը, առողջապահությունը և սոցիալական պաշտպանությունը.

✓ պետությունը անհատ-քաղաքացիական հասարակություն-պետություն եռյակում բոլոր մակարդակներում խթանում է սոցիալական կապիտալի զարգացումը՝ վստահության, հումանիզմի, կոլեկտիվիզմի և փոխօգնության սկզբունքների հիման վրա.

✓ պետությունում առկա է սոցիալական որակյալ ծառայությունների ողջ ներկայակերտ.

✓ պետությունը վերակառուցում է սոցիալական պաշտպանության համակարգը նոր տրամաբանությամբ՝ շեշտը դնելով ոչ թե մարդկանց սոցիալական աջակցություն տրամադրելու (առաջին հերթին նպաստների միջոցով), այլ մարդկանց համար հավասար մեկնարկի և իրավունքների լիարժեք իրականացման իրական հավասար հնարավորություններ ձևավորելուն և զարգացնելուն նպաստող միջավայր ստեղծելու վրա:

Սոցիալական պետության վերաբերյալ նոր պատկերացումը ենթադրում է պետության սոցիալական կոչման և տնտեսական արդյունավետության, աճի ու զարգացման միջև երկկողմանի փոխկապվածություն և փոխապայմանավորվածություն: Եթե նախկինում ճշմարտացի էր «սոցիալական պետություն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ հզոր տնտեսություն» դրույթը, ապա այսօր նույնքան ճշմարտացի է «հզոր տնտեսություն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ սոցիալական պետություն» դրույթը: Ակնհայտ է, որ հիմնական տնտեսական ցուցանիշների շարունակական աճը կհանգեցնի սոցիալական ոլորտին ուղղվող միջոցների աճի, իսկ բարենպաստ սոցիալական կլիմայի առկայությունը իր հերթին տնտեսական ակտիվության խթանման ու ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախապայման է: Հետևաբար ժամանակակից պայմաններում առաջատար տնտեսությունների սոցիալական քաղաքականության վերջնական նպատակը բարձր տնտեսական ցուցանիշների ապահովումն է՝ նաև ի հաշիվ սոցիալական գործոնների, և սոցիալական ռիսկերից ապահովվածության բարձր մակարդակի հաստատումն է՝ ի հաշիվ արդյունավետ գործող տնտեսության<sup>17</sup>:

<sup>17</sup> Տե՛ս Վ. Գրգալյան, Սոցիալական պետություն. ՀՀ ձեռքբերումներն ու մարտահրավերները, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 1 (19), 2016, էջ 69:

ՀՀ 2015 թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում սոցիալական պետության վերաբերյալ առաջարկվող մոտեցումները արտահայտում են այն հիմնական կանխադրությունները, որոնք անհրաժեշտ են վերը քննարկված կետերը կյանքի կոչելու համար: Մասնավորապես, «հայեցակարգում սոցիալական պետության էությանն անդրադառնալը կարևորելու տեսանկյունից անհրաժեշտ է համարվել, որ այն իր ամրագրումը ստանա ոչ թե մարդու իրավունքների և ազատությունների հատվածում, այլ «Սահմանադրական կարգի հիմունքները» հատվածում, **քանզի այն սուկ մարդու սահմանադրական կարգավիճակի բաղադրիչ չէ**, այլ Սահմանադրությամբ ամրագրվող բոլոր ինստիտուտների համար **ելակետային նշանակություն ունեցող իրավական արժեք է**: Այն պետք է ուղեկցվի այնպիսի կարգավորումներով, որոնց հետևանքով հնարավոր կլինի սոցիալական պետությունն ընկալել որպես **սոցիալական արդարության սկզբունքի հիմնարար երաշխիք**: Ինչ խոսք, սոցիալական իրավունքները ենթադրում են այդ իրավունքների իրացման ու երաշխավորման տեսանկյունից պետության որոշակի պարտականություններ, սակայն այդ **պարտականությունների շրջանակով չի «ավարտվում» պետության սոցիալական էության բովանդակությունը, քանզի դրանցից գատ, պետությունն ունի սոցիալական քաղաքականության առավել ընդգրկուն նպատակներ**»<sup>18</sup> (ընդգծումները իմն են - Վ. Օ.): Հայեցակարգային այս մոտեցումը կենսագործվեց ՀՀ 2015 թ. Սահմանադրության մեջ, հատկապես ուշադրության արժանի են դրա 86 և 87 հոդվածները, որոնք համապատասխանաբար սահմանում են տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները և դրանց իրականացման պարտավորությունը: Այդ նպատակները կյանքի կոչելու առավել արդյունավետ միջոցների, պետության իրավաստեղծ գործունեության հետ դրանք կապելու կառուցակարգերի և ամենակարևորը՝ խորհրդարանական և հասարակական վերահսկողության գործիքների հետագա զարգացումը Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կտա աստիճանաբար դուրս գալու սոցիալական ոլորտների համար բյուջետային հատկացումների պարբերական նվազեցման շրջանակից և գործառելու որպես սոցիալական պետություն:

**Բանալի բառեր** – *սոցիալական պետություն, սոցիալական արդարություն, հավասար մեկնարկ, հավասար հնարավորություններ, մարդկային կապիտալ, սոցիալական կապիտալ, կայուն զարգացման նպատակներ*

<sup>18</sup> Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/ Գ. Բ. Դանիելյան, Վ. Ա. Այվազյան, Ա. Ա. Մանասյան, Եր., 2015, էջ 138:

**ВИКТОРИЯ ОГАНЯН – Современная концепция социального государства.** – Анализ реалий, которыми располагает в наши дни социальное государство, требует переосмыслить его сущность и цели в соответствии с принципами равно-го для всех старта, равных возможностей, инвестирования в человеческий капи-тал, перестройки отношений с гражданским обществом и реформирования систе-мы социальной защиты.

**Ключевые слова:** *социальное государство, социальная справедливость, равный старт, равные возможности, человеческий капитал, социальный капитал, цели устойчи-вого развития*

**VICTORIA OHANYAN – Contemporary Concept of Welfare State.** – Analysis of the challenges and conditions of functioning of welfare state nowadays reveals the great need to revisit the nature and goals of the welfare state based on the principles of leaving no one behind, chance to equal start, equal opportunities, investment in human capital, leveraging social capital and relationship with civil society, reform of the con-cept and system of social protection.

**Key words:** *welfare state, social justice, equal start, equal opportunities, human capital, social capital, sustainable development goals*

**«ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆՆԻՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Սահմանադրականության ձևավորման, հաստատման և զարգացման հիմնախնդիրները վերջին ժամանակներում առանձնակի հրատապություն և կարևորություն են ձեռք բերել ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանի և Արցախի Հանրապետություններում: Այդ մասին են վկայում ինչպես արտասահմանյան երկրներում, այնպես էլ հայկական երկու հանրապետություններում խնդրո առարկա թեմայով գիտաժողովներն ու խորհրդաժողովները<sup>1</sup>:

Որպես միջազգային հանրության կողմից դեռևս դե յուրե չճանաչված, սակայն պետության բոլոր ատրիբուտներով օժտված երկիր՝ Արցախի Հանրապետությունում սահմանադրականության հիմնախնդիրն առավել քան արդիական է և գիտական խոր հետազոտության կարիք ունի, քանի որ արդեն 12 տարի է, ինչ Արցախի Հանրապետությունում գործում է Սահմանադրությունը (2016 թ.-ից՝ նոր *Սահմանադրությունը*), և օրախնդիր է նրա նորմերի կենսագործումը պետական քաղաքականության մեջ ու հասարակական կյանքում, սակայն պարզ չէ այն հարցի պատասխանը, թե սահմանադրականությունն ինչ վիճակում է՝ ձևավորման, կայացման, թե՞ ...: Եվ քանի որ սահմանադրականության հաստատման առաջին ու կարևոր փուլը համարում ենք ընկալումը, մենք կանդրադառնանք այդ հասկացության ընկալելիության հիմնախնդրին:

Սույն հետազոտությամբ մենք խնդիր ենք դրել անդրադառնալ հետևյալ 3 կարևոր հարցադրումներին.

1. ինչպե՞ս է ընկալվում «սահմանադրականություն» հասկացությունն արցախյան իրավական իրականությունում,
2. որո՞նք են այն նախադրյալներն ու քայլերը, որոնց շնորհիվ սահմանադրականության մասին հնարավոր կլինի խոսել գործնականում,
3. ի՞նչ նշանակություն կարող է ունենալ սահմանադրականության հաստատումը երկրի ապագայի համար, մանավանդ այն դեռևս չի ճանաչել միջազգային հանրությունը:

<sup>1</sup> Տե՛ս «Հայ սահմանադրականության զարգացման արդի հիմնախնդիրները», գիտաժողով, 16-17.04.2010 թ., ք. Ստեփանակերտ, «Սահմանադրական դատարանի որոշումների իրավական դերն ու նշանակությունը երկրում սահմանադրականության ամրապնդման գործում», խորհրդաժողով, 6-8.10.2011 թ., ք. Երևան, «Նոր հազարամյակի սահմանադրականությունը», խորհրդաժողով, 31.10-01.11.2018 թ., ք. Երևան, «Սահմանադրականության արդի մարտահրավերները», գիտաժողով, 16.11.2018 թ., ք. Երևան:



Այսպես, առաջին հարցի պատասխանը գտնելու նպատակով մենք 50 պրակտիկ իրավաբանների, Արցախի պետական և «Մեսրոպ Մաշտոց» համալսարանների մագիստրանտների շրջանում անցկացրել ենք սոցիոլոգիական հարցում՝ ստանալու համար հետևյալ հարցերի պատասխանները.

1. Ծանոթ եք արդյոք «սահմանադրականություն» հասկացությանը:

2. Ըստ Ձեզ՝ ի՞նչ է սահմանադրականությունը (տալ բնորոշումը):

Հարցվողներից 19-ը կամ 38 %-ը նշել է, որ ծանոթ է կամ լսել է սահմանադրականության մասին, իսկ մնացած 62 %-ը նշել է, որ «ծանոթ չէ կամ առաջին անգամ է լսում»: Ջարմանալին այն է, որ հարցին բացասական պատասխան տվածների մեջ կան նաև պրակտիկ իրավաբաններ, որոնք իրենց գործունեության ընթացքում պետք է որ առնչված լինեին այդ հասկացությանը: Սա նշանակում է, որ ոչ բոլորն են հետաքրքրվում իրավագիտության վերջին զարգացումներով կամ ակտիվ քննարկվող իրողություններով: Սա վկայում է նաև նրանց մասնագիտական անտարբերության և ինքնակատարելագործվելու մոտիվացիայի բացակայության մասին:

Ի դեպ, մագիստրատուրայի գրեթե բոլոր ուսանողները նշել են, որ ուսումնառության ժամանակ երբևէ չեն քննարկվել սահմանադրականությանը վերաբերող հարցեր, մինչդեռ շատ կցանկանային, որ դասախոսները իրենց պարբերաբար հաղորդակից դարձնեին իրավագիտության ոլորտում առկա նորամուծություններին ու հիմնախնդիրներին:

Առաջին հարցին դրական պատասխան տվածները ներկայացրել են իրենց տեսակետները կամ պատկերացումները սահմանադրականության վերաբերյալ: Ստորև ներկայացվում են դրանցից մի քանիսը, որոնք առավել հետաքրքիր են և ուշադրության արժանի:

1. Սահմանադրականությունը Սահմանադրության գործողության հետ կապված երևույթ, ընթացակարգ է:

2. Սահմանադրականությունը կրում է էվոլյուցիոն բնույթ, բովանդակում է տարրեր, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակության զարգացմանը:

3. Սահմանադրականությունն նշանակում է Սահմանադրությամբ ամրագրված արժեքներով փաստացի ապրելու, դրանք կիրառելու ապրելակերպ, կենսաձև:

4. Սահմանադրականությունն արտահայտվում է Սահմանադրությամբ ամրագրված նորմերի կիրառմամբ:

5. Սահմանադրականությունը տվյալ պետության Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու արժեքների ընկալումն է հասարակության կողմից, այդ արժեքների կիրառությունը կյանքում, պետական իշխանության մարմինների համապատասխան կամքի դրսևորումը ամրագրված նորմ-արժեքների կիրառման և ապահովման գործում:

Չնայած տրված պատասխանների բովանդակային ոչ լիարժեքությանը, այնուամենայնիվ դրանց վերլուծությունից հանգում ենք այն եզ-

րակացության, որ հարցվողներն ընդհանուր առմամբ համամիտ են մեր տեսակետին, որը շարադրելուց առաջ փորձենք ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա հիմնական պատկերացումները:

Սահմանադրականության հիմնախնդրին անդրադարձել են ինչպես արևմտյան մասնագետներ Գ. Ռասսելը, Ա. Շայոն, ռուս իրավագետներ Վ. Կաբիշևը, Ի. Կրավեցը, Վ. Կրուսսը, Օ. Կուտաֆինը, Տ. Պրյախինան, Ի.Ստեպանովը և ուրիշներ, այնպես էլ հայ սահմանադրագետներ Գ. Հարությունյանը, Ա. Հարությունյանը, տնտեսագետներ Հ. Սարգսյանը, Ռ. Գևորգյանը և այլք:

«Սահմանադրականություն» հասկացության համար իրավագիտությունն առաջին հերթին պարտական է ամերիկյան իրավաքաղաքական մտքին, սակայն այն անուշադրության չի մատնվել նաև Եվրոպայում, թեպետ սկզբնական շրջանում հատուկ չի կարևորվել: Բանն այն է, որ «ինչպես եվրոպական հեղափոխականների, այնպես էլ ժողովրդի համար ժողովրդավարությունն ավելի կարևոր էր թվում, քան սահմանադրականությունը»<sup>2</sup>: Ավելին, որոշ հեղինակներ կարծում են, որ թեև ժողովրդավարությունն ու սահմանադրականությունն ունեն հիմնարար նմանություններ, այնուհանդերձ այդ երկու տեսությունները խիստ տարբերվում են<sup>3</sup>:

Հունգարացի պրոֆեսոր Անդրաշ Շայոյի պնդմամբ՝ սահմանադրականությունը պետական իշխանության սահմանափակումն է հանուն հասարակական անդորրի<sup>4</sup>: Իսկ Գ. Ռասսելի կարծիքով՝ սահմանադրականությունը կամ իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է պետության ղեկավարների, պետական մարմինների իշխանական լիազորությունների սահմանափակում և դրանց իրացում սահմանված ընթացակարգերի օգտագործմամբ<sup>5</sup>:

Վ. Կաբիշևի և Տ. Պրյախինայի տեսակետի համաձայն՝ «սահմանադրականության հիմնական արժեքները ձևավորվում են որպես այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են մարդու իրավունքների առաջնահերթությունը, ժողովրդաիշխանությունը, իշխանությունների բաժանումը, ֆեդերալիզմը, իրավունքի գերակայությունը»<sup>6</sup>: Ռուս մեկ այլ մասնագետի կարծիքով՝ «մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու

<sup>2</sup> **Wiktor Osiatynski**. Constitutionalism, Democracy, Constitutional Culture // Miroslaw Wyrzykowski. Constitutional Cultures, Warsaw: Institute of Public Affairs, 2000, p. 151.

<sup>3</sup> Տե՛ս **Walter F. Murphy**. Constitutions, Constitutionalism, and Democracy // Constitutionalism and democracy: transitions in the contemporary world, edited by Douglas Greenberg, Stanley N. Katz, Melanie Beth Oliviero, and Steven C. Wheatley, New York, Oxford University Press, 1993, էջ 5:

<sup>4</sup> Տե՛ս **Шайо А.** Самоограничение власти (краткий курс конституционализма). М., 1999, էջ 20:

<sup>5</sup> Տե՛ս **Рассел Г.** Конституционализм: опыт Америки и других стран // <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm>

<sup>6</sup> **Кабышев В., Пряхина Т.** Теоретические проблемы российского конституционализма // "Вестник Саратовской государственной академии права", 1995, № 2, с. 33-39.

ազատությունները միայն այն դեպքում կդառնան ռուսական սահմանադրականության կարևոր բաղադրիչ ու տիրապետող չափանիշ, երբ դրանք ոչ միայն սահմանադրորեն ճանաչվեն և հռչակվեն, այլև հռչակված սահմանադրական արժեքներին և սկզբունքներին համապատասխան իրապես կիրառվեն և պաշտպանվեն պետության կողմից»<sup>7</sup>:

Հայ սահմանադրագետ Ա. Հարությունյանի կարծիքով՝ սահմանադրականության միասնական համակարգ ասելով հասկանում ենք պետության և քաղաքացիական հասարակության ենթարկվելը իրավական նորմերին և իշխանությունների տարանջատման սկզբունքը: Ընդ որում, սահմանադրականությունը՝ որպես կամայականության սահմանափակման պահանջ, կարող է իրականացվել միայն զսպումների և հակակշիռների պայմաններում, այսինքն՝ երբ իշխանության թևերը հավասարակշռում են մեկը մյուսին, և ոչ թե գերակշռում է մեկը կամ մյուսը<sup>8</sup>:

Պրոֆեսոր Վ. Չիրկինը բավականին հետաքրքիր մոտեցում է դրսևորում 21-րդ դարի սահմանադրականության նկատմամբ՝ այն ներկայացնելով որպես հասարակական-քաղաքական շարժում, տեսություն, դոկտրին և պրակտիկա<sup>9</sup>: Կարծում ենք, որ սահմանադրականության վերը նշված տեսական ըմբռնումները ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասնական ձևով գոյության իրավունք ունեն, սակայն մենք ավելի կարևորում ենք պրակտիկ իրողությունը:

Այսպիսով, ներկայացված հեղինակների տեսակետներից յուրաքանչյուրը բովանդակում է շատ կարևոր մտքեր ու մոտեցումներ, որոնք ընդունելի են մեզ համար, սակայն կարծում ենք, որ առավել ընդունելի է պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի առաջարկած այն բնորոշումը, որ «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունն է, դրանց որպես ապրող իրողության գոյությունը հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում: Ընդ որում, ըստ հեղինակի՝ խնդիրը ոչ թե Սահմանադրությունը պարզապես կիրառելն է, այլ այն որպես սոցիալական համակարգ ձևավորելը, որում Սահմանադրությունն իրացնում է այդ համակարգի յուրաքանչյուր բջիջ՝ որպես դրա գոյության կենսակերպ<sup>10</sup>:

Հետաքրքրական է, որ սահմանադրականությունը վերջին ժամա-

<sup>7</sup> Плотникова И. Признание, соблюдение и защита прав и свобод человека – основополагающий принцип российского конституционализма // "Вестник Саратовской государственной юридической академии", 2017, № 4 (117), с. 51.

<sup>8</sup> Տե՛ս Արությունյան Ա. Грамматика свободы (проблемы постсоветского реализма). Ер.: «АРТ», 2007, էջ 78-99:

<sup>9</sup> Տե՛ս Չիրկին В. Базовые ценности конституционализма в XXI в. // "Современный конституционализм: Теория, доктрина и практика": Сб. науч. тр., М., 2013, էջ 16:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, Հայ սահմանադրականության զարգացման հիմնախնդիրները, Ձեկուցում Մտեփանակերտում հրավիրված միջազգային խորհրդաժողովում, 17. 04. 2010 թ. /URL: [http://concourt.am/armenian/structure/president/articles/karabakh\\_april\\_2010.pdf/](http://concourt.am/armenian/structure/president/articles/karabakh_april_2010.pdf/), Գիմելու ամսաթիվը՝ 29.11.2018 թ.:

նակներում սկսել են ուսումնասիրել նաև տնտեսագիտության դիրքերից, որտեղ առաջարկվում է սահմանադրականության չափման նոր մեթոդաբանություն<sup>11</sup>: Ընդ որում, որպես սահմանադրականության մակարդակի բնութագրիչներ են առաջարկվում ժողովրդավարության և ինստիտուցիոնալ զարգացման գործոնները, մարդկային զարգացման ցուցանիշը, քաղաքական կայունությունը, աղքատության մակարդակը և Ջինի գործակիցը<sup>12</sup>:

Անդրադառնալով երկրորդ հարցին՝ նշենք, որ համամիտ ենք այն հեղինակների մոտեցմանը, որ սահմանադրականության հաստատման համար Սահմանադրությունը կարևոր, բայց ոչ պարտադիր ու միակ պայմանն է:

Սահմանադրության նորմերի իրագործմամբ երկրում սահմանադրականության հաստատման առաջին քայլերից է Արցախի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրինականության սկզբունքը, ըստ որի՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Եթե պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար առկա է սահմանադրական իրավակարգավորում, ապա նույնը չենք կարող ասել քաղաքացիների վերաբերյալ, քանի որ ԼՂՀ 2006 թ. Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ **«Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները»** դրույթը բացակայում է նոր Սահմանադրության մեջ:

Հաջորդ կարևոր քայլը, ինչպես արդեն նշեցինք, այն է, որ «սահմանադրականություն» հասկացությունը պետք է գիտակցվի և ճիշտ ընկալվի հասարակության կողմից, մտնի մարդկանց կենցաղ և լինի ապրելակերպ: Այս նպատակով անհրաժեշտ ենք համարում դրա համակողմանի քննարկումն ու հանրայնացումն ինչպես իրավաբանների և քաղաքագետների, այնպես էլ տնտեսագետների կողմից:

<sup>11</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան, Հ. Մարգարյան, Ռ. Գևորգյան**, Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը, Եր., 2018, էջ 208, **Գ. Հարությունյան, Հ. Մարգարյան, Ռ. Գևորգյան**, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Եր., 2017, էջ 139, **Կ. Խաչատրյան**, Սահմանադրականության մակարդակը որպես պետության կայացածության գրավական // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2017, № 3 (24), էջ 19-28, **Ժ. Մխիթարյան**, Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները, տնտես. թեկն. գիտ. աստիճանի հայցման ատենախոս. սեղմագիր, Եր., 2016:

<sup>12</sup> Տե՛ս «Ի՞նչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները», գիտագործնական խորհրդածողով, Եր., 2018, էջ 12:

Սահմանադրականության ձևավորման և հաստատման համար խիստ կարևոր է բարձրացնել հիմնարար սահմանադրական արժեքների և սկզբունքների վերաբերյալ հանրության իրազեկվածության աստիճանը: Որքան էլ որ առաջին հայացքից պարզունակ կամ տարօրինակ թվա, բայց եթե իրավաբանները գրեթե ծանոթ չեն այդ հասկացության էությանն ու նշանակությանը, ապա ինչպես կարող ենք երկրում հաստատել սահմանադրականություն. ենթագիտակցորեն, ինքնաբերաբար կամ անտեղյակությամբ սահմանադրականություն հնարավոր չէ հաստատել:

Այս համատեքստում կարևոր քայլերից մեկը պետք է լինի բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացումը: Ասենք, որ 2016 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախի Հանրապետության 35 դպրոցների 475 աշակերտների շրջանում հարցաթերթերի միջոցով անցկացվել է սոցիոլոգիական հարցում՝ նպատակ ունենալով բացահայտել ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակը, առկա խնդիրների վերհանման միջոցով նախանշել այն բարձրացնելու հիմնական ուղիները: Նմանատիպ սոցիոլոգիական հարցումներ ենք նաև 239 երիտասարդների շրջանում: Արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ աշակերտների, թե՛ երիտասարդների շրջանում իրավագիտակցության մակարդակը թեև միջինից փոքր-ինչ բարձր է, սակայն առկա է իրավական որոշակի ժխտողականություն, որն արտահայտվում է, օրինակ, ճանապարհային երթևեկության կանոնները չպահպանելու կամ դրանք դիտավորյալ խախտելու ձևերով: Ինքնին հասկանալի է, որ նման ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու պարագայում դժվար է խոսել սահմանադրականության հաստատման մասին:

Այս ամենի հաշվառմամբ մենք առաջարկում ենք որոշակի մեխանիզմներ, ինչպես նաև մշակվել է «**Արցախի Հանրապետության քաղաքացիների իրավական իրազեկվածության, իրավական գրագիտության և իրավագիտակցության մակարդակի բարձրացման**» հայեցակարգ<sup>13</sup>, որը կառավարությունում ընդունվելու և հետևողականորեն կիրառվելու դեպքում որոշակի նպաստ կբերի սահմանադրականության հաստատմանը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փորձը՝ կարևոր ենք համարում Արցախի Հանրապետությունում մշակել և ընդունել «Իրավական անվտանգության հայեցակարգ», որի իրականացումն ապահովող միջոցառումների հետևողական իրագործման ճանապարհով կլուծվեն այն հիմնախնդիրները, որոնք խանգարում են սահմանադրականության հաստատմանը: Մինչդեռ վերջինս ցանկացած երկրի, առավել ևս միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետությո-

<sup>13</sup> Տե՛ս Ավ. Հարությունյան, Ս. Պետիկյան, Լ. Քարխուդարյան, Իրավագիտակցության հիմնախնդիրն Արցախի Հանրապետության հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, Ստեփանակերտ, 2018, էջ 111-127:

յան համար ունի կենսական նշանակություն, քանզի, ինչպես իրավա-  
ցիորեն նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը, յուրաքանչյուր «երկրի  
իրավական անվտանգության թիվ մեկ ներքին սպառնալիքը սահմա-  
նադրականության դեֆիցիտն է»<sup>14</sup>:

Թեև Արցախի Հանրապետության երկու սահմանադրություններն  
էլ ընդունվել են հանրաքվեների միջոցով, ժողովրդական համաձայ-  
նությամբ, սակայն դրա նորմերի հետևողական ու հստակ իրագործ-  
ման համար, ցավոք, չկա մասնագիտացված կառույց, որը կարող է  
Սահմանադրության պահպանման շրջանակներում երկրում իրակա-  
նացնել սահմանադրականության մշտադիտարկում: Նման դեր կարող  
է ստանձնել նախագահի աշխատակազմը կամ նախագահին առընթեր  
կառույցը, քանի որ Արցախի Հանրապետության Սահմանադրության  
94 հոդվածի 1-ին մասով սահմանված է. **«Հանրապետության նախա-  
գահը Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության,  
տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն  
է»: Ի դեպ՝ գրեթե նույնն ենք կարդում նաև պաշտոնի ստանձման ժա-  
մանակ նախագահի տված երդման տեքստում՝ «անվերապահորեն կա-  
տարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքա-  
ցու իրավունքներն ու ազատությունները»:** Սա ըստ էության նաև հա-  
վաստումն է այն բանի, որ, լինելով պետության գլուխը և գործադիր իշ-  
խանության ղեկավարը, նախագահն իր տված երդմամբ հաստատում է  
անվերապահորեն կատարել երկրի Հիմնական օրենքի պահանջները  
(կառավարման նախագահական մոդելի պայմաններում, երբ նախա-  
գահն առաջին դեմքն է, նրա դրսևորած վարքագիծն օրինակելի կարող  
է լինել ինչպես մյուս պետական մարմինների, այնպես էլ քաղաքացինե-  
րի համար):

Արցախի Հանրապետության Սահմանադրության 140 հոդվածի 2-  
րդ մասի համաձայն՝ «Գերագույն դատարանը իրականացնում է սահ-  
մանադրական արդարադատություն՝ ապահովելով Սահմանադրությա-  
ն գերակայությունը»: Բացի այդ, 114-րդ հոդվածում նախատեսված է  
այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են դիմել Գերագույն դա-  
տարան, և այն հարցերը, որոնք Գերագույն դատարանը կարող է  
քննության առնել համապատասխան դիմումի առկայության դեպքում:  
Այս առումով մեծ է նաև Գերագույն դատարանի դերակատարությունը,  
քանի որ սահմանադրական արդարադատության շրջանակներում  
սահմանադրական արժեքների իրացմամբ ձևավորվում է դատական  
սահմանադրականություն, որը Ն. Բոնդարի բնորոշմամբ՝ «սահմա-  
նադրական-դատական պրակտիկայում, հասարակության և պետությա-  
ն մեջ սահմանադրական արժեքների նյութականացումն է, Սահմա-

<sup>14</sup> Գ. Հարությունյան, Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը  
որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական,  
<http://www.concourt.am/>:

նադրության գերակայության պահանջների, նրա անմիջական գործողության իրական մարմնավորումը կյանքում»<sup>15</sup>:

Հաշվի առնելով այն փաստը, որ Սահմանադրությամբ սահմանված սուբյեկտներն իրավական ակտերի սահմանադրականության հարցերով գրեթե չեն դիմում Գերագույն դատարան, և վերջինս համապատասխան գործեր չի քննում, կարելի է եզրակացնել, որ Արցախի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության գործունակությունը ցածր մակարդակի վրա է, և հնարավոր չէ գնահատել դրա արդյունավետությունը սահմանադրականության հաստատման գործում:

Անդրադառնալով երրորդ հարցին՝ հարկ է նշել, որ Արցախի Հանրապետությունում սահմանադրականության հաստատումը խոչընդոտող հանգամանքները կարելի է բաժանել 2 խմբի՝ ներքին և արտաքին:

Եթե ներքին խոչընդոտներ են իրավագիտակցության և Հիմնական օրենքի իրացման ոչ բարձր աստիճանը, ապա որպես արտաքին հանգամանքներ հանդես են գալիս երկրի չճանաչվածությամբ պայմանավորված մի շարք խնդիրներ:

- Ճիշտ է, Արցախի Հանրապետությունը միջազգային պարտավորություններ չունի, սակայն միակողմանիորեն միացել է մի շարք միջազգային կոնվենցիաների և հռչակագրերի: Կարծում ենք, որ միջազգային պայմանագրերի լիիրավ կողմ չլինելը խոչընդոտում է պաշտոնապես կապեր հաստատելու, ավելի սերտ շփումներ ունենալու զարգացող և զարգացած երկրների հետ, ինչպես նաև այդ երկրների առաջավոր փորձը ներդնելու սեփական երկրում:

- Հաջորդը միջազգային հիմնադրամներից տրամադրվող արտոնյալ վարկերից և դրամաշնորհներից օգտվելու հնարավորության բացակայությունն է, մինչդեռ հակառակ պարագայում այն կարող է նպաստել ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ տնտեսության զարգացմանը: Մենք, իհարկե, նկատի չունենք այն դեպքերը, երբ տրամադրվող գումարների դիմաց կազմաքանդիչ գործունեություն է իրականացվում: Արցախի Հանրապետության թիվ 1 խնդիրը եղել և մնում է անվտանգության ապահովումը, որը շահարկման կամ սակարկման ենթակա չէ:

- Խնդիրներից մեկն էլ այն է, որ Արցախի Հանրապետության քաղաքացին չի կարող դիմել միջազգային արդարադատական մարմիններ, որպեսզի իրացնի իր սահմանադրական իրավունքները և այլն:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալը. ցանկացած գործընթացի, տվյալ պարագայում՝ Արցախի Հանրապետությունում սահմանադրականության հաստատման առաջին քայլը դրա ընկալումն է, այն էլ՝ ճիշտ ընկալումը, որին պետք է հա-

<sup>15</sup> **Бондарь Н.** Российский судебный конституционализм: введение в методологию исследования. М., 2012. Серия «Библиотека судебного конституционализма». Вып. 1, с. 74.

ջորդեն Սահմանադրությամբ ամրագրված արժեքներն ու սկզբունքները իրացնելու կամքն ու քաղաքականությունը: Այստեղ տեղին ենք համարում ներկայացնել սահմանադրական արժեքանության վերաբերյալ մեր մշակած սահմանումը, որն անմիջականորեն կապ ունի սահմանադրականության հետ: Այսպես, «**սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (կամ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով դրանք իրավակիրառական պրակտիկայում իրացնելու, մարդկանց կենսակերպի անքակտելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականությունն հաստատելու ուղիները: Առավել լայն ընկալմամբ՝ սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է սահմանադրականության մասին**»<sup>16</sup>:

Սահմանադրականության հաստատման գրավականն են իրացման նախադրյալներ ունեցող կամ իրացված սահմանադրական այն արժեքները, որոնց մեջ առաջին տեղում մարդն է որպես բարձրագույն արժեք և նրա արժանապատվությունը: Անշուշտ, պետությունն այդ արժեքի պահպանման գործում մեծ պատասխանատվություն է կրում, սակայն առաջին հերթին մարդը ինքը պետք է արժևորի իրեն, գիտակցի իր բարձրագույն արժեք լինելը և սեփական իրավաչափ վարքագծով պետությանը և մյուս քաղաքացիներին ստիպի հարգել իր արժեքը:

Այն դեպքում, երբ հասարակությունը Սահմանադրությունն ընկալում է որպես արժեհամակարգ, առանց որի կենսագործման հնարավոր չէ ապահովել երկրի կայուն զարգացումը, քաղաքացիների բարեկեցիկ ու երջանիկ կյանքը, սահմանադրականության հաստատումը երկրում դառնում է ավելի գիտակցված, պահանջված ու հեշտ իրացվելի: Իսկ այն պարագայում, երբ Սահմանադրությունը կամ նրա առանձին դրույթներ հասարակությունն ընկալում է որպես հոչակագրային բնույթ ունեցող, և իրականում էլ դրանք այդպիսին են կամ գրեթե այդպիսին են, ապա սահմանադրականության հաստատման առումով կարող ենք ունենալ լրջագույն խնդիրներ: Այդպիսի իրավիճակ կարող է ի հայտ գալ նաև այն դեպքում, երբ սահմանադրական արժեքները կտրված են իրականությունից, դրանց իրացման համար պատասխանատու անձանց մեջ բացակայում են Սահմանադրությամբ ապրելու կամքն ու գիտակցությունը, ինչպես նաև մեծ է Սահմանադրությամբ հոչակված արժեքների և իրականության միջև ընկած տարածությունը:

Մեր խորին համոզմամբ, եթե Սահմանադրությունը կամ նրա առանձին դրույթներ հնարավոր է ներմուծել այլ երկրներից, ապա սահմանադրականությունը երբեք ներմուծման կամ արտահանման ենթա-

---

<sup>16</sup> Ավ. Հարությունյան, Լեոնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները, Եր., 2016, էջ 32:



կա չէ, քանի որ այս դեպքում գործ ունենք Սահմանադրության նորմերի իրացման գործընթացի հետ, որը յուրաքանչյուր երկրում տարբեր կերպ է դրսևորվում՝ կախված երկրի զարգացման աստիճանից, սահմանադրական մշակույթից, ավանդույթներից, սովորույթներից և այլն:

Արցախի Հանրապետության գոյության առաջին իսկ օրվանից երկիրը հռչակվել է ժողովրդավարական ու իրավական, և զգալի աշխատանք է կատարվել ինչպես ներքին պահանջմունքները բավարարելու, այնպես էլ միջազգային հանրության շրջանում որպես ժողովրդավարական ու իրավական պետություն ներկայանալու համար: Կարծում ենք, որ երկրում սահմանադրականության հաստատումը լրացուցիչ խթան կդառնա ինչպես երկրի հեղինակության բարձրացման, այնպես էլ ապագայում միջազգային ճանաչման գործում:

**Բանալի բառեր** - *Արցախի Հանրապետություն, Սահմանադրություն, սահմանադրական արժեք, սահմանադրական արժեքանություն*

**АВЕТИК АРУТЮНЯН – Проблема восприятия понятия «конституционализм» в Республике Арцах.** – В статье рассмотрено, как воспринимается конституционализм в Арцахе – государстве, пока ещё не признанном де-юре международным сообществом, однако обладающим всеми государственными атрибутами. Делается вывод, что установление конституционализма станет дополнительным стимулом как для повышения репутации новообразованной республики, так и для её грядущего международного признания.

**Ключевые слова:** *Республика Арцах, Конституция, конституционализм, конституционная аксиология*

**AVETIK HARUTYUNYAN – The Problem of Perception of the Concept «Constitutionalism» in the Republic of Artsakh.** – The article presents the problem of the perception of constitutionalism in the Republic of Artsakh, which has not been de jure recognized by the international community yet, but has all the attributes of the state. In the end, it is substantiated that the establishment of constitutionalism in the country will be an additional incentive both to enhance the country's reputation and, in the future, for international recognition.

**Key words:** *Republic of Artsakh, Constitution, constitutional axiology*

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

1. **ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ախիտենտ  
**КАРЕН АМИРЯН** – кандидат юридических наук, ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ  
**KAREN AMIRYAN** – PhD, Assistant, Chair of Theory and History of State and Law, YSU  
Էլ. փոստ՝ amiryankaren@ysu.am
2. **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ  
**ГАГИК АРУТЮНЯН** – доктор юридических наук, профессор, председатель Высшего судебного совета РА  
**GAGIK HARUTYUNYAN** – Sc. D. in Legal Sciences, Professor, Chairman of RA Supreme Judicial Council  
Էլ. փոստ՝ ggharut@yahoo.com
3. **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ  
**АРТУР ВАГАРШЯН** – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ  
**ARTHUR VAGHARSHYAN** – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU  
Էլ. փոստ՝ avagharshyan@ysu.am
4. **ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ  
**ГЕВОРГ ДАНИЕЛЯН** – доктор юридических наук, профессор, член Высшего судебного совета РА  
**GEVORG DANIELYAN** – Sc. D. in Legal Sciences, Professor, member of RA Supreme Judicial Council  
Էլ. փոստ՝ gdanielyan@ysu.am
5. **ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ  
**ВАРДАН АЙВАЗЯН** – кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой конституционного права ЕГУ  
**VARDAN AYVAZYAN** – PhD, Associate Professor, Head of the Chair of Constitutional Law, YSU  
Էլ. փոստ՝ vayvazyan@ysu.am
6. **ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, Արդարադատության ակադեմիայի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր,  
**АНАИТ МАНАСЯН** – кандидат юридических наук, доцент кафедры конституционного права ЕГУ, проректор Академии юстиции по научной работе  
**ANAHIT MANASYAN** – PhD, Associate Professor, Chair of Constitutional Law, YSU, Vice-Rector of the Academy of Justice for Scientific Affairs  
Էլ. փոստ՝ anahit.manasyan@ysu.am

7. **ՏԱՐՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ  
**ТАРОН СИМОНЯН** – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ  
**TARON SIMONYAN** – PhD, Associate Professor, Chair of Theory and History of State and Law, YSU  
 Էլ. փոստ՝ [taron.simonyan@ysu.am](mailto:taron.simonyan@ysu.am)
8. **ՎԻԿՏՈՐՅԱ ՕՀԱՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ  
**ВИКТОРИЯ ОГАНЯН** – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ  
**VICTORIA OHANYAN** – PhD, Associate Professor, Chair of Theory and History of State and Law, YSU  
 Էլ. փոստ՝ [viktoria.ohanyan@ysu.am](mailto:viktoria.ohanyan@ysu.am)
9. **ԱՎԵՏԻԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, Արցախի պետական համալսարանի դոցենտ, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ  
**АВЕТИК АРУТЮНЯН** – кандидат юридических наук, доцент Арцахского госуниверситета, начальник отдела по обеспечению работ Совета безопасности аппарата президента Республики Арцах  
**AVETIK HARUTYUNYAN** – PhD, Associate Professor of Artsakh State University, Head of the Department Ensuring Security Council Activities at the Administration of President of the Republic of Artsakh  
 Էլ. փոստ՝ [avetiq.hh@aegmm.org](mailto:avetiq.hh@aegmm.org)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

Համարը նվիրվում է հայազգի ականավոր իրավագետ, ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս  
Վլադիկ Ներսեսյանցի ծննդյան 80-ամյակին  
Номер посвящен 80-летию со дня рождения выдающегося ученого-правоведа  
академика РАН Владика Нерсесянца  
Special issue on RAS academician, prominent armenian legal scientist Vladik  
Nersesianz's 80th birth anniversary

- Չարեն Ասիրյան* – Վլադիկ Ներսեսյանցի (1938-2005) կյանքն ու գիտական գործունեությունը ..... 3  
*Карен Амирян* – Жизнь и научная деятельность Владика Нерсесянца (1938-2005)  
*Karen Amiryun* – Vladik Nersesiantz's Life and Scientific Activity (1938-2005)
- Գագիկ Հարությունյան* – Սահմանադրականության արդի մարտահրավերները..... 7  
*Гагик Арутюнян* – Современные вызовы конституционализма  
*Gagik Harutyunyan* – Contemporary Challenges of Constitutionalism
- Արթուր Վաղարշյան* – Ազատական իրավաբանական ուսմունքն իրավունքի փիլիսոփայության պատմության համայնապատկերում..... 14  
*Артур Вагаршян* – Либертарно-юридическая теория в обзоре истории философии права  
*Arthur Vagharshyan* – *Libertarian Legal Theory in the Stream of the History of the Philosophy of Law*
- Գևորգ Դանիելյան* – Վլադիկ Ներսեսյանցի իրավափիլիսոփայական ժառանգությունը և իրավունքի զարգացման արդի հիմնախնդիրները .... 23  
*Геворг Даниелян* – Философско-правовое наследие Владика Нерсесянца и актуальные проблемы развития права  
*Gevorg Danielyan* – Vladik Nersesiantz's Legal-philosophical Heritage and Actual Issues of the Development of Law
- Վարդան Այվազյան* – Սահմանադրականության համակարգային հակամարտությունները և դրանց լուծման հնարավոր ուղիները ..... 41  
*Вардан Айвазян* – Системные конфликты конституционализма и возможные пути их решения  
*Vardan Aivazyan* – Systemic Conflicts of the Constitutionalism and Possible Solutions
- Անահիտ Մանասյան* – Սահմանադրության անմիջական գործողությունը արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում .... 48  
*Анаит Манасян* – Непосредственное действие Конституции в контексте современной конституционно-правовой мысли  
*Anahit Manasyan* – Direct Effect of the Constitution in the Context of the Modern Constitutional-Legal Thought

<i>Տարոն Միմոնյան</i> – Ցիվիլիզատական հասարակարգը հայ ազգի քաղաքակրթական հասունացման համատեքստում .....	55
<i>Taron Simonyan</i> – Цивилистический общественный порядок в контексте цивилизационного развития армянского народа	
<i>Taron Simonyan</i> – Civilistic Public Order in the Context of Armenian Nation Maturement	
<i>Վիկտորյա Օհանյան</i> – Մոդիալական պետության արդի հայեցակարգը .....	60
<i>Виктория Оганян</i> – Современная концепция социального государства	
<i>Victoria Ohanyan</i> – Contemporary Concept of Welfare State	
<i>Ավետիք Հարությունյան</i> – «Սահմանադրականություն» հասկացության ընկալման հիմնախնդիրն Արցախի Հանրապետությունում.....	72
<i>Аветик Арутюнян</i> – Проблема восприятия понятия «конституционализм» в Республике Арцах	
<i>Avetik Harutyunyan</i> – The Problem of Perception of the Concept «Constitutionalism» in the Republic of Artsakh	
Տեղեկություններ հեղինակների մասին .....	82
Сведения об авторах	
Information about the Authors	

«Բանբեր Երևանի համալսարանի. Դրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Դրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107  
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107  
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am  
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գ. Գրիգորյան  
Г. Григорян  
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝  
Компьютерная верстка  
Computer designer

Մ. Աբգարյան  
М. Абгарян  
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 28. 12. 2018:  
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրական 5 մամուլ: